ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՃԿԱԼՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ՎԱՀԱՆԻ

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ)

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ը.00.01 – «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀՈՎՍԵՓ ԻՎԱՆԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Տնտեսագիտական մտքի զարգացման ներկա փուլում հարկաբյուջետային քաղաքականության հիմնախնդիրները դարձել են տնտեսագիտական ուսումնասիրությունների կենտրոնական և առանցքային հիմնահարցերից մեկը: Տնտեսագիտական գրականության ներկա վերլուծությունների մեջ առաջնային տեղ է հատկացվում հարկաբյուջետային քաղաքականությանը՝ պայմանավորված շուկայական տնտեսության զարգացման ներկա մարտահրավերներով և գործարար պարբերաշրջանների կարգավորման ժամանակ պետության հարկաբյուջետային քաղաքականության դերի մեծացման փաստով:

Անհրաժեշտ է նաև նշել, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները և հարկաբյուջետային համակարգի վատթարացումը ցույց տվեցին, որ համաշխարհային տնտեսության զարգացման ներկա ժամանակաշրջանում տնտեսության կարգավորման հարկաբյուջետային լծակներն առավել այժմեական են քան երբևէ: 2009 թվականից հետո տնտեսական ճգնաժամն իր բացասական հետևանքները թողեց նաև ՀՀ տնտեսությունում և հարկաբյուջետային միջավայրում: Արդյունքում մակրոտնտեսական կայունության վերականգնումը և կայուն տնտեսական աճի ապահովումը վերջին տարիներին դարձել են ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության հիմնական նպատակները: Ուսիտ, արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության նախագծումն ու իրականացումը կարևոր նախապայմաններ են հանդիսանում վերոնշյալ նպատակների իրականացման համար:

Տնտեսագիտական հետազոտությունների ներկա ժամանակաշրջանում տեսական վերլուծաբանների մոտ մեծացել է հարկաբյուջետային քաղաքականության հիմնախնդիրների վերաբերյալ ուսումնասիրությունների ուղղությամբ հետքաքրքրությունը՝ պայմանավորված տնտեսական նոր կոնսենսուսում այս քաղաքականության ունեցած նոր դերակատարման հետ, ինչն անհրաժեշտություն է առաջացնում վերանայելու ֆիսկալ գործիքների օգտագործման արդյունավետությունը տնտեսական ճգնաժամերի ժամանակ, ինչպես նաև բացահայտելու հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման նոր մեխանիզմների

անհրաժեշտությունը և դրանց կիրառման հիմնական մեխանիզմները:

Այս հիմնահարցերն առավել արդիական են նաև Հայաստանի համար, քանի որ ներկայումս մեր երկիրը գտնվում է հարկաբյուջետային համակարգի բարեփոխումների կարևոր և վճռորոշ փուլում, երբ ֆիսկալ քաղաքականության մեխանիզմները, հարկային օրենսդրության բարեփոխումները, ամբողջական ծրագրային բյուջետավորման համակարգի առկայությունը, պետական պարտքի կառավարման կայունությունն ու հուսալիությունն անհրաժեշտ հիմնական պայմաններն են համարվում տնտեսության երկարաժամկետ զարգացման համար: Ներկայումս առկա մարտահրավերները տնտեսական քաղաքականություն մշակողների և տեսաբանների համար պահանջում են հարկաբյուջետային քաղաքականության հիմնախնդիրների բացահայտման և վերլուծության նորագույն մեթոդների ու մեխանիզմների կիրառություն, ինչն իր հերթին տեսական և էմպիրիկ վերլուծությունների համար նոր մոտեցումների անհրաժեշտություն է առաջացնում:

Լավ մշակված հարկաբյուջետային կանոնների և թափանցիկ հարկաբյուջետային մեխանիզմների կիրառումն ամրապնդում են մակրոտնտեսական կայունությունը, որը, պայմանավորված ներկա մարտահրավերներով և զարգացման առաջնահերթություններով, հարկաբյուջետային կայունության համար ամենաէական նախապայմանն է հանդիսանում: Միևնույն ժամանակ, ընգծելով հարկաբյուջետային քաղաքականության կանխատեսումների և վերլուծությունների վերաբերյալ անհրաժեշտ գործիքների ու մեթոդների անհրաժեշտությունը, կարող ենք փաստել, որ հարկաբյուջետային քաղաքականության հիմնախնդիրները շարունակվում են մնալ տեսական հետազոտությունների առաջնային դիրքերում՝ հիմքեր ստեղծելով կարևորագույն հոտազոտությունների և վերլուծությունների համար: Ուստի, ինտեգրված միասնական հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների մշակումն ու իրականացումը նույնպես համարվում է պետական քաղաքականության և տնտեսագիտական հետազոտությունների առանցքային հիմնախնդիրը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության թեմայի վերլուծության հիմքում դրվել են հետևյալ հիմնական նպատակները, որոնց շրջանակներում իրականացվել է հետազոտությունը: Դրանք են.

- Հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ տեսական մոտեցումների ուսումնասիրությունը և հարկաբյուջետային քաղաքականության նոր դերի բացահայտումը տնտեսական նոր կոնսենսուսում:
- Հարկաբյուջետային քաղաքականության մակրոտնտեսական էֆեկտների վերլուծությունը և քաղաքականության արդյունավետության գնահատումը տնտեսագիտական տարբեր դպրոցների ուսումնասիրությունների շրջանակներում:
- Զարգացող երկրներում հարկաբյուջետային քաղաքականության բարեփոխումների ուսումնասիրությունը և դրամավարկային քաղաքականության հետ կոորդինացման մեխանիզմների պարզաբանումը:
- ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության և հարկաբյուջետային համակարգը բնութագրող հիմնական ֆիսկալ ցուցանիշների վերլուծությունը:
- Իմպուլսների սահմանափակման մեթոդով գնահատվող VAR մոդելավորման միջոցով հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության գնահատումը ՀՀ-ում և համապատասխան հարկաբյուջետային բարեփոխումների ներկայացումը:

Տնտեսական հետազոտություններում և տնտեսագիտական գրականության մեջ կարևոր տեղ է հատկացվում հարկաբյուջետային քաղաքականությանը որպես տնտեսական զարգացման համար կարևոր գործոն: Հարկաբյուջետային քաղաքականության ավանդական դերը դասական տեսության մեջ համարվում է երկարաժամկետ կայուն տնտեսական աճի խթանումը՝ պատշաճ նախագծված հարկային համակարգերի և ծախսային ծրագրերի միջոցով: Վերջերս կատարված հետազոտություններում էական տեղ է հատկացվում ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականությանը և դրա հնարավոր դերը տնտեսական աճը խթանելու համար: Քեյնսյան, նեո-քեյնսյան, նեոդասական տեսությունները և տնտեսագիտական այլ ուղղությունների հետազոտություններն այն հիմնական մոտեցումներն են, որոնք մտադիր ենք ուսումնասիրել հետազոտության ընթացում, որի արդյունքում հնարավոր կլինի բացահայտել տնտեսական աճի համար արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության մոդելը և ներկայացնել հարկաբյուջետային քաղաքականության դերը տնտեսական նոր կոնսենսուսում:

Հարկաբյուջետային քաղաքականության մակրոտնտեսական էֆեկտներն էական

նշանակություն ունեն տնտեսական քաղաքականության մշակման ժամանակ: Մեր հետազոտություններն ուղղված են բացահայտելու հարկաբյուջետային փոփոխականների մակրոտնտեսական հետևանքները, դրանց ազդեցությունը մակրոտնտեսական հավասարակշռության վրա: Ատենախոսությունը կտրամադրի նոր տվյալներ, այսպես կոչված հարկային փոփոխությունների «էկզոգեն» (արտաքին) էֆեկտների վերաբերյալ՝ գնահատելով հարկաբյուջետային քաղաքականության գործիքների «էնդոգեն» (ներքին) արձագանքի կարևորությունն այնպիսի մակրոտնտեսական փոփոխականների վրա՝ ինչպիսիք են ՀՆԱ-ն, պետական պարտքը և այլն:

Հասկանալի է, որ կախված մի շարք որոշիչ գործոնների, հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը տարբեր երկրներում տարբեր է լինում: Այս գործոնները կարող են դասակարգվել մի քանի խմբերի, ինչպես օրինակ՝ քաղաքական, վարչական գործոնները, գործոններ՝ կապված տվյալ երկրի տնտեսական համակարգի հետ: Այս գործոններն ազդում են հարկաբյուջետային քաղաքականության վրա և, հետևաբար, որոշում են տվյալ երկրում քաղաքականության սահմանված նպատակներին հասնելու արդյունավետությունը: Հաշվի առնելով այն փաստը, որ զարգացող երկրներում հարկաբյուջետային քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ որոշ գործոններ ունեն փոքր, կամ նույնիսկ բացասական դեր, հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը զարգացող երկրներում ավելի ցածր է լինում՝ համեմատած զարգացած երկրների: Հետևաբար, ատենախոսության կարևոր նպատակներից է պարզել հիմնական խոչընդոտները՝ զարգացող երկրներում արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության իրականացման առումով:

Ատենախոսության մյուս կարևոր նպատակն է պարզել այն պատշաճ և արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականությունը, որը կնպաստի տնտեսական աճին և վերլուծել ֆիսկալ քաղաքականության տարբեր գործիքների ազդեցությունները Հայաստանում տնտեսական գործունեության արդյունավետության վրա: Մասնավորապես, կիրառելով էկոնոմետրիկ վերլուծության VAR մոդելները, ատենախոսությունում նախատեսվում է ուսումնասիրել հարկաբյուջետային

քաղաքականության տարբեր սցենարներ և դրանց ազդեցությունը մակրոմիջավայրի կայունացման վրա:

Այսպիսով, առաջադրված նպատակներին հասնելը ենթադրում է ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության և վերջին տարիների ֆիսկալ ցուցանիշների համապարփակ վերլուծության իրականացում, զարգացող երկրներում հարկաբյուջետային բարեփոխումների ուսումնասիրություն, և ՀՀ-ում հարկաբյուջետային քաղաքականության անհրաժեշտ բարեփոխումների իրականացման հիմնական ուղղությունների սահմանում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը հարկաբյուջետային համակարգն է և պետության կողմից իրականացվող հարկաբյուջետային քաղաքականությունը:

Հետազոտության առարկան հանդիսանում է հարկաբյուջետային քաղաքականության, մակրոտնտեսական փոփոխականների և տնտեսական աճի միջև փոխազդեցություններն ու կապերը:

Հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտությունում կիրառվել են գիտական ճանաչողության մի շարք մեթոդներ, ինչպիսիք են՝ վերլուծության, գիտական վերացարկման, համադրման, ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները: Միաժամանակ օգտագործվել են վիճակագրական, մաթեմատիկական, գործընթացների գրաֆիկական մեկնաբանման, էկոնոմետրիկ մոդելավորման մեթոդները: Հետազոտության համար տեսական հիմքեր են հանդիսացել տնտեսագիտական գրականության հայրենական և համաշխարհային հայտնի հեղինակների աշխատություններն ու գիտահետազոտական հոդվածները, ՀՀ օրենքները, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ Կենտրոնական բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի և այլ միջազգային կառույցների կողմից հրապարակված զեկույցները, աշխատանքային փաստաթղթերը, տեղեկագրերը, վիճակագրական տվյալների բազաները և տվյալների այլ շտեմարաններ:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը հանդիսանում է հետևյալը.

- Հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ տարբեր տեսությունների և

հետազոտությունների զուգահեռ վերլուծությունների արդյունքում առանձնացվել և բացահայտվել են պետության հարկաբյուջետային քաղաքականության այժմեական հայեցակարգերը, միևնույն ժամանակ, հաշվի առնելով վերջին տարիների տնտեսական զարգացումները և պետության մակրոտնտեսական կարգավորման գործիքների հարաբերակցության փոփոխությունները, առաջ է քաշվել տնտեսական նոր կոնսենսուսում հարկաբյուջետային քաղաքականության ունեցած դերի վերանայման հարցը՝ պայմանավորված ներկա ժամանակաշրջանում ֆիսկալ գործիքների կիրառման ընդլայնման և դրանց արդյունավետության մեծացման հանգամանքներով:

- Ցածր գնաճային և կայուն տնտեսական աճ ապահովելու նպատակով բացահայտվել են հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման և դրա հետ կապված ինստիտուցիոնալ ու գործնական կարգավորումների հիմնական տրամաբանությունը, որը պետք է լինի ՀՀ-ում կենտրոնական բանկի և կառավարության կողմից մշակվող քաղաքականությունների հիմքում՝ ապահովելու տարամետ մակրոտնտեսական միտումների բացակայությունը և ներդաշնակ ու փոխադարձ համաձայնեցված թիրախների առկայությունը:
- Բացահայտելով վերջին տարիներին զարգացող երկրների համար հարկաբյուջետային համակարգի հիմնական մարտահրավերները և առաջնահերթությունները՝ ներկայացվել են ՀՀ-ում հարկային քաղաքականության մշակման և հետագա բարեփոխումների հիմնական ուղղությունները, քաղաքականության արդյունավետ կիրառման համար առաջնային սկզբունքները և նախապայմանները:
- Իրականացնելով ՀՀ հարկաբյուջետային միջավայրի և ֆիսկալ ցուցանիշների ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ ներկայացվել են տնտեսական կայունության և միջնաժամկետ կայուն տնտեսական աճ ապահովելու համար անհրաժեշտ հարկաբյուջետային ընդլայնման և/կամ կոնսոլիդացիայի համադրման հիմնական ուղղությունները, հիմնական մակրոտնտեսական ռիսկերը, կանխատեսվել է ֆիսկալ գործիքների կիրառման արդյունավետությունը միջնաժամկետ հեռանկարում:
- Միջազգային պրակտիկայում ընդունված էկոնոմետրիկ վերլուծության VAR մոդելավորման միջոցով ներկայացվել և գնահատվել են ՀՀ հարկաբյուջետային

քաղաքականության տարբեր սցենարներ՝ բացահայտելու միջնաժամկետ կայուն տնտեսական աճ ապահովելու համար անհրաժեշտ քաղաքականության հիմնական ուղղությունները: Մասնավորապես, ընտրված մոդելի շրջանակներում կիրառվել է ֆիսկալ իմպուլսների սահմանափակման մոտեցումը վերոնշյալ խնդիրը բացահայտելու համար:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ՀՀ-ում հարկաբյուջետային քաղաքականության մշակման և կիրառման գործընթացում, ինչպես նաև ներկայումս իրականացվող համակարգային բարեփոխումների շրջանակներում: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել նաև տեսական և էմպիրիկ վերլուծությունների ժամանակ:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախուսության հիմնական արդյունքները և դրույթները քննարկվել են ՀԱԱՀ, Կրակովի Յագիելոնյան համալսարանի, Բանատի գյուղատնտեսական համալսարանի մասնագետների և հետազոտողների հետ: Հետազոտության հիմնական արդյունքները կարող են կիրառվել ՀՀ ֆինասների նախարարության համապատասխան ստորաբաժանումների կողմից հարկաբյուջետային քաղաքականության և առհասարակ ՀՀ Կառավարության կողմից բյուջետային պլանավորման գործընթացում: Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են գիտական 8 հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և համառոտ նկարագրությունը: Ատենախոսության կառուցվածքը բխում է հետազոտության հիմքում դրված հիմնական նպատակներից և սկզբունքներից: Մասնավորապես այն կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականությունից և հավելվածներից:

Առաջին գլխում ուսումնասիրության հիմնական առարկան եղել է հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ տարբեր դպրոցների ուսումնասիրությունների ներկայացումը, հարկաբյուջետային քաղաքականության մակրոտնտեսական հետևանքների և քաղաքականության արդյունավետության վերլուծությունը՝ միաժամանակ ներկայացնելով տնտեսական նոր կոնսենսուսում

հարկաբյուջետային քաղաքականության ունեցած դերի վերանայման հարցը:

Երկրորդ գլխում ուսումնասիրությունների հիմնական առարկան է եղել հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը երկարաժամկետ տնտեսական աճի վրա, միաժամանակ կարևորելով հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման անհրաժեշտությունը և բացահայտելու կոորդինացման հիմնական մեխանիզմները: Ամփոփ ներկայացվել է զարգացող երկրներում հարկաբյուջետային քաղաքականությունը և մակրոտնտեսական կայունության համար անհրաժեշտ հիմնական նախապայմանները:

Երրորդ գլխում հետազոտությունները կենտրոնացվել են ՀՀ հարկաբյուջետային համակարգի, մակրոտնտեսական փոփոխականների վերլուծության և ՀՀ-ում առաջիկա տարիներին հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղություններին: Կիրառելով էկոնոմետրիկ վերլուծության VAR մոդելները՝ ուսումնասիրվել են հարկաբյուջետային քաղաքականության տարբեր սցենարներ՝ գնահատելու արդյունավետ ֆիսկալ քաղաքականության իրականացման համար առաջնային հիմնական ուղղությունները:

Եզրակացությունների և առաջարկությունների բաժնում համառոտ ներկայացվել են հետազոտության ուսումնասիրություններից և վերլուծություններից բխող հիմնական եզրահանգումները՝ որոնց հիման վրա կատարվել են համապատասխան առաջարկություններ:

Վերջում ներկայացվել է օգտագործված գրականության ցանկը, իսկ հավելվածներում արտացոլված են ատենախոսությունում կիրառված մոդելի և այլ վիճակագրական տվյալների արդյունքները:

ԳԼՈՒԽ 1: ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

«Հարկաբյուջետային քաղաքականության մեջ ամենակարևորն այն է, որ այն ուղղակի ազդեցություն է ունենում և ձեզանից չի պահանջում կապել ապագա քաղաքականության մշակողների ձեռքերը»:

Փոլ Քրուգման

«Նորագույն պատմության մեջ շատ հաճախ լիբերալ կառավարությունները ձախողվել են թուլացած հարկաբյուջետային քաղաքականության թերություն-ների վրա»:

Ֆրանկլին Դ. Ռուզվելտ

1.1 Հարկաբյուջետային քաղաքականության էությունը և նրա դերը շուկայական տնտեսությունում

Հարկաբյուջետային քաղաքականությունը և նրա ազդեցությունը տնտեսության վրա այն հիմնախնդիրն է, որը միշտ եղել է գիտնականների և տնտեսական քաղաքականություն մշակողների ուսումնասիրությունների առանցքում՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները. ներկա գլոբալ տնտեսական ճգնաժամերի և ցնցումների ընթացքում առաջացած բացասական տնտեսական հետևանքների վերացման համար ֆիսկալ գործիքների կիրառման արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև ֆիսկալ համակարգի ցուցանիշների վատթարացման պատճառով, որն առաջացել է եվրոպական երկրների տնտեսություններում ճգնաժամի հետևանքով աճող պետական պարտքի արդյունքում: Ընդունված փաստ է, որ հարկաբյուջետային խթանման միջոցառումները կարող են նպաստել տնտեսության հետճգնաժամային վերականգնմանը, թեև տեսական բանավեճերը շարունակվում են՝ պայմանավորված ֆիսկալ ազդեցության չափով և իրականացման մեխանիզմներով: Արդյունքում,

տնտեսության վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցության հետ կապված բանավեճը շարունակվում է զարգանալ նոր տեմպերով:

Ինչպես հայտնի է՝ ֆիսկալ քաղաքականության գործիքները՝ պետական բյուջեն, հարկային լծակները, որպես տնտեսական գործունեության վրա ազդելու գործիք, պաշտոնապես սկսվել են կիրառվել 1929 թվականին մեծ դեպրեսիայի ժամանակ: Իրականում, միայն 1930-ականների ընթացքում որոշ երկրների կառավարություններ սկսեցին պետական բյուջեն դիտարկել որպես տնտեսական քաղաքականության կարգավորման գործիք: Մինչ այդ պետական բյուջեն տնտեսական դեր չի ունեցել, այն նախատեսված էր միայն կենտրոնական վարչակազմի ընթացիկ ծախսերը ֆինանսավորելու համար: Տնտեսագետ Ջոն Մեյնարդ Քեյնսի վերլուծությունները տեսական հիմքեր են դրել հարկաբյուջետային քաղաքականության, որպես տնտեսության պետական կարգավորման կարևորագույն գործիքի ձևավորման համար՝ ցույց տալով, որ պետական ծախսերը և հարկային մեխանիզմներն իրականում բավականին արդյունավետ գործիքներ են տնտեսական ցիկլերի կարգավորման ժամանակ: Արդյունքում, կարող ենք փաստել, որ դասական տեսության պոստուլատները, որոնք մինչ այդ գերիշխող դիրքեր էին զբաղեցնում, զիջեցին իրենց տեղը՝ առաջնային տեղ տալով տնտեսության կարգավորման պետության ակտիվ միջամտության քեյնսյան գաղափարներին՝ մասնավորապես հարկաբյուջետային քաղաքականությանը:

1929-1939 թվականների տնտեսական մեծ ճգնաժամի ընթացքում և դրանից հետո տարբեր երկրների կառավարություններ սկսեցին կիրառել տնտեսության հարկաբյուջետային կարգավորման մեխանիզմները: Այսպես, օրնակ 1960-ականների սկզբին ԱՄՆ նախագահ Քեննեդիի վարչակազմը բախվեց քեյնսյան երկու խորհրդատուների Վոլտեր Հելլերի և Ջոն Քենետ Գելբրայթի միջև բանավեճին: Հելլերը և Գելբրայթը համաձայն էին, որ հարկերի կրճատումը և պետական ծախսերի աճը, որոնք յուրաքանչյուրը քեյնսյան ֆիսկալ խթաններ են, կմեծացնեին համախառն պահանջարկը և, հետևաբար, կապահովեին ավելի մեծ տնտեսական աճ և զբաղվածություն: Տարբեր պատճառներով Հելլերը կողմնակից էր հարկերի կրճատմանը, իսկ Գելբրայթը ծախսերի ավելացմանը: Իհարկե, այսօր, առաջարկի

տեսության հակաքեյնսյան պահպանողականները պնդում են, որ Քենեդիի հարկերի կրճատման քաղաքականությունն աշխատել է, քանի որ այն դրդել է աշխատուժի և կապիտալի ավելի մեծ առաջարկի, այլ ոչ թե այն պատճառով, որ այն խթանել է ամբողջական պահանջարկը: Սակայն Հելլերի փաստարկը հարկային կրճատման համար զուտ քեյնսյան գաղափար էր, այն նպաստել էր համախառն պահանջարկի աճին: 1980 թվականին նախագահական թեկնածու Ռոնալդ Ռեյգանը և 2000 թվականին Ջորջ Բուշը յուրաքանչյուրն իր հերթին առաջարկել են «սահմանային» հարկի մշտական նվազեցում՝ նպատակ ունենալով կառավարության գործունեության չափերի կրճատման, առաջարկով պայմանավորված խթանների և եկամտահարկի նվազեցում եկամուտներին համամասնորեն: Երկու դեպքում էլ հարկային կրճատումները նպաստեցին ամբողջական պահանջարկի մեծացմանը, որն օգնեց մեղմացնել ճգնաժամերի ազդեցությունը. Ռեյգանի ժամանակ 1982թ., Բուշի դեպքում՝ 2002թ.: Ի տարբերություն Ռեյգանի և Բուշի հարկային կրճատումների, դրանք կարող են տեղի ունենալ այնպես, որ սահմանափակեն մեծ եկամուտ ունեցող տնային տնտեսությունների եկամուտները: 2008 թվականի հարկային արտոնությունը, 2009 թվականի եկամտահարկի կանխավճարի կրճատումը, և 2011 թվականի 2 տոկոսով աշխատավարձի հարկի նվազեցումը (6.2% -ից մինչև 4.2%) կրճատեցին խոշոր եկամուտ ստացող տնային տնտեսությունների եկամուտները: Այսպիսով, տնտեսական քաղաքականության այս միջոցառումները բոլորն էլ քեյնսյան ֆիսկալ խթաններ են, որոնք արդյունքում մեծացնում են ամբողջական պահանջարկը[1]:

2008 թվականի ֆինանսական ճգնաժամի ընթացքում և հետագայում, ինչը հիմնականում կոչվում է «Մեծ Ճգնաժամ», առավել առաջադեմ երկրներն իրականացրել են մի շարք ակտիվ ֆիսկալ քաղաքականության միջոցառումներ այդ ճգնաժամի հետևանքների մեղմացման համար: Մասնավորապես, քանի որ դրամավարկային քաղաքականության լծակները սահմանափակված էին ցածր տոկոսադրույքներով, որոնք այս անկման հիմնական առանձնահատկություններ էին, կառավարությունների մեծ մասն ավելի շատ էր ապավինում հարկաբյուջետային քաղաքականության

[1] Seidman L., "Keynesian Fiscal Stimulus: What Have We Learned from the Great Recession?", University of Delaware, 2011, pp.5-6

գործիքներին: Ինչպես շատ երկրներում, որոնց հարվածել էր վերջին «Մեծ ճգնաժամը», Միացյալ Նահանգները նույնպես արձագանքեց ֆիսկալ քաղաքականության ակտիվ միջոցառումներով: ԱՄՆ-ի գործողությունները, փաստորեն, սկսվեցին 2008 թվականի փետրվարին՝ ճգնաժամի սկզբում, Բուշի վարչակազմի վերջին տարվա ընթացքում ընդունված ժամանակավոր հարկային կրճատումներով, որին առաջին անգամ հաջորդեց հարկային վարկերի ընդունումը 2008 թ. հուլիսին: Միացյալ Նահանգներում ամենամեծ հակաճգնաժամային գործողությունը, որն ընդունվել էր 2009 թվականի փետրվարին, նախագահ Օբամայի պաշտոնավարման հենց սկզբից, դա Ամերիկյան վերականգնման և վերաինտեգրման հարկային ակտն էր (the American Recovery and Reinvestment Tax Act (ARRA)): Այն հարկային կրճատումների, անհատական տրանսֆերտների ու պետական գնումների համադրություն էր, որի արդյունքում նախատեսվում էր, որ բյուջեի դեֆիցիտը կմեծանա մի քանի տարիների ընթացքում՝ ամենամյա ՀՆԱ-ի 5.5 տոկոսի համախառն մեծությամբ: Միաժամանակ, 2008 թվականին ԵՄ-ն ընդունեց Եվրոպական տնտեսական վերականգնման ծրագիրը (the European Economic Recovery Plan (EERP)), որը համարժեք էր ԵՄ ՀՆԱ-ի 1.5 տոկոսին: Վերջիններս նույնպես պարունակում են տնտեսության հակաճգնաճամային կարգավորման քեյնսյան ֆիսկալ մեխանիզմներ[2]:

Մինչև 1980-ականների սկիզբը տնտեսական կայունացման համար հարկաբյուջետային քաղաքականությունը լայնորեն համարվում էր օգտակար և արդյունավետ գործիք: Սակայն, 1970-ականների նավթային շոկերից հետո տնտեսական աճի խթանումը ձախողվեց՝ զուգակցվելով բյուջեի դեֆիցիտի և պետական պարտքի աճով: Այս փաստը պարբերաշրջանային տատանումները մեղմելու առումով շատ տնտեսագետների մոտ թերահավատություն է առաջացնում հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության նկատմամբ, և, արդյունքում, հարկաբյուջետային քաղաքականության գործիքներն աստիճանաբար քիչ ուշադրության են արժանացել[3]:

---

[2] Alan J. Auerbach," The fail and the rise of Keynesian fiscal policy", University of California, Berkeley, May 2012, pp. 3-7

[3] Afonso, A., and Sousa, R. M. (2012), "The macroeconomic effects of fiscal policy", Applied Economics, voulume 44, pp. 4439-4441.

Թեև քաղաքականություն մշակողները շարունակում էին մեծ մասշտաբներով հենվել ակտիվ հարկաբյուջետային քաղաքականության վրա՝ որպես տնտեսական քաղաքականության կարգավորման հիմնական գործիք, որը և ցույց տվեց վերջին համաշխարհային տնտեսական ճգնաժամը, այնուամենայնիվ, ակադեմիական հետազոտողները չեն հասել կոնսենսուսի մակրոտնտեսական փոփոխականների վրա ֆիսկալ քաղաքականության ազդեցության գնահատման առումով: Սա կտրուկ տարբերվում է դրամավարկային քաղաքականությանից, որտեղ գիտնականների և քաղաքականության մշակողների մոտ հիմնարար համաձայնություն է ձևավորվել տնտեսության վրա արդի գնաճային նպատակային ռազմավարությունների ունեցացած ազդեցության առնչությամբ[4]: Դրամավարկային քաղաքականության վերաբերյալ նոր կոնսենսուսը ենթադրում է, որ դրամավարկային քաղաքականությունն արդյունավետ է որպես գնաճի վերահսկման միջոց փոխարժեքի փոփոխության միջոցով՝ համաձայն Թեյլորի կանոնի: Ավելին, այս նոր կոնսենսուսի մոդելը հիմնված է անվանական կոշտության նոր քեյնսյան տեսության և երկարաժամկետ ուղղահայաց Ֆիլիպսի կորի, ինչպես նաև ռացիոնալ սպասումների նեոդասական տեսության և բացահայտ օպտիմալացման վարքագծի վրա (Տնտեսական նոր կոնսենսուսի վերաբերյալ ավելի մանրամասն կներկայացվի հետագա շարադրանքում)[5]: Այնուամենայնիվ, ֆիսկալ քաղաքականության վերաբերյալ կա ավելի պակաս համաձայնություն թե՛ տեսական մոտեցումների և թե՛ էմպիրիկ մոդելների մշակման հարցում, ինչն էլ անհրաժեշտություն է առաջացնում հետազոտություններն ավելի ակտիվորեն կենտրոնացնել ֆիսկալ քաղաքականության ուսումնասիրության ուղղությամբ:

Ընդհանրապես Ֆիսկալ քաղաքականության նկատմամբ հետաքրքրության բացակայությունը պայմանավորված էր նաև նրանով, որ որոշ տնտեսագետներ գտնում էին, որ պահանջարկի կառավարման դերը պետք է վերագրվի Կենտրոնական բանկին, և որ կառավարությունները հնարավորին չափ քիչ ֆունկցիաներ պետք է իրականացնեն: Այս տեսակետը լավ է ներկայացվել Նոբելյան մրցանակի դափնեկիր Փոլ Քրուգմանի

[4] Fontana, G. (2009), "The transmission mechanism of fiscal policy: a critical assessment of current theories and empirical methodologies", Journal of Post Keynesian Economics, 31(4), pp. 587-604.
[5] Arestis, P. (2009), "New consensus macroeconomics: A critical appraisal", The Levy Economics Institute of Bard College working paper, 564, pp.2-3.

կողմից Լոնդոնի տնտեսագիտության դպրոցում դասախոսությամբ հանդես գալու ժամանակ.

«Նույնիսկ տնեսագետների շրջանակներում, անշուշտ, հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ ուսումնասիրությունների նվազեցում է նկատվում՝ ուշադրություն դարձնելով այն բաների վրա, որոնք ժամանակակից զարգացման պայմաններում հայտնվել են ահավոր կարևորության մեջ: Որքա՞ն աշխատանքներ են իրականացվել ֆիսկալ քաղաքականության մեջ: Դրա շրջանակներում 1985-2000թթ. տնտեսական հետազոտությունների ազգային բյուրոն (NBER) հրապարակել է մոտ 7000 աշխատանքային փաստաթղթեր, որոնցից 5-ն իրենց վերնագրում հարկաբյուջետային քաղաքականության մասին ինչ-որ բան չեն ասում: Ֆիսկալ քաղաքականության ամբողջ քննարկումները հիմնականում անհետացել են մակրոտնտեսագիտությունից»:[6]

Այնուամենայնիվ, կարող ենք եզրակացնել, որ հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունն՝ իրական տնտեսությունը խթանելու առումով, շարունակական բանավեճերի կենտրոնում է եղել տնտեսագետների և քաղաքականություն մշակողների համար՝ սկսած այն ժամանակից, երբ Քեյնսը 1936 թվականին գրեց իր հեղափոխական աշխատանքը, որի ոգեշնչումն էր եղել 1929 թվականի տնտեսական ճգնաժամը: Արդյունքում, այն հաջողեց հերքել իշխող տեսության այն գաղափարը, որն առաջարկում էր տնտեսության ազատումը պետության վերահսկողությունից՝ պատճառաբանելով, որ տնտեսական դեպրեսիան պետք է կամ բարձրացնի մասնավոր ներդրումների մակարդակը կամ ստեղծի հանրային փոխարինողներ, որպես մասնավոր ներդրումների ժամանակավոր փոխարինման անհրաժեշտություն: Այսպիսով, հիմնական տնտեսական բանավեճի առարկա է շարունակվում մնալ այն հանգամանքը, թե արդյոք կարո՞ղ է ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականությունը մեծացնել արտադրությունն ու սպառումը պետական ծախսերի ավելացման կամ հարկերի կրճատման միջոցով: Եթե այո, ապա ինչքանո՞վ: Դրանք ոչ միայն մակրոտնտեսագիտության և պետական ֆինանսների կառավարման առանցքային հիմնախնդիրներն են, այլ նաև այն հարցերը, որոնք քաղաքական գործիչները հաճախ են հանդիպում կարևոր տնտեսական որոշումներ

[6] Paul Krugman, 10th of June 2009, Lionel Robbins Memorial Lectures

կայացնելու ժամանակ:

Միաժամանակ, հայտնի փաստ է նաև, որ ճգնաժամային փուլում գտնվող երկներն ակտիվ ֆիսկալ քաղաքականությանը զուգահեռ սկսեցին կտրուկ իջեցնել տոկոսադրույքների մակարդակը՝ ֆինանսական շուկաների համար անհրաժեշտ իրացվելիության մակարդակ ապահովելու համար: Արդյունքում, տնտեսական աճի գլխավոր շարժիչ ուժը՝ ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականությունը, համաշխարհային մասշտաբով հանգեցրեց պահանջարկի էքսպանսիայի:

Ընդհանուր առմամբ, այս գործընթացը ցույց է տալիս, որ շատ երկրներում հարկաբյուջետային քաղաքականությունը խիստ սահմանափակված է եղել: Արդյունքում, հարկաբյուջետային քաղաքականությունը և դրա ազդեցությունը տնտեսության վրա չեն եղել տնտեսագետների հետաքրքրության և ուսումնասիրությունների կենտրոնում: Այնուամենայնիվ, կարող ենք փաստել, որ հարկաբյուջետային քաղաքականությունը համարվում է պետական մակրոտնտեսական կարգավորման համար անհրաժեշտ գործիքներից մեկը: Այն հանդիսանում է կառավարության համար կարևոր լծակ հարկերի և պետական ծախսերի կառավարման միջոցով լրիվ զբաղվածության և երկարաժամկետ տնտեսական աճ ապահովելու համար: Ֆինանսական ճգնաժամերը և տնտեսական ցնցումներ ցույց են տվել տնտեսության մեջ պետության միջամտության անհրաժեշտությունը՝ զսպելու և մեղմացնելու ցանկացած տնտեսական սպառնալիք: Անշուշտ, նեոդասական և «ոչ ֆիսկալ գերիշխանության» ժամանակաշրջանից ավելի քան երկու տասնամյակ անց ֆիսկալ քաղաքականության ակտիվացումը վերջին տարիներին այն վերադարձրել է պետական տնտեսական քաղաքականության օրակարգի առաջնային դիրքեր: Այնուամենայնիվ, քեյնսյան գաղափարների վերադարձը որոշակի մարտահրավերներ է առաջ բերում տեսաբանների և տնտեսական քաղաքականություն մշակողների համար: Չնայած հարկաբյուջետային քաղաքականության նկատմամբ հետաքրքրության վերականգնմանը՝ տնտեսական գործունեության վրա դրա ազդեցությունը դեռևս շատ դեպքերում մնում է անորոշ:

Արդյունքում, հարկաբյուջետային քաղաքականության գործնական կիրառության շրջանակների ընդլայնումը բարձրացնում է մի շարք հիմնարար հարցեր: Ընդհանուր

առմամբ, ինչպե՞ս են զբաղվածության խնդիրներն ազդում հարկերի և պետական ծախսերի մակարդակի սահմանման վրա: Ե՞րբ է անհրաժեշտ կառավարության կողմից գործարկել ֆիսկալ խթանման ծրագրեր: Ի՞նչն է որոշում այդ ծրագրերի չափը և ինչպե՞ս է այն կախված պետության պարտքային դիրքից: Ինչպիսի՞ն պետք է լինի հարկային կրճատումների և պետական ծախսերի ավելացման զուգակցումն այդ ծրագրերում: Ինչպիսի՞ն կլինի հարկաբյուջետային քաղաքականության ընդհանուր արդյունավետությունը՝ գործազրկության մակարդակի նվազեցման առումով: Որո՞նք են հարկաբյուջետային քաղաքականության միջնաժամկետ ազդեցությունները: Որո՞նք են հարկաբյուջետային քաղաքականության կայունացման կամ հակացիկլային հատկանիշները: Այս և մի շարք այլ հարցերի պատասխանները շարունակվում են մնալ տեսաբանների հետազոտությունների համար որպես առանցքային հարցեր:

Հարկաբյուջետային քաղաքականությունը տնտեսության վրա կարող է ունենալ կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցություն: Կարճաժամկետ հատվածում հարկաբյուջետային քաղաքականությունը կարող է փոփոխել արտադրությունն իր հնարավոր մակարդակից՝ ազդելով ապրանքների և ծառայությունների պահանջարկի վրա: Երկարաժամկետ հատվածում հարկաբյուջետային քաղաքականությունը կարող է ներգործել արտադրության մակարդակի, հետևապես՝ աշխատուժի քանակի և որակի, ինչպես նաև այլ գործոնների վրա կամ ընդհանուր գործոնային արտադրողականության փոփոխությունների միջոցով[7]:

Ջ.Մ. Քեյնսն իր «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն» աշխատության մեջ (1936թ.) ներկայացրել է երկու լծակ՝ ֆունկիցա, որոնց միջոցով պետական բյուջեն կարելի է դիտարկել որպես տնտեսական քաղաքականության կարգավորման համար կարևորագույն գործիք: Ֆինանսական քաղաքականություն մշակողների համար առաջին ֆունկցիան եկամուտների լավագույն բաշխվածությունն ապահովելն է: Արդյունքում անհրաժեշտ է ֆիսկալ լծակների միջոցով եկամուտների վերաբաշխում դեպի այն սպառողները, որոնց սպառման սահմանային հակումն ավելի բարձր է (MPC), ինչն էլ իր հերթին կհանգեցնի համախառն սպառման մեծացմանը:

[7] Buffie Edward F., 1992, "The Short- and Long-Run Effects of Fiscal Policy", The World Bank Economic Review, Volume 6, pp. 331–351

Համաձայն այս տեսության՝ հարկաբյուջետային քաղաքականության երկրորդ ֆունկցիան հանդիսանում է այն, որ պետական ծախսերը մուլտիպլիկատիվ ազդեցության միջոցով հանդիսանում են տնտեսությունը տատանումներից, արտաքին շոկերից պաշտպանելու համար հիմնական լծակ: Այսպիսով, Մեծ դեպրեսիայի ժամանակ, և նույնիսկ դրանից հետո, քեյնսյան տեսության այս երկու սկզբունքներն առաջնորդեցին պետական տնտեսական քաղաքականությունն աշխարհի տարբեր երկրներում[8]:

Քեյնսյան ֆիսկալ խթանման մեխանիզմների շատ կողմնակիցներ և հակառակորդներ համաձայն են մի հարցի շուրջ. «քեյնսյան հարկաբյուջետային խթանները ներառում են պետական ծախսերը, այլ ոչ թե հարկերի կրճատումը»: Բայց իրականում երկուսն էլ սխալ են: Քեյնսյան հարկաբյուջետային խթանումը դա ժամանակավոր հարկային կրճատումների կամ պետական ծախսերի ժամանակավոր աճն է (տրանսֆերտների կամ պետական գնումների միջոցով)՝ նպատակ ունենալով ճգնաժամերի ժամանակ մեծացնել ամբողջական պահանջարկը («C+I+G»), երբ համախառն պահանջարկը չափազանց թույլ է արտադրության և զբաղվածության նորմալ մակարդակի պահպանման համար: «Քեյնսյան» հարկաբյուջետային քաղաքականություն նշանակում է կենտրոնացում համախառն պահանջարկի ավելացման վրա տնտեսության անկումային փուլում, իսկ քեյնսյան ֆիսկալ խթանումը ներառում է հարկային կրճատումների, տրանսֆերտների և պետական գնումների մեխանիզմներ՝ ամբողջական պահանջարկը մեծացնելու համար[9]:

Իսկ ինչ վերաբերում է տնտեսության պետական կարգավորման դասական տեսությանը, ապա դրա արմատները գալիս են դեռևս 18-րդ դարից Ադամ Սմիթի, Դավիդ Ռիկարդոյի և Ժան Բապտիստ Սեյի աշխատություններից: Դասական տեսությունը հիմնված է շուկայում կատարյալ մրցակցության ենթադրությունների վրա, երբ գները և աշխատավարձերը ճկուն են և առաջարկի դասական կորն ուղղահայաց է և անվանական աշխատավարձի ու գների նկատմամբ ոչ էլաստիկ: Համաձայն առաջարկի դասական կորի՝ պետական ծախսերի յուրաքանչյուր մեկ միավորի

[8] Keynes J. M., The general theory of employment interest and money, Palgrave Macmillan, 1936, pp. 62-65
[9] Նույն տեղում, pp. 196-206

ավելացումը կսահմանափակի մասնավոր ծախսերի համապատասխան մեկ միավորի նվազեցմամբ՝ պայմանավորված արտամղման էֆեկտի ազդեցությամբ[10]: Հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ այս ենթադրությունների հիմնական հետևանքներն այն են, որ հարկաբյուջետային քաղաքականությունն ազդեցություն չի ունենում զբաղվածության և արտադրության մակարդակի վրա: Երբ կառավարությունն ավելացնում է իր ծախսերը, ապա ըստ դասականների, մասնավոր հատվածից այն պետք է փոխառու միջոցների հաշվին լրացնի, որպեսզի ֆինանսավորի ծախսերի այդ աճը: Դա կբարձրացնի տոկոսադրույքը և դրանով իսկ կնվազեցնի մասնավոր հատվածի սպառումն ու ներդրումը: Արդյունքում, մասնավոր հատվածի արտամղման էֆեկտը կչեզոքացնի իրականացված ֆիսկալ քաղաքականության դրական ազդեցությունները[11]: Այսպիսով, Քեյնսից առաջ սովորական երևույթ էր ենթադրել, որ պետական ծախսերը և հարկային մեխանիզմներն անզոր են՝ ազդելու տնտեսությունում ծախսերի և զբաղվածության ընդհանուր մակարդակների վրա:

Ի հակադրություն դասականների՝ Քեյնսը մերժեց կառավարության չեզոք դերի և հավասարակշռված բյուջեի գաղափարները: Ըստ նրա՝ դրամավարկային քաղաքականությունն անկարող է անկումային ժամանակաշրջանում, քանի որ այն հիմնականում հենվում է տոկոսադրույքների կրճատման վրա, որն ըստ էության արդեն իսկ շատ ցածր է: Բացի այդ, գների ճշգրտման մեխանիզմը սնուցվում է եկամտի ճշգրտման մեխանիզմով: Ճգնաժամի ընթացքում ֆիզիկական անձանց եկամուտները նվազում են, ուստի նրանք հակված են նվազեցնել իրենց սպառումն ու խնայողությունները: Եվ նույնը տեղի է ունենում բիզնեսի համար. նրանք հակված են նվազեցնել ներդրումները և արտադրությունը: Արդյունքում, գների ճշգրտման մեխանիզմը տնտեսությունը կտանի ավելի անկման, քան լրիվ զբաղվածություն ապահովման: Այս համատեքստում Քեյնսը տնտեսությունը ճգնաժամից դուրս բերելու լուծում է առաջարկում կառավարությունների համար: Նա կարծում է, որ պետությունը կարող է իրականացնել որոշակի քաղաքականություն, որը կարող է դրական

[10] Dornbusch, R., Fischer, S. Startz, R. (1998). Macroeconomics. USA: The McGraw-Hill Companies, Inc., pp.70-73

[11] Halkos, G., Paizanos, A. (2015). Fiscal policy and economic performance: A review of the theoretical and empirical literature. MPRA Paper No. 67737, pp. 2-5

ազդեցություն ունենալ տնտեսության վրա: Այլ կերպ ասած, Քեյնսը կարծում է, որ պետությունը պետք է ավելի մեծ դերակատարություն ունենա տնտեսության մեջ: Տնտեսությունը չի կարելի թողնել գների ճշգրտման մեխանիզմին, որն իր կարծիքով անզոր է, և պնդում է, որ այդ պարագայում տնտեսության վերջնական վերականգնմանը սպասելն անարդյունք և անիմաստ է[12]:

Ըստ քեյնսյան տեսության, ամբողջական պահանջարկի տատանումները մղում են տնտեսությունը դեպի կարճատև հավասարակշռության մակարդակի, որը տարբերվում է լրիվ զբաղվածության մակարդակի արտադրությունից: Այս տատանումներն արտահայտվում են որպես դիտարկվող գործարար պարբերաշրջաններ: Քեյնսյան մոդելները պարտադիր չեն ենթադրում կրկնվող գործարար պարբերաշրջաններ: Այնուամենայնիվ, պարզ քեյնսյան մոդելները, որոնք ներառում են քեյնսյան մուլտիպլիկատորի ազդեցությունը, առաջացնում են պարբերաշրջանային ֆիսկալ պատասխաններ նախնական ցնցումների նկատմամբ: Այս մոդելը պետք է հաշվի առնի գործարար պարբերաշրջանները մուլտիպլիկատորի և աքսելերատորի շնորհիվ: Միաժամանակ, արտադրության տատանումների մակարդակը կախված է ներդրումների մակարդակից, քանի որ ներդրումները որոշում են համախառն արտադրության մակարդակը՝ մուլտիպլիկատորի, և ամբողջական պահանջարկը՝ աքսելերատորի միջոցով[13]:

Փոլ Սամուելսոնն իր տնտեսագիտության ներածական դասագրքի մեջ քեյնսյան մակրոտնտեսագիտության գուցե ամենաազդեցիկ ձևակերպումն է ներկայացնում լայն լսարանի համար[14]. «Բացի հանրային աշխատանքների ֆինանսավորման և սոցիալական ապահովագրության ծախսերից, հակաճգնաժամային փոխհատուցող հարկաբյուջետային քաղաքականությունը կարող է նաև ապավինել պարբերաշրջանային հարկային քաղաքականությանը: Նույնիսկ առանց կառավարության կողմից որևէ օրենքի փոփոխության, պարզվում է, որ պետական հարկերի հավաքագրումները նվազում են, երբ ազգային եկամուտը նվազում է: Սա հզոր

[12] Hahn, F.H. 1997. "Keynesian Economics and General Equilibrium Theory: Reflections on Current Debates." in G. C. Harcourt (ed.), The Microeconomic Foundations of Macroeconomics. London.: Macmillan, pp.38-39
[13] Samuelson, Paul. "Interactions Between the Multiplier Analysis and the Principle of Acceleration", 1939. pp. 75-78
[14] Samuelson, Paul. 1948. Economics: An Introductory Analysis (New York: McGraw-Hill)., pp. 413-414.

գործոն է, որը կայունացնում է ամբողջ տնտեսությունը և կարգավորում գործարար պարբերաշրջանները: Եվ նույնիսկ սա դեռ ամենը չէ. կառավարությունը կարող է նաև փոխել հարկերի դրույքաչափերը: Նրանք, ովքեր հավատում են հակապարբերաշրջանային փոխհատուցող ֆիսկալ քաղաքականությանը, պնդում են, որ ճգնաժամի ընթացքում հարկային դրույքաչափերն անհրաժեշտ է նվազեցնել այն ժամանակ, երբ ընդհանուր գնողունակությունը շատ ցածր է»:

Ինչպես արդեն նշեցինք, հարկաբյուջետային քաղաքականության հետևանքների վերաբերյալ տեսական մոդելները կարելի է առանձնացնել երկու հիմնական ուղղություններով. առաջինը նոր դասական ուղղությունն է, որը մշակված է միկրո վերլուծություններով և երկրորդը՝ քեյնսյան տեսությունը: Ֆիսկալ ընդլայնման համար, ինչպիսին է պետական ծախսերի աճը կամ հարկերի կրճատումը, երկու ուղղություններն էլ կարճաժամկետ հատվածում կանխատեսում են աճող համախառն արդյունք, սակայն դրա համար նախատեսում են խթանման տարբեր մեխանիզմներ: Յուրաքանչյուր տեսության կողմից այդ մեխանիզմները վերագրվում են տարբեր ենթադրությունների՝ նոր դասականների կողմից մասնավոր սպառման, իսկ քեյսնականների կողմից՝ աշխատանքի շուկայի արձագանքներին: Հետևաբար, երկու տեսական մոտեցումների միջև բանավեճի կարևորագույն կետը հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն է մասնավոր սպառման և իրական աշխատավարձի վրա: Այս երկու փոփոխականների վրա հարկաբյուջետային քաղաքականության ունեցած ազդեցության վերաբերյալ կանխատեսումները հաստատուն են՝ համապատասխան վերոնշյալ տեսական մոտեցումներին՝ չնայած դրանց հիմքում ընկած տարբեր ենթադրությունների: Օրինակ, նոր դասական մոդելը կանխատեսում է, որ ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականությունը նվազեցնում է մասնավոր սպառման ծավալը և մեծացնում է աշխատուժի առաջարկը հարստության բացասական ազդեցության պատճառով և, հետևաբար, աշխատուժի առաջարկի ավելացումը նպաստում է իրական աշխատավարձի անկմանը: Մյուս կողմից, քեյնսյան մոդելը կանխատեսում է, որ դրական ֆիսկալ ցնցումներից հետո իրական աշխատավարձը մեծանում է աշխատուժի պահանջարկի աճի հետևանքով, անվանական գնային ոչ ճկուն լինելու և անկատար մրցակցության պատճառով, իսկ աճող իրական աշխատավարձը նաև մեծացնում է

մասնավոր սպառումը[15]:

Նոր դասական մոդելում ֆիսկալ ազդակներն առաջացնում են նաև բացասական հարստության ազդեցություններ: Ավելացված պետական ծախսերը պետք է ֆինանսավորվեն ավելի բարձր հարկերով ներկա ժամանակաշրջանում կամ ապագայում: Տնային տնտեսությունները, հետևաբար, նվազեցնում են իրենց սպառումը և ավելացնում են աշխատուժի առաջարկը, ուստի աշխատավարձերը նվազում են: Իսկ ինչ վերաբերվում է նոր քեյնսյան մոդելին, ապա ֆիսկալ ազդակները խթանում են համախառն պահանջարկը և աշխատուժի պահանջարկը, այնպես որ սպառումը և աշխատավարձերն աճում են: Այսպիսով, երկու տեսակետները կանխատեսում են աճող համախառն արդյունք՝ պայմանավորված կամ համախառն պահանջարկի կամ աշխատուժի առաջարկի ավելացմամբ: Այնուամենայնիվ, երկու մոդելների կողմից նախատեսված մասնավոր սպառմանը և աշխատավարձերին վերաբերվող տեսակետներն իրար հակասում են[16]:

Ընդհանրապես, տնտեսական աճի խթանմանը նպաստող հարկաբյուջետային քաղաքականության դերի վերաբերյալ քեյնսյան տեսակետը բազմաթիվ տնտեսագետների կողմից քննադատությունների է հանդիպել:

Նախ, պետական ծախսերի ավելացումը կամ հարկերի կրճատումը կարող են արտամղման էֆեկտի պատճառով բացասաբար անդրադառնալ արտադրության մակարդակի վրա: Պետության ծախսերի ավելացումը խոչընդոտում է տնային տնտեսություններին, որոնք ցանկանում են նույն ոլորտներում ներդրումներ իրականացնել: Բացի այդ, երբ կառավարությունը կրճատում է հարկերը կամ ավելացնում ծախսերը, հարկավոր է շուկայից փոխառու միջոցների հաշվին ծածկել հարկային կրճատումները: Այս փոխառությունները բացասաբար են անդրադառնում մասնավոր ներդրումների վրա, քանի որ այն տեղափոխում է ֆինանսական միջոցները մասնավոր հատվածից դեպի պետական, և դա զրկում է թե՛ տնային տնտեսություններին, թե՛ ֆիրմաներին՝ այդ միջոցներն օգտագործելու ներդրումներ

[15] Galí, J., López-Salido, J. D., and Vallés, J. (2007), "Understanding the effects of government spending on consumption", Journal of the European Economic Association, 5, pp. 230-235.
[16] Arestis, P. (2012). Fiscal Policy: A Strong Macroeconomic Role. Review of Keynesian Economics, 1(1), 93-108.

իրականացնելու կամ սպառելու համար[17]:

Հաջորդը վերաբերվում է պետական ծախսերի շարունակական ընդլայնմանը, որի արդյունքում այն դառնում է պակաս արդյունավետ և խոչընդոտում է տնտեսական աճը՝ այլ ոչ թե նպաստում դրան: Երբ կառավարությունը տրամադրում է մասնավոր ապրանքներ, ինչպիսիք են սննդամթերքը, ապա պատճառ չկա ենթադրելու, որ ապրանքների սպասարկումը կամ տեղաբաշխումն ավելի արդյունավետ կլինի, քան շուկայական հատվածի մատակարարարման ժամանակ: Երրորդ, մեծ հավանականություն կա որ մարդիկ կխնայեն պետության կողմից տրամադրված տրանսֆերտները, այլ ոչ թե կծախսեն ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու համար:

Եվ վերջում, հարկային քաղաքականության իրականացման մեջ առկա են ժամանակային երեք լագեր: Առաջին լագը խնդրի առաջացման և կառավարության կողմից այն ճանաչելու միջև ընկած ժամանակահատվածն է: Երկրորդն այն է, որ կառավարությանը որոշ ժամանակ է անհրաժեշտ ճիշտ որոշում կայացնելու համար: Եվ երրորդ, քաղաքականության իրականացման ազդեցությունը որոշակի ժամանակ է պահանջում: Այս ժամանակային լագերը դժվարացնում են կառավարությանը հարկաբյուջետային քաղաքականությունն օգտագործել որպես հակաճգնաժամային գործիք[18]:

Իսկ ինչ վերաբերվում է նեոդասական մոդելներին, որի պայմաններում գները և աշխատավարձերը ճկուն են, ապա աշխատողները կարող են հարմարեցնել իրենց սպասելիքներն այն մակարդակում, երբ իրական գները հավասար են սպասվող գներին, շուկայում առկա է կատարյալ մրցակցություն և լրիվ զբաղվածություն, և առաջարկի կորը կարճաժամակետ հատվածում ունի դրական թեքություն: Վերոնշյալ ենթադրությունների հիմնական ենթատեքստն այն է, որ նեոդասական տեսության կողմնակիցները չեն կարող ապավինել տնտեսության կայունացման համար հարկաբյուջետային քաղաքականությանը: Ըստ Լուկասի ո՛չ կարճաժամկետ և ո՛չ էլ երկարաժամկետ

[17] Spencer W. Roger, William P. Yohe, 1970, "The "Crowding Out" of Private Expenditures by Fiscal Policy Actionst", Federal Reserve Bank of St. Louis, pp.14-24

[18] Fanti L., (2003), "Fiscal policy and tax collection lags: stability, cycles and chaos", Università di Pisa, n. 15, pp. 11-20

հեռանկարում ակնկալվող ֆիսկալ քաղաքականությունը ոչ մի ազդեցություն չի ունենա տնտեսության վրա, սակայն, այնուամենայնիվ, անսպասելի ֆիսկալ քաղաքականությունն անկատար տեղեկատվության հետևանքով կարող է ազդել կարճաժամկետ տնտեսական աճի վրա: Այլ կերպ ասած, արտադրության մակարդակի տատանումները տեղի են ունենում առաջարկով պայմանավորված ցնցումների և ոչ թե համախառն պահանջարկի ցնցումների պատճառով[19]: Միաժամանակ, Պերոտտին նույնպես եզրակացնում է, որ հարկաբյուջետային ընդլայնումը բացասական հարստության էֆեկտ է դրսևորում ֆիզիկական անձանց վրա, քանի որ նրանք նվազեցնում են իրենց սպառումը և ավելացնում աշխատուժը, որպեսզի իրենց մշտական եկամտի բացասական ազդեցությանը հակակշիռ[20]:

Վերջապես ուշադրություն պետք է դարձնել նաև նոր քեյնսյան մոդելներին, որոնցում ավանդական քեյնսյան տեսությունը, սպասումները և իրական գործարար պարբերաշրջանների տեսությունները նույնպես ներառված են: Նոր քեյնսյան տնտեսագիտությունը ձգտում է քեյնսյան տնտեսության համար ապահովել միկրոտնտեսական հիմքեր: Նոր քեյնսյան մոտեցումը հիմնվում է երկու ենթադրությունների վրա: Առաջին, առանձին գործակալների վարքագիծն ունի խոստումնալից, ռացիոնալ ակնկալիքներ, որոնք իրականացվում են ծախսերի օպտիմալացման և խնայողությունների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում: Երկրորդ, ենթադրվում է, որ շուկայական ձախողումները կապված են ոչ ճկուն գների և աշխատավարձերի հետ, և որ նրանք անմիջապես չեն համակերպվում տնտեսական պայմանների փոփոխություններին[21]:

Այսպիսով, թվում է, թե տեսական բանավեճը չի կարողացել հասնել կոնսենսուսի՝ վերջնական էմպիրիկ ապացույցների բացակայության պատճառով, ինչն իր հերթին ավելի է մեծացնում հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ ուսումնասիրությունների արդիականությունն ու կարևորությունը:

---

[19] Lucas, R. (1975). "An Equilibrium Model of the Business Cycle". Journal of Political Economy, 83, pp. 1113-1120.

[20] Perotti, R. (2007). "In Search of the Transmission Mechanism of Fiscal policy". NBER Macroeconomics Annual, 22, p. 169.

[21] Shafik Hebous, 2009 "The Effects of Discretionary Fiscal Policy on Macroeconomic Aggregates: A Reappraisal", pp. 4-6

1.2 Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը մակրոտնտեսական ցուցանիշների վրա:

Վերջին տարիներին հարկաբյուջետային քաղաքականության փոփոխությունների մակրոտնտեսական ազդեցությունները կենտրոնական նշանակություն ունեն ամբողջ աշխարհում տնտեսական քաղաքականության մշակման ժամանակ: Նախկինում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցության վերաբերյալ հետազոտություններն ստվերված են եղել դրամավարկային քաղաքականության ազդեցության վերաբերյալ լայնածավալ գրականությամբ: Վերջերս, սակայն, պետական քաղաքական ասպարեզում և ակադեմիական շրջանակներում առաջացել են լայնածավալ փաստարկներ հարկաբյուջետային խթանման և ֆիսկալ կոնսոլիդացիայի հետևանքների արդյունավետության վերաբերյալ: Արդյունքում, հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ հետազոտությունները դարձել են արդիական: Ուստի, այս բաժնում ավելի մանրամասն կներկայացվի ֆիսկալ քաղաքականության մակրոտնտեսական հետևանքների վերաբերյալ տեսական էվոլուցիան և քաղաքականության արդյունավետությունը տնտեսական քաղաքականության մշակման ժամանակ:

Ինչպես արդեն նշել ենք՝ հարկաբյուջետային քաղաքականությունը կարող է կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցություն ունենալ տնտեսական գործունեության վրա: Միևնույն ժամանակ հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունները կարող են պայմանավորված լինել պահանջարկով կամ առաջարկով:

Հարկաբյուջետային քաղաքականության պահանջարկով պայմանավորված ազդեցությունները

Տեսական գրականությանն անդրադարձման համար նախընտրելի է վերլուծությունն սկսել քեյնսյան մոտեցումից: Ամենահայտնի քեյնսյան մոդելը ենթադրում է գների կոշտություն և ավելցուկային կարողություններ, այնպես որ ամբողջական արտադրության մակարդակը որոշվում է համախառն պահանջարկով: Այս մոդելում հարկաբյուջետային ընդլայնումն ունի բազմարկչային ազդեցություն համախառն պահանջարկի և արտադրանքի վրա: Քեյնսյան բազմարկիչը գերազանցում

է մեկը, այն աճում է ընթացիկ եկամտի նկատմամբ սպառման զգայունության հետ մեկտեղ, և դա ավելի մեծ է ծախսերի աճի ժամանակ, քան՝ հարկերի կրճատման: Եթե պետական ծախսերի աճը համապատասխանում է հարկերի աճին, արդյունքում առաջացող «բալանսավորված բյուջետային բազմարկիչը» մեկ է[22]:

Ընդհանրապես արտամղման էֆեկտի աստիճանն ազդում է ֆիսկալ բազմարկիչների չափի վրա, բայց չի փոխում դրանց նշանակությունը: Ստանդարտ IS-LM մոդելում մասնավոր ներդրումները հակադարձ կախվածություն ունեն տոկոսադրույքների նկատմամբ, և, հետևաբար, փոխառությունների միջոցով իրականացված հարկաբյուջետային ընդլայնումը կհանգեցնի տոկոսադրույքների բարձրացմանը, վերջինս էլ կնվազեցնի ներդրումները: Բարձր տոկոսադրույքները նպաստում են կապիտալի ներհոսքերին, որոնք արժևորում են փոխարժեքը և հանգեցնում արտաքին հաշվեկշռի վատթարացմանը ներքին պահանջարկի աճին զուգահեռ՝ պայմանավորված հարկաբյուջետային ընդլայնմամբ[23]:

Ընդհանրապես, տոկոսադրույքների և փոխարժեքի ազդեցությամբ առաջացող արտամղման էֆեկտը պայմանավորված է IS-LM մոդելի որոշակի առանձնահատկություններով[24].

- Արտամղման էֆեկտը հավանական է, որ կլինի ավելի մեծ, երբ ներդրումները բավականին զգայուն են տոկոսադրույքների նկատմամբ: Այնուամենայնիվ, եթե ներդրումներն աճող ֆունկցիա են ընթացիկ եկամտի նկատմամբ, ապա մուլտիպլիկատոր-աքսելերատոր մոդելները կարող են առաջացնել բավականին մեծ հարկաբյուջետային ազդեցություն, նույնիսկ եթե կա տոկոսադրույքներով պայմանավորված արտամղման էֆեկտ:
- Տոկոսադրույքով պայմանավորված արտամղման էֆեկտը հիմնված է այն ենթադրության վրա, որ փողի պահանջարկը ֆունկցիա է տոկոսադրույքից և եկամտից: Որքան պակաս զգայուն է դրամական պահանջարկը տոկոսադրույքի նկատմամբ, ապա

[22] Fazzari, Steven M., 1994, "Why Doubt the Effectiveness of Keynesian Fiscal Policy?", Journal of Post Keynesian Economics (Winter), pp. 235-238.
[23] Richard Hemming, Michael Kell, Selma Mahfouz, “The Effectiveness of Fiscal Policy in Stimulating Economic Activity—A Review of the Literature”, IMF Working Paper, December 2002, pp. 4-5.
[24] Auerbach, Alan J., and Laurence J. Kotlikoff, 1987, “Dynamic Fiscal Policy” (New York: Cambridge University Press). Pp. 88-91

այնքան այն ավելի զգայուն է եկամտի նկատմամբ, հետևաբար արտամղումն ավելի մեծ կլինի: Այնուամենայնիվ, ֆիսկալ ընդլայնման հետ կապված տոկոսադրույքների աճի միտումը կարող է փոխհատուցվել դրամավարկային քաղաքականության մեղմացման միջոցով:

- Բաց տնտեսությունում ֆիսկալ բազմարկիչների չափը հիմնականում կախված է նրանից, թե արդյո՞ք փոխարժեքը լողացող է, թե ֆիքսված: Լողացող փոխարժեքի պայմաններում կապիտալի ներհոսքերը, պայմանավորված ներքին բարձր շուկայական տոկոսադրույքներով, արժևորում են փոխարժեքը: Կապիտալի կատարյալ ճկունության պայմաններում տեղի է ունենում ամբողջական արտամղում, և, արդյունքում, հարկաբյուջետային քաղաքականությունը դառնում է անարդյունավետ: Ֆիքսված փոխարժեքի պայմաններում ֆիսկալ ընդլայնումը հանգեցնում է տոկոսադրույքների փոքր աճի, քան փակ տնտեսությունում, և կապիտալի կատարյալ ճկունության պայմաններում ֆիսկալ քաղաքականությունը շատ արդյունավետ է, քանի որ փողի առաջարկը կավելանա՝ կանխելով ներքին տոկոսադրույքների բարձրացումը (այսինքն, ներքին և արտաքին տոկոսադրույքները կմնան նույնը):

Արտամղման էֆեկտի աստիճանը նաև պայմանավորված է գների ճկունությամբ: Նոր քեյնսյան մոդելները ենթադրում են գնային ճկունություն, թեև անվանական ճկունությունը մնում է անփոփոխ այն դեպքում, եթե գներն ամբողջովին չեն կարգավորվում կատարյալ շուկաներում: Գների ճկունությունը, նույնիսկ եթե սահմանափակված է կարճաժամկետ կտրվածքով, կձգտի նվազեցնել ֆիսկալ մուլտիպլիկատորների կողմից կարգավորվող մակրոտնտեսական արժեքների մակարդակը, մասնավորապես՝ փոխարժեքի ռեժիմի ազդեցությունը սահմանափակելու համար: Փակ տնտեսության մեջ հարկաբյուջետային ընդլայնումը կհանգեցնի ավելի բարձր գների, որը կարճաժամկետ կտրվածքով համախառն պահանջարկի աճի մաս է կազմում՝ նպաստելով տոկոսադրույքների միջոցով առաջացող արտամղման էֆեկտի, որն առաջանում է՝ կապված գնային կոշտության հետ: Լողացող փոխարժեքով բաց տնտեսությունում արտամղման էֆեկտի չափը կախված է փոխարժեքի փոփոխությունների նկատմամբ ներքին գների արձագանքից: Մասնավորապես, եթե ներքին գները փոփոխվում են՝ պայմանավորված փոխարժեքով, ապա արտամղման

էֆեկտը կլինի ավելի ցածր, քան գների կոշտության ժամանակ, քանի որ փոխարժեքի արժևորումը կնվազեցնի գները: Ֆիքսված փոխարժեքի պայմաններում ընթացիկ հաշվեկշիռը վատթարանում է ի պատասխան գնաճային բարձրացումների՝ փոխարժեքի իրական գնահատման միջոցով, և այդ պարագայում արտամղման էֆեկտն ավելի կմեծանա, քան գների կոշտության պայմաններում[25]:

Տոկոսադրույքի, փոխարժեքի և գների փոփոխությունները կարող են լրացուցիչ արտամղման ազդեցություն ունենալ համախառն պահանջարկի վրա հարստության էֆեկտի միջոցով (այս հետևանքները հաճախ անվանում են Պիգուի էֆեկտ կամ իրական հավասարակշռության էֆեկտներ): Սա կլինի այն դեպքը, երբ սպառումը կախված է ընթացիկ ֆինանսական հարստությունից: Տոկոսադրույքների բարձրացումն ընդհանուր առմամբ կնվազեցնի ֆինանսական ակտիվների անվանական արժեքը, ինչպես նաև կհանգեցնի փոխարժեքի արժևորմանն արտարժութային ակտիվների դեպքում: Տնային տնտեսությունների և ֆիրմաների համար, որոնք չեն հանդիսանա պարտատերեր, այս հարստության էֆեկտները կխորացնեն վերը նշված տոկոսադրույքների և փոխարժեքների միջոցով պայմանավորված արտամղման ազդեցության չափը և հետագայում կնվազեցնեն ֆիսկալ մուլտիպլիկատորները[26]:

Միաժամանակ պետք է հաշվի առնել նաև հարկաբյուջետային քաղաքականության դինամիկ ազդեցությունները: Եթե արտամղման էֆեկտն ավելի երկար է տևում, քան հարկաբյուջետային ընդլայնման անմիջական ազդեցությունը, ապա կարճաժամկետ հատվածում հարկաբյուջետային մուլտիպլիկատորները կլինեն համեմատաբար մեծ, բայց հետո կնվազեն ժամանակի ընթացքում: Մասնավորապես, աշխատավարձ-գներ ցիկլը, որը որոշում է գների աճի արագությունն ի պատասխան ֆիսկալ ընդլայնման, կազդի կարճաժամկետ ֆիսկալ մուլտիպլիկատորների վրա[27]:

---

[25] Ball, Laurence, N. Gregory Mankiw, and David Romer, 1988, "The New Keynesian Economics and the Output-Inflation Tradeoff", Brookings Papers on Economic Activity: 1, Brookings Institution, pp. 4-16.

[26] Agenor, Pierre-Richard, and Peter J. Montiel, 1996, "Development Macroeconomics", (Princeton, New Jersey: Princeton University Press). p.126

[27] Auerbach, Alan J., and Laurence J. Kotlikoff, 1987, "Dynamic Fiscal Policy" (New York: Cambridge University Press), pp. 180-182

Հարկաբյուջետային քաղաքականության ոչ-քեյնսյան ազդեցությունները

Ինչպես հայտնի է, հարկաբյուջետային քաղաքականության ոչ-քեյնսյան ազդեցությունները հիմնականում ծագում են նոր դասական մոդելներից, որոնք վերաբերվում են քեյնսյան մոտեցման հայտնի թերություններին, մասնավորապես՝ միկրոտնտեսական հիմքերի բացակայությանը: Թեև նոր դասական մոդելները մեծ ուշադրություն են դարձնում հարկաբյուջետային քաղաքականության առաջարկով պայմանավորված ազդեցություններին, այստեղ նաև ներկայացվում են որոշ նոր դասական մոտեցումներ՝ պահանջարկով պայմանավորված հետևանքների վերաբերյալ:

Մասնավորապես, հարկաբյուջետային կոնսոլիդացիայի ընդլայնողական ազդեցության արդյունավետությունը կախված է նրանից, թե արդյո՞ք մասնավոր սպառման և/կամ մասնավոր ներդրումների պատասխանն այդ կոնսոլիդացիային կարող է փոխհատուցել քաղաքականության բացասական ազդեցությունը համախառն պահանջարկի և, հետևաբար՝ արտադրանքի ծավալի վրա, թե ոչ: Ֆիսկալ քաղաքականության հակացիկլային ծախսերը կարող են կրճատվել կամ նույնիսկ վերացվել, ակնկալվող բարենպաստ հետևանքների արդյունքում՝ ինչն ազդեցություն կունենա միջժամանակային խնայողությունների ընտրության միջոցով: Այսպիսով, ոչ քեյնսյան ազդեցությունները գրականության մեջ բնութագրվում են երկու ոչ իրարամերժ *սպառման և ներդրումային ուղիները* (ոչ իրարամերժ, քանի որ հարկաբյուջետային քաղաքականությունն ազդում է միաժամանակ մասնավոր սպառման և ներդրումների վրա)[28]:

Սպառման ուղղությունը

Սպառման ուղղությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ հարկաբյուջետային քաղաքականության կոնսոլիդացիան որոշակի պայմաններում կարող է ավելացնել մասնավոր սպառումը պոտենցիալ երեք հետևանքների պատճառով. պարզ ակնկալվող սպասումները, հարստության էֆեկտը և փոխարինման էֆեկտը: Ակնկալվող սպասումները բխում են ֆիսկալ կոնսոլիդացիայի արդյունքում սպառողների սպասելիքների բարելավումից, ինչն արդյունավետորեն նվազեցնում է

[28] Giavazzi, F. and M. Pagano (1996), "Non-Keynesian Effects of Fiscal Policy Changes: International Evidence and the Swedish Experience", Swedish Economic Policy Review, vol. 3(1), 67—103

ապագա հարկային պարտավորությունների անորոշությունը, և այդպիսով՝ սպառողներին թույլ է տալիս նվազեցնել իրենց նախազգուշական խնայողությունը: Բացառելով ապագայում ավելի ուժեղ և քայքայիչ ֆիսկալ կոնսոլիդացիայի անհրաժեշտությունը կամ գոնե նվազեցման հավանականությունը՝ զսպող հարկաբյուջետային քաղաքականությունը մեծացնում է ներկա տնօրինվող եկամտի արժեզրկված արժեքը (discounted value), ինչը հանգեցնում է մասնավոր սպառման ավելացմանը: Այս ակնկալվող ազդեցությունները կախված են ֆիսկալ ճնշման չափից և հաստատակամությունից, և անմիջականորեն կապված են նրա արժանահավատության հետ: Դրանք նաև լավագույնս կիրառվում են ֆիսկալ ճգնաժամի ժամանակ, որի դեպքում բյուջեի դեֆիցիտը և պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը մեծ են և աճում են արագ տեմպերով, նաև այն դեպքերում, երբ ուժեղ և կայուն հարկաբյուջետային ճշգրտումն ազդանշան է տալիս ֆիսկալ ռեժիմի փոփոխությանը և երկրի ֆիսկալ անհավասարակշռության լուծմանը[29]:

Հարստության էֆեկտն առաջանում է եկամտի աճից, որը պայմանավորված է տոկոսադրույքների անկումից, ինչը նույնպես մեծացնում է սպառողների ակտիվների շուկայական արժեքը և միաժամանակ խնայողությունների հնարավոր արժեքը՝ հանգեցնելով տնտեսություններին ավելացնել ընթացիկ սպառումը: Այս ազդեցությունը կախված է զսպող ֆիսկալ քաղաքականության և տոկոսադրույքների փոփոխության միջև հարաբերությունից[30]:

Պետք է նաև նշել, որ այս երկու էֆեկտների հետ մեկտեղ առկա է նաև սպառման նկատմամբ ֆիսկալ կոնսոլիդացիայի բացասական անմիջական ազդեցություն, որը կապված է ընթացիկ տնօրինվող եկամտի կրճատման հետ: Այսպիսով, ֆիսկալ կոնսոլիդացիան միայն հանգեցնում է մասնավոր սպառման ընդհանուր աճին, եթե դրական ակնկալվող սպասումներն ու հարստության էֆեկտները մշտական եկամտի վրա բավական մեծ են՝ գերազանցելու ընթացիկ եկամտի վրա ուղղակի բացասական այլ ազդեցությունները: Հաշվի առնելով ավելի բարձր մշտական եկամտի և ավելի ցածր

[29] Feldstein, M. (1982), "Government Deficits and Aggregate Demand", Journal of Monetary Economics, vol. 9(1), 1-20

[30] McDermott, C. and R. Wescott (1996), "An Empirical Analysis of Fiscal Adjustments", IMF Staff Papers, vol. 43(4), 725-730

ընթացիկ եկամտի միջև բացասական հարաբերակցությունը՝ վերջնական արդյունքը հստակորեն կախված է տնային տնտեսությունների այն հատվածից, որոնք չեն կարող ապահովել ապագա եկամուտներ փոխառությունների միջոցով, այսինքն, այն սահմանափակվում է սպառողների իրացվելիությամբ[31]: Այսպիսով, այս պարագայում ֆինանսական շուկաների արդյունավետությունը կարող է կարևոր պայման լինել ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականության համար:

Երրորդ ազդեցությունը փոխարինման էֆեկտն է, որը վերաբերվում է մասնավոր սպառման փոխարինմանը հանրային սպառմամբ: Եթե սպառողներն արժևորում են հանրային հատվածի կողմից մատուցվող սոցիալական ծառայությունները, ինչպիսիք են կրթությունը, առողջապահությունը, մշակութային կամ այլ ծառայությունները, նրանք, ամենայն հավանականությամբ, կբարձրացնեն այդ ծառայությունների նկատմամբ մասնավոր ծախսերը, երբ դրանք այլևս չեն տրամադրվի հանրային հատվածի կողմից: Այլ կերպ ասած, եթե պետական ծախսերն իրենցից ներկայացնում են ռեսուրսների արտահոսք տնային տնտեսությունների համար, պետական հատվածի կողմից ՀՆԱ-ի փոքր մասնաբաժնի կլանումը մասնավոր հատվածի համար ստեղծում է ընդլայնման մեծ հնարավորություն[32]:

Ներդրումների ուղղությունը

Ներդրումային ուղղությունը հիմնվում է այն վարկածի վրա, որ հաջողված հարկաբյուջետային քաղաքականությունը հանգեցնում է մասնավոր ներդրումների կայուն և մշտական աճի: Ընդլայնողական և զսպող հարկաբյուջետային քաղաքականությունների հիմնական տարբերությունը մասնավոր ներդրումների նկատմամբ ավելի ուժեղ արձագանքն է, որը «չափազանց վստահելի է, որպեսզի վերագրվի միայն ներսմղման էֆեկտին»: Այս արձագանքը սովորաբար բացատրվում է կամ պահանջարկի ուղղությամբ՝ պայմանավորված տոկոսադրույքների ազդեցությամբ, կամ առաջարկի ուղղությամբ՝ պայմանավորված աշխատաշուկայի ազդեցությամբ[33]:

---

[31] Coenen, G. and R. Straub (2005), "Does Government Spending Crowd in Private Consumption? Theory and Empirical Evidence for the Euro Area", European Central Bank, N. 513, pp. 5-11

[32] Giavazzi, F. and M. Pagano (1990), "Can Severe Fiscal Contractions Be Expansionary? Tales of Two Small European Countries", in O. Blanchard and S. Fischer (eds.), "NBER Macroeconomics Annual, 5", pp. 78-82

[33] Zaghini, A. (2001), "Fiscal Adjustments and Economic Performing: A Comparative Study", Applied Economics, vol. 33(5), pp. 615—616

Տոկոսադրույքի ազդեցությունը, որը վերագրում են որպես «արժանահավատության էֆեկտին», գործում է իրական տոկոսադրույքների իջեցման շնորհիվ, որը հանգեցնում է ռիսկայնության կրճատման, ինչը պայմանավորված է պետական պարտքի պահանջների կրճատմամբ՝ կապված ֆիսկալ կոնսոլիդացիայի հետ: Տոկոսադրույքների անկումը հետագայում կխթանի մասնավոր ներդրումների միջոցով համախառն պահանջարկի աճին: Այս ազդեցությունը, որն ամրապնդում է պոտենցիալ ներսմղման էֆեկտները, հստակորեն կախված է պետական ֆինանսների նախնական վիճակից և այն ավելի հավանական է, երբ ֆիսկալ կոնսոլիդացիայից առաջ պարտքի նկատմամբ ՀՆԱ-ի մակարդակը գերազանցում է որոշակի բարձր շեմը[34]:

Այսպիսով, առաջարկով պայմանավորված ազդեցությունը հիմնականում շեշտադրվում է մասնավոր ներդրումների աճի վրա՝ աշխատաշուկայի արդյունավետության մեծացման և տնտեսության ընդհանուր մրցունակության բարձրացման արդյունքում: Որոշ պայմանների առկայությամբ հարկաբյուջետային կոնսոլիդացիան նվազեցնում է արհմիությունների կողմից աշխատավարձի մակարդակի նկատմամբ պահանջները (կամ գործազրկության հավանականության բարձրացման, կամ գործազրկության համար տրվող ծախսերի մեծացման միջոցով), հետևաբար, նվազեցնում է իրական աշխատավարձերի ճնշումը՝ խթանելով զբաղվածության, ներդրումների և արտադրության աճը[35]: Այս ազդեցությունը շեշտում է ընթացիկ հարկաբյուջետային քաղաքականության բաղադրիչների դերը, քանի որ այն ենթադրում է հիմնականում պետական ծախսերի կրճատումներից ստացվող կոնսոլիդացիաները, մասնավորապես, պետական հատվածում աշխատավարձերի վճարները և սոցիալական ապահովագրության վճարումները, այլ ոչ թե հարկերի ավելացման հետ կապված լրացուցիչ եկամուտները, ինչն էլ հանգեցնում է մասնավոր ներդրումների ավելացմանը: Քանի որ նրանք ուղղակիորեն ազդում են աշխատաշուկայի վրա, ծախսերի կրճատումները հանգեցնում են շուկայական ճշգրտումների, որոնք նվազեցնում են միավոր աշխատուժի վճարը, ավելացնում շահույթը և ներդրումների աճը: Ակնհայտ է,

[34] Afonso, A. (2001), "Non-Keynesian Effects of Fiscal Policy in the EU-15", ISEG/UTL Working Paper 07/2001. Pp. 10-16

[35] Ardagna, S. (2007), "Fiscal Policy in Unionized Labor Markets", Journal of Economic Dynamics & Control, vol. 31, pp. 1498—1534

որ աշխատանքի շուկայի կառուցվածքը և աշխատաշուկայի ինստիտուտները կարող են կարևոր դեր խաղալ այդ ազդեցության զարգացման գործում[36]:

Ռացիոնալ սպասումները

Չնայած քեյնսյան դպրոցի որոշ ուղղություններ ընդունում են սպասումների դերը (օրինակ՝ սպառումը կյանքի ցիկլում/consumption in life cycle և մշտական եկամտի մոդելները), նրանք սովորաբար ապավինում են ադապտիվ սպասումներին: Համեմատության համար նշենք, որ ռացիոնալ սպասումները հակված են ապագա փոփոխությունների ճշգրտումների իրականացմանը, որոնք ավելի աստիճանական են առաջ բերվում՝ համեմատած ադապտիվ սպասումների: Այսպիսով, հարկաբյուջետային քաղաքականության երկարաժամկետ ազդեցությունները նույնիսկ կարճաժամկետ հատվածում կարևոր են, և այդ կապակցությամբ էական է ժամանակավոր և մշտական քաղաքականության փոփոխությունների միջև տարբերությունը: Օրինակ, երբ երկարաժամկետ ազդեցություն չունեցող ժամանակավոր հարկաբյուջետային ընդլայնումը չի ազդում սպասումների վրա, իսկ մշտական հարկաբյուջետային ընդլայնումը կարող է մեծացնել արտամղման էֆեկտն այնքանով, որքանով որ հարկաբյուջետային մուլտիպլիկատորները կփոքրանան, ապա տնային տնտեսություններն ու ֆիրմաներն ակնկալում են, որ տոկոսադրույքների սկզբնական աճը և փոխարժեքի արժևորումը կպահպանվեն և կդառնան ավելի մեծ[37]:

Ռիկարդյան համարժեքությունը

Հարկաբյուջետային քաղաքականության քեյնսյան մոտեցումը հիմնված է այն ենթադրության վրա, որ սպառումը կախված է ընթացիկ եկամտից: Եթե կան ռիկարդյան սպառողներ, այն իմաստով, որ նրանք հեռատես են և լիովին տեղյակ են պետական բյուջեի միջանկյալ սահմանափակումներից, ապա նրանք ակնկալում են, որ այսօրվա հարկի կրճատումը, որը ֆինանսավորվում է պետական պարտքի միջոցով, կհանգեցնի հարկերի բարձրացմանն ապագա ժամանակահատվածի համար: Հետևաբար, մշտական եկամուտն անփոփոխ է, և իրացվելիության սահմանափակումների ու

[36] Elva Bova, Christina Kolerus, and Sampawende J.-A. Tapsoba, 2014, "An Analysis of Fiscal Policy and the Labor Market", IMF Working Paper, WP/14/216, pp.3-22

[37] Krugman, Paul R., and Maurice Obstfeld, 2003, "International Economics: Theory and Policy", 6th ed. (Reading, Massachusetts: Addison-Wesley). pp 495-496

կապիտալի կատարյալ շուկաների բացակայության դեպքում սպառումը չի փոփոխվի: Այսպիսով, առկա է ռիկարդյան համարժեքություն հարկերի և պետական պարտքի միջև: Կատարյալ ռիկարդյան համարժեքությունը ենթադրում է, որ հարկերի կրճատման հետևանքով պետական խնայողությունների կրճատումը լիովին փոխհատուցվում է ավելի բարձր մասնավոր խնայողությամբ, և համախառն պահանջարկը չի փոփոխվում: Այս դեպքում ֆիսկալ բազմարկիչը զրոյական է[38]:

Ռիկարդյան համարժեքությունը տնտեսագիտական գրականության ուշադրության կենտրոնում է՝ պայմանավորված միանվագ հարկերի կրճատումների ազդեցությամբ պետական ծախսերի մակարդակի վրա: Համամասնական կամ պրոգրեսիվ հարկերի պարագայում հարկերի կրճատման հետևանքով առաջացող բացասական ազդեցությունները նույնպես պետք է ուսումնասիրվեն: Եթե հարկաբյուջետային ընդլայնումը լինում է պետական ծախսերի ավելացման միջոցով, ապա եկամտի վրա դրա ազդեցությունը կախված է այն բանից, թե ինչպես դա կվճարվի ապագայում: Պետական ծախսերի ժամանակավոր ավելացումը, որը հետագայում կփոխհատուցվի ապագա ծախսումների կրճատումներով, ազդեցություն չի ունենա եկամտի վրա: Այնուամենայնիվ, պետական ծախսերի աճը, որը ֆինանսավորվելու է ապագայում բարձր հարկերից, կհանգեցնի մշտական եկամտի և սպառման կրճատման և, հետևաբար՝ առաջացնելով բացասական հարկաբյուջետային բազմարկիչներ՝ չնայած ամբողջական արտադրանքի նվազման ճշգրիտ մակարդակը կախված կլինի պետական ծախսերի արդյունավետությունից[39]:

Կարևոր է նաև նշել, որ ռիկարդյան համարժեքությունը հիմնված է կոշտ ենթադրությունների վրա: Այսպիսով, կարճաժամկետ հատվածում՝ ոչ կատարյալ կանխատեսումների ժամանակ, մասամբ իրացվելիության սահմանափակումներից, թերարժեք կապիտալի շուկաներից և ապագա սերունդներին ներկա ֆինանսական բեռից ազատելու անշահախնդիր ձգտումները կարող են վերականգնել հարկաբյուջետային քաղաքականության և սպառման միջև ուժեղ կապ: Հետևաբար, ռիկարդյան համարժեքության գործնական նշանակությունը դառնում է խնդրահարույց,

[38] Barro, Robert J., 1974, "Are Government Bonds Net Wealth?" Journal of Political Economy, Vol. 82, pp. 1095-1117

[39] Seater, J. (1993), “Ricardian Equivalence”, Journal of Economic Literature, vol. 31, pp. 241-254

գոնե իր կատարյալ ձևով[40]:

Այնուամենայնիվ, արժե նշել, թե արդյո՞ք կան հանգամանքներ, որտեղ ռիկարդյան արձագանքն ավելի հավանական է: Օրինակ, եթե կառավարությունը պարտավորված է հարկաբյուջետային կանոնով, որը պահանջում է, որ հարկաբյուջետային ընդլայնումը պետք է վերադարձվի, ապա նույնիսկ այն անհատները, ովքեր չունեն երկարաժամկետ կանխատեսումներ, կարող են հարմարեցնել իրենց խնայողական վարքը, գոնե մասամբ նախապատրաստվելով ապագա հարկերի բարձրացմանը: Նույն պարագայում, երբ պետական պարտքի ներկա ուղին անկայուն է, և շուտով ակնկալվում է հարկերի ավելացմամբ նվազեցնել պարտքը, ապա կարող է լինել թվացյալ ռիկարդյան հավասարակշռություն հարկաբյուջետային ընդլայնման ժամանակ՝ նույնիսկ քեյնսյան տեսակետի շրջանակներում[41]: Այնուամենայնիվ, եթե երկարատև զարգացման կողմնակիցները վախենում են, որ պարտքը կմոնետարիզացվի, կամ մասնավոր խնայողությունները կսահմանվեն պետության կողմից, ապա հարկաբյուջետային քաղաքականությունը կարող է սահմանափակված լինել ռիկարդյան համարժեքության շրջանակներում, հատկապես երբ պարտքը կամ ծախսերը գերազանցում են որոշակի շեմային մակարդակները[42]:

Սպառման հարթեցումը (Consumption smoothing)

Այսպիսով, ռիկարդյան վարքագիծը սպառման հարթեցման հետևանք է՝ փոխհատուցելու ժամանակային և միջսերունդների փոխհատուցումը, որը ենթադրում է պետական պարտքի քաղաքականությունը: Սերունդների համընկնման մոդելները (Overlapping generations models) միաժամանակ նպաստում են սպառման հարթեցմանը՝ մեղմմանը: Այնուամենայնիվ, «անսահման» ապրող ընտանիքների և սերունդների համընկնման մոդելների քննադատությունն այն է, որ նրանք չեն կարող բավարար կերպով բացատրել մասնակի սպառման հարթեցման ավելի իրատեսական դեպք:

[40] Barsky, Robert B., N. Gregory Mankiw, and Stephen P. Zeldes, 1986, "Ricardian Consumers with Keynesian Propensities," American Economic Review, Vol. 76 (September), pp. 676-691.
[41] Sutherland, Alan, 1997, "Fiscal Crises and Aggregate Demand: Can High Public Debt Reverse the Effects of Fiscal Policy?" Journal of Public Economics, Vol. 65 (August), pp. 147-62.
[42] Bertola, Giuseppe, and Allan Drazen, 1993, 'Trigger Points and Budget Cuts: Explaining the Effects of Fiscal Austerity," American Economic Review, VoL 83 (March), pp. 11-26.

Այսպիսով, Մենքյուն զարգացնում է խնայող-սպառողների մոդել (saversspenders model), որի մեջ ոչ միայն սպառման հարթեցումն է պակաս կատարյալ, այլև շատ մարդիկ կունենան ավելի պակաս զուտ հարստություն, իսկ ժառանգությունները կարևոր ազդեցություն են ունենում հարստության կուտակման վրա[43]:

Հարկաբյուջետային քաղաքականության առաջարկով պայմանավորված ազդեցությունները

Հարկաբյուջետային քաղաքականության տնտեսության կայունացնող դերի վերլուծությունն ավանդաբար կենտրոնանում է պահանջարկով պայմանավորված ազդեցությունների վրա, մինչդեռ առաջարկով պայմանավորված ազդեցություններն ավելի կարևոր են երկարաժամկետ հեռանկարում: Այնուամենայնիվ, պահանջարկի կարճաժամկետ և առաջարկի երկարաժամկետ ազդեցությունների միջև տարբերությունը չի կարող այդքան պարզ լինել: Եթե տնտեսությունը լիարժեքորեն գործում է և արտադրողական կարողությունները չեն կարող ավելանալ կարճաժամկետ հատվածում, հարկաբյուջետային ընդլայնման ազդեցությունը (որը կարող է իրականացվել սխալ կանխատեսմամբ՝ լրացուցիչ կարողության կամ քաղաքական նկատառումներով պայմանավորված) ամբողջությամբ կարտամղվի: Միայն այն քաղաքականությունները, որոնք աջակցում են առաջարկի պատասխանին, կարող են այն ուղղել հզորությունների սահմանափակումներին, և դրանց ազդեցությունը հիմնականում երկարատև է: Այնուամենայնիվ, հարկաբյուջետային քաղաքականության առաջարկով պայմանավորված ազդեցությունները կարող են ունենալ պահանջարկի կարճաժամկետ հետևանքներ, քանի որ ակնկալվում է, որ երկարաժամկետ աճը կլինի բարձր: Եթե հարկաբյուջետային ընդլայնումը փոխանցվում է հարկերի կրճատման և ծախսերի ավելացման արդյունքում, որոնք առաջարկի համար դրական են, ապա այն հակված է մեծացնել ֆիսկալ մուլտիպլիկատորները[44]:

[43] Mankiw, Gregory N., 2000, "The Savers-Spenders Theory of Fiscal Policy," American Economic Review, Vol. 90 (May), pp. 120-125.

[44] Evans, George, 1985, "Bottlenecks and the Phillips Curve: A Disaggregated Keynesian Model of Inflation, Output, and Unemployment," Economic Journal, Vol. 95 (June), pp. 345-357.

Հարկերը, պետական ծախսերը և տնտեսական աճը

Հարկաբյուջետային քաղաքականության կարճաժամկետ ազդեցությունը գնահատելիս պետք է ուշադրություն դարձնել այն փաստին, թե եկամտային հարկի ինչպիսի՞ փոփոխություններն են ազդում աշխատանքի առաջարկի վրա և կապիտալի հարկման ինչպիսի՞ փոփոխություններն են ազդում խնայողությունների և ներդրումների վրա: Սակայն, վերջնական վերլուծության մեջ, հարկային փոփոխությունների ազդեցությունն աշխատուժի և կապիտալի առաջարկի և, հետևաբար, տնտեսական աճի վրա էմպիրիկ հարց է համարվում, որի վերաբերյալ դեռևս պետք է հստակ եզրակացություններ իրականացնել: Պետք է նաև ուշադրություն դարձնել, թե ծախսերի ինչպիսի՞ փոփոխություններն են ազդում աշխատուժի և կապիտալի արտադրողականության վրա: Մասնավորապես՝ հանրային բարիքների և այլ բարիքների վրա պետական ծախսերի դրական արտաքին ազդեցությունները և նպանատիպ ծախսերի կրճատումը, որոնք բացասական արտաքին ազդեցություններ ունեն, քանի որ չեն համապատասխանում այդ հատկանիշներին, կարող են հանգեցնել բարձր տնտեսական աճի: Սա ցույց է տրված այն մոդելներում, որտեղ կառավարությունը ներդնում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ մարդկային կապիտալում[45]:

Նոր դասական մոդելներ: Նոր դասական մոդելների տարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ գները «մաքրում» են շուկաները, այնպես որ ամբողջական արդյունքի տատանումները պայմանավորված են առաջարկի շոկերով և ոչ թե ամբողջական պահանջարկի փոփոխությամբ: Նոր դասական մոդելների եզրահանգումներից մեկում ընդգծվում է, որ ամբողջական պահանջարկի փոփոխությամբ (բայց ոչ առաջարկի) կանխատեսվող քաղաքականությունները տնտեսական աճի վրա ոչ մի ազդեցություն չեն ունենում՝ ո՛չ կարճաժամկետ հատվածում, ո՛չ էլ երկարաժամկետում:[46] Միայն անսպասելի ֆիսկալ քաղաքականությունը, որն արտացոլում է տնտեսվարող սուբյեկտների ոչ լիակատար տեղեկացվածության անակնկալները, կունենա ազդեցություն, որն ամբողջությամբ

[45] Murphy, Kevin M, Andrei Shleifer, and Robert W. Vishny, 1989, "Industrialization and the Big Push," Journal of Political Economy, Vol. 97, pp. 1003-1026.

[46] Lucas, Robert E., 1975, "An Equilibrium Model of the Business Cycle," Journal of Political Economy, Vol. 83, pp, 1113-1144.

առաջանում է առաջարկի միջոցով: Սա չի նշանակում, որ այս մոդելներն անտարբեր են հարկաբյուջետային քաղաքականության նկատմամբ: Այնուամենայնիվ, նրանք կենտրոնանում են օպտիմալ հարկաբյուջետային քաղաքականության ձևավորման վրա[47]:

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալ տեսական ուսումնասիրությունները, կարող ենք եզրակացնել, որ հարկաբյուջետային քաղաքականության մակրոտնտեսական ազդեցությունների վերաբերյալ տեսական գրականության վերլուծությունն ընդգրկում է պարզ քեյնսյան մոդելը, փակ և բաց տնտեսության IS-LM մոդելները, ռացիոնալ սպասումներ պարունակող պահանջարկի մոդելները, ռիկարդյան համարժեքության տեսությունը, տոկոսադրույքների արժանահավատություն ու անորոշություն և առաջարկով պայմանավորված (ներառյալ նոր դասական) մոդելները: Այս ուսումնասիրություններից ենթադրում ենք, որ հարկաբյուջետային մուլտիպլիկա-տորները հակված են լինել դրական և, հնարավոր է բավականին մեծ, երբ՝

- Տնտեսությունում առկա են ավելցուկային հզորություններ և տնային տնտեսություններն ունեն սահմանափակ ժամանակային հորիզոններ կամ սահմանափակված են իրացվելիությամբ,
- պետական ծախսերի ավելացումը չպետք է փոխարինի մասնավոր ծախսերին, քանի որ այն պետք է նպաստի աշխատուժի և կապիտալի արտադրողականության բարձրացմանը, իսկ հարկերի ցածր մակարդակը մեծացնում է աշխատուժի առաջարկը և/կամ նպաստում ներդրումների ավելացմանը:
- պետական պարտքը պետք է պահպանվի ցածր և կառավարելի մակարդակի սահմաններում, և կառավարությունը չպետք է բախվի ֆինանսավորման խոչընդոտների հետ:
- միևնույն ժամանակ, պետք է առկա լինի ուղեկցող դրամավարկային ընդլայնում՝ սահմանափակ գնաճային հետևանքներով:

[47] Chari, V.V., and Patrick J. Kehoe, 1998, "Optimal Fiscal and Monetary Policy," Federal Reserve Bank of Minneapolis, Research Department Staff Report No. 251, pp.24-44

1.3 Հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության գնահատումը

Մեծ դեպրեսիայից և երկրորդ համաշխարհային պատերազմից, ինչպես նաև քեյնսյան հեղափոխության հաղթանակից հետո մակրոտնտեսագիտությունը նոր ժամանակաշրջան է թևակոխում և ընդլայնում է տեսական գիտելիքները Լեոն Վալրասի մոդելի կիրառման միջոցով, ով առաջինը փորձեց ստեղծել տեսական մոդելներ, որոնք կներառեին իրական տնտեսության բազմաթիվ ասպեկտները: Վալրասը նեոդասական դպրոցի կամ ընդհանուր հավասարակշռության մոդելի հետևորդ էր, որը բազմաթիվ տեսություններ էր ընդգրկում, ընդհուպ մինչև Քեյնսի և մոնետարիստների գործարար պարբերաշրջանները: Հետագայում, օգտագործելով Քեյնսի գլխավոր տեսության գաղափարները և հաշվի առնելով հասարակության շրջանակներում առկա տնտեսական մեծ արձագանքը, Նոբելյան մրցանակի դափնեկիր Ջոն Հիքսը մշակել է հայտնի IS-LM մոդելը որպես մակրոտնտեսական վերլուծության համար ընդհանուր շրջանակ՝ փակ տնտեսության մեջ: Այս մոդելի անունը գալիս է հավասարակշռության երկու հիմնական պայմաններից. ներդրումները՝ I, պետք է հավասար լինեն խնայողություններին՝ S, և որ փողի պահանջարկը՝ L, պետք է լինի հավասար փողի առաջարկին՝ M[48]:

Հիքսից հետո տնտեսագետների մի քանի սերունդներ աշխատել են IS-LM մոդելի բարելավման համար, և այն լայնորեն կիրառվել է պարբերաշրջանային տատանումների և մակրոտնտեսական քաղաքականության վերլուծության ու կանխատեսումների մեջ: Հիմքում ունենալով քեյնսյան տեսությունը՝ այդ մոդելը հարմարվողական բնույթի պատճառով կարող է օգտագործվել նաև պարբերաշրջանային վերլուծության դասական մոտեցումը ներկայացնելու և քննարկելու համար: Այս մոդելը համարժեք է AD-AS մոդելին, միայն նշանակալի տարբերությամբ, այն է՝ IS-LM մոդելը հաշվի է առնում իրական տոկոսադրույքների և արտադրության մակարդակի հարաբերությունները, մինչդեռ AD-AS մոդելն իր վերլուծությունների մեջ ուսումնասիրում է գների և արտադրության մակարդակի միջև փոխհարաբերությունները: Այդ պատճառով IS-LM

[48] Patinkin, D., 1982. "Anticipations of the General Theory and other essays on Keynes", Chicago: University of Chicago Press, pp.189-223

մոդելի միջոցով արդյունավետ է վերլուծել տարբեր ցնցումների հետևանքներն իրական տոկոսադրույքների և այնպիսի փոփոխականների ուսումնասիրության համար, ինչպիսիք են խնայողությունները և ներդրումները, մինչդեռ AD-AS մոդելն ավելի կիրառելի է գնային շոկերի և ինֆլյացիայի ժամանակ: Բաց տնտեսության մեջ հարկաբյուջետային քաղաքականության հիմնական տեսական և գիտական ասպեկտները ներկայացվում են Մանդել-Ֆլեմինգի մոդելի միջոցով, որը մշակվել է 1960-ականների սկզբին և որը լրացնում է IS-LM մոդելը: Մոդելը տարբերակում է ճկուն ու ֆիքսված փոխարժեքները, նկարագրում է կարճաժամկետ հատվածը և ենթադրում է հաստատուն գներ[49]: Հետագա շարադրանքում IS-LM մոդելը կօգտագործվի՝ ներկայացնելու հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը տնտեսագիտական տարբեր դպրոցների տեսանկյունից:

Հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը հաճախ գնահատվում է ընդլայնողական ֆիսկալ քաղաքականության համատեքստում: Ֆիսկալ քաղաքականության միջոցառումները համարվում են արդյունավետ, եթե բազմարկիչը՝ կապված ֆիսկալ ընդլայման հետ, դրական է և բավականին մեծ: Համաձայն քեյնսյան մոտեցման, դիսկրեցիոն հարկաբյուջետային քաղաքականությունն անմիջական ազդեցություն ունի ընթացիկ եկամտի վրա ըստ հետևյալ ենթադրությունների՝ գների կոշտություն, լրացուցիչ հնարավորություններ, իրացվելիությամբ սահմանափակված տնային տնտեսություններ և ֆիրմաներ: Ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականության փոփոխությունների ազդեցությունը և արտամղման աստիճանը լավ է նկարագրված ստանդարտ IS-LM մոդելի միջոցով: Իսկ ինչ վերաբերվում է ֆիսկալ քաղաքականության ոչ քեյնսյան հետևանքներին, ապա դրանք տեսականորեն հիմնավորված են նոր դասական տեսության մեջ՝ առաջարկով պայմանավորված մոդելներով, ռացիոնալ սպասումներով և ռիկարդյան համարժեքության թեորեմով (վերջիններին անդրադարձ կատարվել է նախորդ բաժնում)[50]:

Համաձայն IS-LM մոդելի, ֆիսկալ դեֆիցիտի ազդեցությունը տնտեսական

[49] Stevan Gaber, Ilija Gruevski, Vasilka Gaber, "The effects of discretionary fiscal policy on macroeconomic aggregates", Business and Economic Horizons, 2013, pp. 32-39

[50] Capet S., 2004 "The Efficiency of Fiscal Policies: A Survey of the Literature", CEPII, Working Paper No–11. pp.6-7

գործունեության վրա կախված է տոկոսադրույքի մակարդակի նկատմամբ ներդրումների և դրամական պահանջարկի զգայունությունից: Տոկոսադրույքի մակարդակի նկատմամբ առավել զգայուն ներդրումների և պակաս զգայուն դրամական պահանջարկի պարագայում, արտամղման էֆֆեկտն ավելի մեծ է լինում: Բաց տնտեսության մեջ (Մանդելլ-Ֆլեմինգի մոդելը) հարկաբյուջետային քաղաքականությունն անարդյունավետ է դառնում, երբ փոխարժեքը և կապիտալն ամբողջովին ճկուն են: Բարձր տոկոսադրույքները նպաստում են կապիտալի ներհոսքերի, որոնք արժևորում են փոխարժեքը: Ֆիքսված փոխարժեքով հարկաբյուջետային քաղաքականությունն ավելի արդյունավետ է, քանի որ դրամական պաշարները մեծանում են, որպեսզի տոկոսադրույքը պահպանի իր նախաշոկային մակարդակը[51]:

Ինչպես արդեն հայտնի է, 2008 թ. Ֆինանսական ճգնաժամը և դրան ուղեկցող տնտեսական անկումը բազմաթիվ երկրների կառավարությունների կողմից հարկաբյուջետային քաղաքականության խթանների լայն տարածման հանգեցրեց: 2008 թվականի երրորդ եռամսյակի վերջում համախառն պահանջարկի աննախադեպ անկում արձանագրած կառավարությունները դիմել են արտակարգ հարկային կրճատումների, նպատակային սուբսիդիաների և ավելացրել են պետական ծախսերը՝ աջակցելու համախառն պահանջարկի և ազատ տնտեսական գոտիների գործունեությանը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ ենք համարում ուսումնասիրությունները կենտրոնացնել հարկաբյուջետային քաղաքականության կարճաժամկետ և միջնաժամկետ արդյունավետության վերլուծության վրա: Գծապատկեր 1.3.1-ում ներկայացվում է այն փաստը, որ հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության գնահատման հարցը երկու քայլ է պարունակում. առաջինը կապված է ֆիսկալ քաղաքականության ազդեցության հետ ամբողջական պահանջարկի վրա, իսկ երկրորդը քայլը վերաբերվում է ամբողջական պահանջարկի ազդեցությանն իրական տնտեսության վրա:

[51] James M. Boughton, "On the Origins of the Fleming-Mundell Model", IMF working paper, June 2002, pp.2-5

Գծապատկեր 1.3.1 *Ֆիսկալ քաղաքականության արդյունավետության վերաբերյալ բանավեճը*[52]*:*



Ֆիսկալ քաղաքականության արդյունավետության վերաբերյալ մոտեցումների գնահատման հիմնական դժվարությունը հենց խնդրի բարդությունն է: Հարկաբյուջետային քաղաքականության վերլուծության առաջին դժվարությունը կախված է պետության տնտեսական բնութագրերից, որտեղ իրականացվում է ֆիսկալ քաղաքականությունը: Դա թե՛ մակրոտնտեսական, և թե՛ միկրոտնտեսական ուսումնասիրությունները դարձնում է արդիական: Երկրորդ դժվարությունը, կապված հարկաբյուջետային քաղաքականության վերլուծության հետ, կախված է ժամանակային շրջանակներից. երկարաժամկետ վերլուծություններն իրենցից ներկայացնում են

[52] Palley Thomas I., 2012 "Keynesian, Classical and New Keynesian Approaches to Fiscal Policy: Comparison and Critique", New America Foundation, Washington DC, p.3

լրացուցիչ բարդություններ՝ կապված փոփոխվող իրական և ֆինանսական ակտիվների արժեքների անկայունության հետ: Այս բարդությունները պահանջում են որոշ տեսական նախապատրաստական միջոցառումներ՝ քննարկելու և դրանց շրջանակները սահմանելու համար:

Ինչպես արդեն նշել ենք, դասական մակրոտնտեսագիտությունը տնտեսությունը բնութագրում է որպես լրիվ զբաղվածության և առանց լրացուցիչ տնտեսական հզորությունների պայմաններում: Արտադրության մակարդակը (Y) հավասար է պոտենցիալ արտադրանքին (Y*), իսկ պահանջարկն (D) առաջարկի հետ բերվում է հավասարակշռության անվանական աշխատավարձի, գների և տոկոսադրույքների հետ ճշգրտման համադրությամբ, (իրական և անվանական), ուստի՝ Y=Y*=D: Իսկ քեյնսյան տնտեսագիտությունը տնտեսությունը նկարագրում է, որպես լրիվ զբաղվածության մակարդակից ցածր և ժամանակի մեծ մասի համար լրացուցիչ տնտեսական կարողությամբ: Արտադրությունը հավասար է պահանջարկին, որը կարող է զգալիորեն պակաս լինել պոտենցիալ արտադրությունից, ուստի՝ Y=D<Y*:

Միաժամանակ, հայտնի է, որ 1970-ական թվականներին տնտեսագիտության մեջ գերիշխող նոր դասական ուղղությունը դասական մակրոտնտեսագիտության հստակեցումն էր, որը ներառում է տնտեսական անորոշությունը և ռացիոնալ սպասումները: Տնտեսությունը ներկայացված է որպես պոտենցիալ արտադրանքի մակարդակի վրա հիմնված համակարգ, եթե չլինեն չթույլատրված տատանումները և քաղաքական ցնցումները: Այնուամենայնիվ, նոր դասական մակրոտնտեսագիտության հիմնարար եզրակացությունները հիմնականում դասական մակրոտնտեսության գաղափարների շարունակությունն են: Իրոք, նոր դասական մոդելը համապատասխանում է դասական մոդելի կատարյալ կանխատեսման պայմաններին: Այդ պատճառով, երբ խոսքը վերաբերվում է հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության վերաբերյալ քննարկումներին, ապա դասական և նոր դասական մոդելները կարող են ըստ էության դիտարկվել որպես նույնը:

Այսպիսով, ատենախոսության այս բաժնում ուսումնասիրվում է հարկաբյուջետային քաղաքականության կարճաժամկետ արդյունավետությունը տնտեսագիտական տարբեր դպրոցների մոտեցումների շրջանակներում: Միկրոտնտեսական

փաստարկների կոնֆլիկտներից և բարդություններից խուսափելու համար ուսումնասիրությունը ներառում է միայն միանվագ հարկերը և պետական գնումները չեն ազդում համախառն արտադրական ֆունկցիայի վրա: Այս ենթադրությունները հնարավորություն են տալիս ուշադրություն դարձնել ֆիսկալ քաղաքականության բանավեճի այնպիսի ասպեկտներին, որոնք վերաբերվում են քաղաքականության ազդեցությանը AD-ի վրա, և AD-ի ազդեցությանն արտադրության վրա: Թեև մակրոտնտեսական հեռանկարները տարբերվում են հարկաբյուջետային քաղաքականության գնահատման մեջ, սակայն, նրանք կիսում են երկու հիմնավորումներ, որոնք վերաբերվում են AD-ի վրա ազդեցությանը[53].

1. Մակրոտնտեսագիտական բոլոր մոտեցումների տեսանկյուններից մոնետար ֆինանսավորվող հարկաբյուջետային քաղաքականությունն առնվազն միշտ ավելի հզոր է AD-ի նկատմամբ, քան պարտատոմսերի միջոցով ֆինանսավորվող հարկաբյուջետային քաղաքականությունը: Մոնետար ֆինանսավորման քաղաքականությամբ հանրությունը ստանում է լրացուցիչ գումար: Պարտատոմսերի միջոցով ֆինանսավորվող քաղաքականությամբ հանրությունը ստանում է լրացուցիչ պարտատոմսերի քանակ: Լրացուցիչ դրամական միջոցներն ավելի ընդլայնողական ազդեցություն են ունենում, քանի որ մարդիկ այն կարող են ուղղակիորեն ուղղել դրամավարկային լծակներով: Փոխարենը պարտատոմսերը պետք է փոխանակվեն դրամով մինչև դրանք կարող են ֆինանսավորել սպառումը կամ այլ ակտիվների գնումները, որոնք կարող են բարձրացնել պարտատոմսերի տոկոսադրույքները:

2. Բոլոր տեսանկյուններից պետական ծախսերն ավելի հզոր են AD-ի նկատմամբ, քան հարկերի կրճատման վրա հիմնված հարկաբյուջետային քաղաքականությունը: Դա պայմանավորված է նրանով, որ պետական ծախսերի յուրաքանչյուր միավորն ավելացնում է AD-ի ամբողջական միավորը, մինչդեռ հարկերի կրճատումն աշխատում է սպառողական ծախսերի ֆիլտրի միջոցով, և որոշ դեպքերում կրճատումները կարող են պահպանվել:

[53] Palley, T. I., "Optimal monetary policy in the presence of a monetarist transmission mechanism", Economics Letters, 55 (1997), 109-114.

Նեոքեյնսյան մոդելը

Վերլուծության մեկնարկային կետն է նեոքեյնսյան IS-LM մոդելը, որը, թեև քննադատված է բոլոր առումներով, սակայն մնում է կամուրջ տնտեսագիտական բոլոր դպրոցների տեսակետների միջև:

Այդ իսկ պատճառով այս բաժնում տեսական տարբեր մոտեցումների տեսակետները ներկայացվում են հենց այս մոդելի շրջանակներում: Գծապակեր 1.3.2-ը ցույց է տալիս IS-LM և AD-AS կորերը նեոքեյնսյան մեդելի ժամանակ: Պարտատոմսերի միջոցով ֆինանսավորվող հարկային կրճատումները IS կորը տեղաշարժում են ձախ, իսկ AD կորը՝ աջ, քանի որ հարկերի կրճատումներն ավելացնում են ամբողջական պահանջարկը՝ դրականորեն ազդելով սպառման, ներդրումների վրա, ինչպես և պետք է լիներ պարտատոմսերի ֆինանսավորման միջոցով առաջացող հարստության էֆեկտի ազդեցության ժամանակ: Այս ամենի արդյունքում տոկոսադրույքի և գների մակարդակները բարձրանում են ($\Delta y>0$, $\Delta i>0$, $\Delta p>0$): Տոկոսադրույքի բարձրացումը նվազեցնում է հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը և գտնվում է ֆինանսական արտամղման էֆեկտի վերաբերյալ բանավեճերի հիմքում[54]: Ինչպես հայտնի է, այս պարագայում հաշվի առնելով ֆիքսված անվանական աշխատավարձի նեոքեյնսյան ենթադրությունը՝ ապա իրական աշխատավարձը նվազում է ($\Delta w=0$, $\Delta(w/p<0)$: Հիմք ընդունելով վերոնշյալ երկրորդ հիմնավորումը, ապա այս բոլոր ազդեցություններն ավելի մեծ են լինում, եթե հարկաբյուջետային քաղաքականությունը տեղի է ունենում պարտատոմսերի թողարկման միջոցով իրականացվող պետական ծախսերով, քանի որ այս քաղաքականությունն առաջացնում է IS և AD կորերի ավելի մեծ տեղաշարժեր[55]: Միաժամանակ, տնտեսական քաղաքականության ֆինանսավորման մյուս ուղղությունը, որի միջոցով նույնպես փորձում ենք վերլուծել հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը տնտեսագիտական տարբեր դպրոցների տեսակետների շրջանակներում, դա մենետար լծակներով ֆինանսավորվող քաղաքականությունն է:

---

[54] Tobin, J. and W.H. Buiter, "Long run effects of fiscal and monetary policy on aggregate demand," in J.L. Stein (ed.), Monetarism, Amsterdam: North Holland, 1976. pp.2-4

[55] Andrzej Rzońca and Piotr Ciżkowicz, "Non-keynesian effects of fiscal contraction in new member states", 2005, European Central Bank. pp. 7-10

Գծապատկեր 1.3.2 *IS-LM և AD-AS կորերը նեոքեյնսյան մոդելի ժամանակ*[56]



Այսպիսով, եթե հարկաբյուջետային քաղաքականությունը ֆինանսավորվում է փողի առաջարկի միջոցով՝ մոնետար լծակներով, ապա, այս պարագայում LM կորը նույնպես կտեղաշարժվի ձախ: Հաշվի առնելով վերոնշյալ առաջին հիմնավորումը՝ AD-ի վրա ազդեցությունն ավելի մեծ է, միաժամանակ ամբողջական արդյունքի և գնի մակարդակներն ավելի կբարձրանան, իսկ իրական աշխատավարձն ավելի շատ կնվազի: Այնուամենայնիվ, այս քաղաքականության ժամանակ, տոկոսադրույքը բարձրանում է ավելի քիչ և որոշ դեպքերում նույնիսկ կարող է նվազել:

Այս վերլուծություններին զուգահեռ անհրաժեշտ է վերհիշել նաև Նեո ռիկարդյան հիպոթեզի մասին, որը տնային տնտեսությունների վարքագծի մասին միկրոտնտեսական տեսություն է, ինչը նշանակում է, որ այն կարող է տեղ գտնել նաև քեյնսյան մակրո մոդելներում[57]: Այնուամենայնիվ, դա միայն կարևոր է պարտատոմսերով ֆինանսավորվող հարկաբյուջետային քաղաքականության ժամանակ, իսկ փողի առաջարկի միջոցով ֆինանսավորվող ֆիսկալ քաղաքականության հետևանքներն անփոփոխ են: Այս դեպքում, պարտատոմսերի միջոցով ֆինանսավորվող հարկային կրճատումներն այժմ չեն ազդում IS-ի կամ AD-ի

[56] Palley Thomas I., 2012 "Keynesian, Classical and New Keynesian Approaches to Fiscal Policy: Comparison and Critique", New America Foundation, Washington DC, p. 14
[57] Barro, R.J., "Are government bonds net wealth?" Journal of Political Economy, (1974), pp. 1095 – 1117.

կորերի վրա, քանի որ տնային տնտեսությունները խնայում են հարկերի կրճատումների արդյունքում առաջացած լրացուցիչ եկամուտները՝ ապագա հարկային աճի ակնկալիքով պետական պարտքի ծախսերը վճարելու համար:

Հետքեյնսյան մակրոտնտեսական մոդելները

Հաջորդ ուղղությունը, որին անդրադարձ է կատարվել հետքեյնսյան մոդելներն են: Հետքեյնսականները մտահոգված են եղել ոչ միայն կայուն դինամիկ հավասարակշռության ուղիների հայտնաբերմամբ, այլ նաև հատուկ ուշադրություն են դարձրել հարկաբյուջետային քաղաքականության միջոցով իրականացվող սոցիալական քաղաքականությանը, առկա թերություններին: Մասնավորապես, խոսքը գնում է եկամուտների վերաբաշխման անհավասարության հիմնախնդիրն:

Այսպիսով, գծապատկեր 1.3.3-ը ցույց է տալիս հետքեյնսյան մակրոտնտեսական մոդելների համար IS-LM և AD-AS կորերը: Այս գծապատկերը ներկայացնում է հետքեյնսյան ուղղության գաղափարների հիմնական կանխատեսումները, չնայած, որ հիմքում ընկած միկրոտնտեսական տրամաբանությունն այլ է: Հետքեյնսականները բացատրում են ուղղահայաց LM կորը Էնդոգեն փոխառու միջոցների տեսանկյունից, մինչդեռ նոր քեյնսականները ռացիոնալացնում են այն դրամավարկային քաղաքականություն իրականացնող կառույցի առումով, որն ընտրում է անվանական տոկոսադրույքի նպատակային գործող մակարդակը[58]: Եթե դրամավարկային քաղաքականություն համար պատասխանատու մարմինն իրականացնում է այպես ասած «քամու դեմ գնացող» տոկոսադրույքների ռեակցիայի ֆունկցիա, ապա, այս պարագայում, LM-ը դրական թեքություն կունենա: Բացի դրանից հետքեյնսականները նաև պնդում են, որ ամբողջական պահանջարկի կորը կարող է գների նկատմամբ դրական թեքություն ունենալ[59]:

Այսպիսով, այս մոդելի շրջանակներում LM կորն ուղղահայաց է՝ արտացոլելով այն փաստը, որ կենտրոնական բանկերը մշտապես սահմանում են շուկայական տոկոսադրույքները և պետք է օժանդակեն փողի առաջարկի ցանկացած ծավալ, որն

[58] Moore, B.J., "Horizontalists and Verticalists: The Macroeconomics of Credit Money", Cambridge: Cambridge University Press, 1988.pp. 18-19

[59] Dutt A.K., "Wage rigidity and unemployment: The simple diagramatics of two views," Journal of Post Keynesian Economics, 9 (1986/7), pp.279 – 290.

առաջանում է բանկային համակարգից: AS կորը նույնպես ուղղահայաց է, որն էլ արտացոլում է Կալեցկյան գնային վարքագիծը. որտեղ ֆիրմաները գները սահմանում են որպես նորմալ միջին արժեքի գերազանցման և այդ գնի բոլոր պահանջներին համապատասխան[60]: Այս ուղղության հիմնական դրույթները սահմանելուց հետո, այժմ ներկայացնենք հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը, նախորդ ուղղությանը համապատասխան:

Գծապատկեր 1.3.3 *IS-LM և AD-AS կորերը հետքեյնսյան մոդելի ժամանակ*[61]



Պարտատոմսերի միջոցով ֆինանսավորվող հարկային կրճատումները տեղաշարժում են IS կորը ձախ, իսկ AD կորը՝ աջ: Արտադրության մակարդակն աճում է (Δy>0), սակայն տոկոսադրույքի և գների մակարդակները մնում են անփոփոխ (Δi=Δp=0), ինչպես որ անվանական և իրական աշխատավարձերը (Δw=Δ(w/p)=0): Այս ամենի արդյունքում ենթադրվում է, որ պետական պարտատոմսերի միջոցով ֆինանսավորվող պետական ծախսերն ավելի մեծ ընդլայնողական ազդեցություն ունեն ավելի մեծ մուլտիպլիկատորի պատճառով: Հետքեյնսյան մոդելի հետաքրքիր առանձնահատկությունն այն է, որ պարտատոմսերի և դրամական էմիսիայի միջոցով ֆինանսավորման կտրուկ տարբերությունն այստեղ անհետանում է: Այս փաստարկը

[60] F. Patriarca, C. Sardoni, 2011, "Distribution and Growth: A Dynamic Kaleckian Approach", Working Paper No. 697, pp. 2-4

[61] Palley Thomas I., 2012 "Keynesian, Classical and New Keynesian Approaches to Fiscal Policy: Comparison and Critique", New America Foundation, Washington DC, p.16

հասկանալու համար հարկավոր է հաշվի առնել նախնական գումարով ֆինանսավորվող հարկային կրճատումը: Դա մեծացնում է պաշարների մատակարարումը՝ իջեցնելով տոկոսադրույքի վրա առաջացող ճնշումը: Այնուհետև դրամավարկային պետական մարմինը պետք է իրականացնի պաշտպանողական բաց շուկայական գործառնություններ, որոնք մասամբ «քանդում են» այդ պահուստները, որպեսզի պահպանվի տոկոսադրույքի նպատակադրված մակարդակը: Այնուամենայնիվ, երբ եկամուտները, բանկային վարկավորումը և գործարքների մնացորդների պահանջարկն սկսում են ավելանալ, դրամավարկային մարմինը պետք է ապահովի լրացուցիչ պահուստներ բաց շուկայական գործառնությունների միջոցով՝ պահպանելու իր տոկոսադրույքի թիրախային մակարդակը և ապահովելու բանկային հատվածի վճարունակությունը բանկային հատվածի գործունեության ավելացման առումով: Դատելով վերջնական հաշվեկշիռները՝ կարելի է եզրակացնել, որ ֆիսկալ ազդեցությունը դրամական զանգվածի և պարտատոմսերի միջոցով ֆինանսավորման համակցությունն է: Վերջնական համակցությունը պայմանավորված է նրանով, թե որքանով կմեծանա բանկային համակարգի գործունեության ծավալը, ինչի արդյունքում հարկաբյուջետային քաղաքականութունը ֆինանսավորելու համար ավելի մեծ գումար անհրաժեշտ կլինի՝ կապված բանկային գործունեության աճի հետ: Այս մոտեցումն արտացոլում է փողի էնդոգեն տեսության տրամաբանությունը, որը կայուն է պահում փողի առաջարկը՝ հիմնվելով բանկային համակարգի վրա: Դա նշանակում է, որ հարկային քաղաքականությունը չի կարող մեծացնել դրամական զանգվածը՝ առանց հաշվի առնելու բանկային համակարգի կարիքները, և, արդյունքում, փողի առաջարկի վերջնական աճը կախված է այն հանգամանքից, թե որքանով է հարկաբյուջետային քաղաքականությունը խթանում բանկային ոլորտի ակտիվությունը[62]:

Մոնետարիստական մոդելը

Ինչպես արդեն նշվել է, հարկաբյուջետային քաղաքականության կարճաժամկետ արդյունավետության վերաբերյալ բանավեճը մակրոտնտեսագիտության մեջ երկարատև պատմություն ունի, և ժամանակակից մոտեցումը կարող է դիտարկվել նաև Միլթոն Ֆրիդմենի մոնետարիզմի տեսության շրջանակներում: Հայտնի է,

[62] J. E. King, “A Brief Introduction to Post Keynesian Macroeconomics”, 2013, pp. 486-488

մոնետարիստները հանդես են գալիս պետության կողմից իրականացվող հակապարբերաշրջանային քաղաքականության դեմ, և որ հարկաբյուջետային քաղաքականության մոնետարիստական քննադատությունն ամփոփված է «Փողը դա այն ամենն է, ինչն իմաստ ունի» աֆորիզմի մեջ (“Money is all that matters”), և կարող ենք փաստել, որ այդ տեսակետն արտացոլվում է Գծապատկեր 1.3.4 -ում:

Գծապատկեր 1.3.4 *IS-LM և AD-AS կորերը մոնետարիստական մոդելի ժամանակ*[63]



Մոնետարիստական տեսության մեջ բյուջեի պակասուրդի հիմնական պատճառը սղաճն է, իսկ շուկան ինքնակարգավորվող: Այս մոդելի ժամանակ արտադրությունը որոշվում է Ֆիշերի հավասարման համաձայն՝ Y = MV/P: Մոդելի շրջանակներում փողը և պարտատոմսերը համարվում են զուտ հարստություն: Պարտատոմսերի միջոցով ֆինանսավորվող հարկաբյուջետային քաղաքականությունը (հարկերի կրճատումը կամ պետական ծախսերի աճը) IS կորը տեղափոխում է ձախ, սակայն LM-ի և AD-ի գրաֆիկները մնում են անփոփոխ: Արդյունքում, արտադրության, գների մակարդակը, անվանական աշխատավարձը և իրական աշխատավարձը մնում են անփոփոխ (Δy=Δp=Δw=Δ(w/p)=0): Այնուամենայնիվ, անվանական տոկոսադրույքը բարձրանում է

[63] Palley Thomas I., 2012 “Keynesian, Classical and New Keynesian Approaches to Fiscal Policy: Comparison and Critique”, New America Foundation, Washington DC, p.19

($\Delta i>0$): Հետևաբար պարտատոմսերի մջոցով ֆինանսավորվող ֆիսկալ քաղաքականությունն ամբողջությամբ ենթակա է արտամղման[64]:

Իսկ ինչ վերաբերվում է դրամական զանգվածի միջոցով ֆինանսավորվող ֆիսկալ քաղաքականությանը, ապա այն տեղափոխում է IS կորը ձախ, LM-ը՝ վերև, իսկ AD կորը՝ աջ: Արդյունքում արտադրության մակարդակը և գները մեծանում են ($\Delta y>0$, $\Delta p>0$): Տոկոսադրույքների փոփոխությունը երկիմաստ է ($\Delta i>0$, կամ $\Delta i<0$), անվանական աշխատավարձը հաստատուն է ($\Delta w=0$), իսկ իրական աշխատավարձը նվազում է ($\Delta(w/p)<0$): Գործազրգության մակարդակի կրճատումը հնարավոր է միայն իրական աշխատավարձի նցազեցման շնորհիվ, ինճես նաև այն դեպքերում, երբ պետությունը այսպես ասած «մաքրի» շուկան[65]:

Հետևաբար, կարող ենք եզրակացնել, որ մոնետարիզմն ընդունում է փողի զանգվածի միջոցով ֆինանսավորվող հարկաբյուջետային քաղաքականության կարճաժամկետ արդյունավետությունը, սակայն մերժում է պարտատոմսերի միջոցով ֆինանսավորվող հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը: Այնուամենայնիվ, պարտատոմսերի միջոցով ֆինանսավորվող հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության մերժումը լիովին կապված է փողի առաջարկի հետ և ոչ մի կապ չունի դասական (ֆիքսված արտադրության) կամ նեո ռիկարդյան (անփոփոխ իրական հարստության և սպառողական հնարավորությունների) փաստարկների հետ:

Դասական մոդելը

Այժմ ներկայացնենք դասական մակրո մոդելը, որը շարունակում է մնալ քեյնսյան մոտեցման համար որպես հիմնական այլընտրանք: Ինչես հայտնի է, դասական մոդելի հիմնական առանձնահատկությունն այն է, որ արտադրության մակարդակը հավասար է լրիվ զբաղվածության ժամանակ առկա արտադրությանը՝ y^*: Արդյունքում, հարկաբյուջետային քաղաքականությունը կարող է ազդել AD-ի վրա, սակայն AD-ն չի կարող ազդել արտադրանքի վրա: Հետևաբար, այս պարագայում հարկաբյուջետային քաղաքականության ցանկացած ազդեցություն սահմանափակվում է գների (p) և

[64] Friedman, M., "The role of monetary policy," American Economic Review, 58 (1968), pp. 1-17

[65] Friedman, M., "A theoretical framework for monetary analysis," Journal of Political Economy, 78 (1970), pp.193 – 238.

տոկոսադրույքի (i) կողմից: Դասական մոդելը ներկայացված է Գծապատկեր 1.3.5-ում, որն ի տարբերություն նախորդ ուղղությունների, ներառում է համախառն արտադրանքի ֆունկցիան (y =f(n)) և աշխատաշուկան՝ առաջարկի (L_s) և պահանջարկի գրաֆիկներով, որտեղ պահանջարկի կորը աշխատուժի սահմանային արդյունքն է (MP_L): Արտադրության ծավալը ֆիքսված է իր լրիվ զբաղվածության մակարդակով, որը համապատասխանում է AS կորի ուղղահայաց դիրքին: Գների մակարդակը և տոկոսադրույքը հարմարեցված են՝ ապահովելով ամբողջական պահանջարկի այնպիսի մակարդակ, որն առկա է լրիվ զբաղվածության արտադրության պայմաններում (y*)[66]:

Գծապատկեր 1.3.5 *IS-LM և AD-AS կորերը դասական մոդելի ժամանակ*[67]



Նույն սցենարների պարագայում, ինչ ներկայացրել ենք նախորդ ուղղություններում, ապա այստեղ պարտատոմսերի միջոցով ֆինանսավորվող հարկային կրճատումները տեղափոխում են IS կորը աջ և միաժամանակ AD կորը ձախ,

[66] McElroy Michael, 2005, "The Macroeconomy—Private Choices, Public Actions, and Aggregate Outcomes", Chapter 2, pp. 1-25

[67] Palley Thomas I., 2012 "Keynesian, Classical and New Keynesian Approaches to Fiscal Policy: Comparison and Critique", New America Foundation, Washington DC, p.22

այնպես, որ գների մակարդակը և տոկոսադրույքներն աճում են ($\Delta p>0$, $\Delta i>0$): Անվանական աշխատավարձը բարձրանում է ($\Delta w>0$), իսկ իրական աշխատավարձն անփոփոխ է մնում ($\Delta(w/p)=0$), և հետևաբար, այս պարագայում արտադրությունը նույնպես անփոփոխ է մնում ($\Delta y=0$): Հստակ նույն տրամաբանությունը պահպանվում է պարտատոմսերի միջոցով ֆինանսավորվող պետական ծախսերի ավելացման ժամանակ, միայն IS-ի և AD-ի կորերի տեղաշարժերն ավելի մեծ են լինում, քանի որ նախնական հարկաբյուջետային ներարկումներից ոչ մեկը չի պահպանվում: Հաշվետու ժամանակահատվածում ֆիքսված արտադրության և AD-ի փոփոխություններին չարձագանքելու դեպքում, ընդլայնողական ֆիսկալ քաղաքականությունը ոչ մի ազդեցություն չի թողնում արտադրանքի վրա և պարզապես բարձրացնում է գների մակարդակը և տոկոսադրույքը: Այնուամենայնիվ, քանի որ պետական ծախսերն աճել են, ապա մասնավոր հատվածի կլանումը (սպառումը և ներդրումները) պետք է նվազի, որը կազդի արտադրության կառուցվածքի վրա՝ պայմանավորված հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությամբ: Պարտատոմսերով ֆինանսավորվող հարկային կրճատումները տեղափոխում են IS կորը ձախ, LM-ի և AD-ի կորերը՝ աջ: Արդյունքում գների մակարդակը բարձրանում է ($\Delta p>0$): Տոկոսադրույքը նույնպես բարձրանում է ($\Delta i>0$), քանի որ աճող AD-ն պահանջում է վարկային միջոցների շուկայում ավելի բարձր տոկոսադրույք, որը հավասարակշռում է խնայողությունները և ներդրումները: Արտադրությունը և իրական աշխատավարձն անփոփոխ են ($\Delta y=\Delta(w/p)=0$), սակայն անվանական աշխատավարձը բարձրանում է իրական գներն անփոփոխ թողնելու համար ($\Delta w>0$) [68]:

Նոր դասական մոդելը

Նոր դասական մոդելը, որը 70-ական թթ. ընթացքում փոխարինել է մոնետարիստական մոդելին, ներկայացնում է դասական մակրոտնտեսագիտության վերածնունդը և ընդլայնումը: Այն նույնպես մերժում է մոնետարիզմը՝ վերահաստատելով փողի չեզոքությունը: Այն նաև ընդարձակում է դասական տեսությունը՝ ներկայացնելով անորոշությունների (սակայն մոդելավորում է հավանականության տերմիններով) և

[68] Blinder, A.S., and Solow, R., "Does Fiscal Policy Matter?" Journal of Public Economics, 2 (4) (November 1973), 319 – 337.

ռացիոնալ սպասումների դերը[69]: Եթե անտեսենք անորոշությունը կամ փոխենք ռացիոնալ սպասումները կատարյալ կանխատեսմամբ, ապա նոր դասական մոդելը դառնում է դասական մոդելին համարժեք:

Նոր քեյնսյան մոդելը

Վերջին երկու տասնամյակների ընթացքում տեղի է ունեցել նոր քեյնսյան մոդելների ներդրումը տնտեսական հետազոտությունների մեջ: Չնայած անվանված լինելով իբրև նոր քեյնսյան ուղղություն՝ այս մոդելներն ավելի լավ ընկալվում են որպես նոր դասական մոդելներ՝ գների ժամանակավոր կոշտության և մենաշնորհային մրցակցության լրացուցիչ ենթադրություններով: Այսպիսով, հիմնական ենթադրությունը գների ժամանակավոր կոշտությունն է, իսկ մենաշնորհային մրցակցությունն ավելի շատ «զարդարանք» է, որը հիմնավորում է գների կոշտության ենթադրությունը: Գծապատկեր 1.3.6-ում ներկայացված է նոր քեյնսյան մոդելի գործողության մեխանիզմը: Այստեղ նոր դասական մոդելի հետ ունեցած միակ տարբերությունն այն է, որ ֆիրմաներն անկատար մրցակցային են, այսինքն, աշխատուժի ֆունկցիայի սահմանային արդյունքը (MP_L) ուղեկցվում է աշխատուժի գրաֆիկի սահմանային եկամտաբերության հետ (MRP_L): Ֆիրմաներն ընտրում են զբաղվածության այն մակարդակը, որտեղ MRP_L-ը հավասար է իրական աշխատավարձին (w/p): Զբաղվածության և արտադրության որոշման տրամաբանությունը նույնական է նոր դասական մոդելին: Տնային տնտեսությունները և ֆիրմաները որոշում են, թե որքան աշխատուժ փոխանակել և ապրանքներ արտադրել՝ ըստ իրական աշխատավարձի ակնկալիքների, և հասկանալով, որ իրական աշխատավարձերը սահմանվում են մենաշնորհային մրցակցային պայմաններում: Դա որոշում է իրական աշխատավարձը երկարատև հավասարակշռության ժամանակ, ինչպես նաև զբաղվածության բնական մակարդակն (N*) ու արտադրությունը (y*)[70]:

Նոր դասական տեսության նման այս մոդելում ևս արտադրության վրա ազդող միակ միջոցը դա պետության կողմից իրականացվող չսպասված՝ անակնկալ քաղաքականությունն է: Համակարգված և կանխատեսվող քաղաքականությունը հաշվի

[69] Peter Spahn, "New Classical Macroeconomics", University of Hohenheim, February 2012, pp. 1-10
[70] Rotemberg, J.J., "The new Keynesian microfoundations," NBER Macroeconomics Annual, 1987, 69 – 104.

է առնվում AD-ի սպասումների մեջ, որը սահմանում է գների նախնական մակարդակը և անվանական աշխատավարձը, և այն չի ազդում արտադրության մակարդակի վրա, քանի որ ակնկալվող քաղաքականությունը չի ազդում MP_L-ի, MRP_L-ի կամ աշխատուժի առաջարկի ֆունկցիայի վրա:

Գծապատկեր 1.3.6 *Նոր քեյնսյան մակրո մոդելը*[71]



Այսպիսով, ներկայացվեցին հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ տնտեսագիտական տարբեր դպրոցների մոտեցումները՝ գնահատելով հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը և ընդլայնողական կամ կոնսոլիդացման քաղաքականության ուղղությունները: Նեոքեյնսյան, հետքեյնսյան և մոնետարիստական մոտեցումները կարող են բոլորը դիտարկվել որպես «քեյնսյան ոգով» առաջնորդվող: Քանի որ նրանք կիսում են AD-ի ձևավորման միասնական մոտեցումը արտադրության մակարդակի որոշման համար. չկա զբաղվածության և

[71] Palley Thomas I., 2012 "Keynesian, Classical and New Keynesian Approaches to Fiscal Policy: Comparison and Critique", New America Foundation, Washington DC, p.27

արտադրության բնական մակարդակը, որին տնտեսությունը ձգտում է, և աշխատանքի արդյունքներն անջատված են աշխատուժի առաջարկի կորից: Նեոքեյնսյան և հետքեյնսյան մոդելներում մոնետար և պարտատոմսերի միջոցով ֆինանսավորվող հարկաբյուջետային քաղաքականությունն ունի մշտական ազդեցություն զբաղվածության և արտադրության վրա: Այնուամենայնիվ, պարտատոմսերի միջոցով ֆինանսավորվող ֆիսկալ քաղաքականությունը ոչ մի կերպ ազդեցություն չի ունենում մոնետարիստական մոդելի դեպքում, քանի որ ինչպես արդեն նշել ենք նրանց կարծիքով «Փողը դա այն ամենն է, ինչն իմաստ ունի»: Իսկ դասական, նոր դասական և նոր քեյնսյան մոդելները կարելի է դիտարկել որպես «դասական տեսության ոգով»: Քանի որ այս պարագայում էլ նրանք կիսում են դասական մոտեցումն արտադրության որոշման համար և չեզոք դիրքորոշում ունեն արտադրության բնական մակարդակի և զբաղվածության մակարդակի հետ կապված, որին տնտեսությունը ձգտում է: Դասական և նոր դասական մոդելներում դիսկրեցիոն հարկաբյուջետային քաղաքականությունը չի ազդում արտադրանքի և զբաղվածության վրա: Նոր քեյնսյան մոդելում այն կարող է ժամանակավոր ազդեցություն ունենալ գնային կոշտության պատճառով:

Այսպիսով, թեև նոր քեյսնյան մոդելները կարող են ընդօրինակել ֆիսկալ քաղաքականության ազդեցության քեյսնյան մոդելներին, սակայն դրանք շարունակում են պահպանել խորը տարբերություններ: Քեյսնյան մոդելներում տնտեսությունը ներկայացվում է այնպիսին, որը կարող է ամբողջությամբ ներքաշվել լիարժեք զբաղվածության ապահովմանը, ուստի հարկաբյուջետային քաղաքականությունն այդ պարագայում արդյունավետ կլինի: Նոր քեյնսյան մոդելում տնտեսությունը լրիվ զբաղվածության մակարդակին է վերադառնում այն ժամանակ, երբ գները նվազում են, այնպես որ հարկաբյուջետային քաղաքականությունը ժամանակավորապես արդյունավետ է լինում և պայմանավորված է միայն պահանջարկի անսպասելի ցնցումներով: Դա մասամբ բացատրում է, թե ինչու են նոր քեյնսականները ցանկանում արագ փակել բյուջեի դեֆիցիտը՝ համեմատած քեյնսականների, որը կրկին ցույց է տալիս, թե ինչպիսին է մոտեցումների տարբերությունը:

Այժմ, օգտագործելով ստանդարտ AS-AD մոդելը, փորձենք գնահատել պահանջարկի և առաջարկի շոկերի հետևանքների ազդեցությունը բարձր և ցածր

հարկային դրույքաչափերի պայմաններում՝ միաժամանակ ներկայացնելով ավտոմատ կայունարարների դերն այդ գործընթացում: Գծապատկեր 1.3.7-ում պահանջարկի կորի թեքությունն ավելի մեծ է բարձր հարկային դրույքաչափերի պայմաններում, քան ցածր դրույքաչափերի ժամանակ: Պատճառն այն է, որ որքան բարձր լինեն հարկային դրույքաչափերը, այնքան ուժեղ կլինի ավտոմատ կայունարարների մեղմացնող ազդեցությունը պահանջարկի վրա այն ժամանակ, երբ տնտեսությունը հայտնվել է ցնցումների մեջ գնաճի բարձրացումից: Ավտոմատ կայունարարները նվազեցնում են գնաճի ազդեցությունը պահանջարկի վրա և պահանջարկի կորը դարձնում են ավելի ուղղաձիգ[72]:

Գծապատկեր 1.3.7 *Այլընտրանքային հարկային դրույքաչափերով դրական պահանջարկի ցնցումների ազդեցությունը*[73]



Պահանջարկի դրական ցնցումը հանգեցնում է պահանջարկի կորի տեղաշարժին դեպի աջ: Նոր հավասարակշռման կետերը կլինեն A-ն ցածր հարկային դրույքաչափերի դեպքում և B-ն՝ բարձրի: Արդյունքում, ավելի բարձր ավտոմատ կայունարարներն արդյունավետ են արտադրության և գնաճի մակարդակների կայունացման համար, քանի որ դրանք հանգեցնում են արտադրության ավելի նվազ ճեղքերի և գնաճի

[72] Brunila A., Buti M. and In't Veld J. (2002), "Fiscal Policy in Europe: How effective are Automatic Stabilisers?" Economic Paper no. 177, European Commission. pp. 1-29

[73] Buti M., Martinez-Mongay C., Sekkat K. and Van den Noord P. (2003), "Automatic stabilisers in EMU: A Conflict between Efficiency and Stabilisation?"; CESiofo Economic Studies, Vol 49, p. 128

թիրախից փոքր շեղումների: Պահանջարկի կորի տեղաշարժն ավելի փոքր է ավելի բարձր հարկային դրույքաչափերի ժամանակ, քանի որ պահանջարկի ցնցումների ազդեցությունը մեղմվում է ավտոմատ կայունարարների միջոցով:

Գծապատկեր 1.3.8 *Այլընտրանքային հարկային դրույքաչափերով դրական պահանջարկի ցնցումների ազդեցությունը, երբ հարկերն ազդում են առաջարկի վրա*[74]



Տնտեսագետները նաև գտնում են, որ ավտոմատ կայունարարներն ավելի արդյունավետ են սպառման, քան ներդրումների կամ արտահանման ցնցումների ժամանակ՝ պայմանավորված դրանց անուղղակի հարկերի վրա ունեցած ազդեցության պատճառով: Առաջարկի շոկի դեպքում ավտոմատ կայունարարներն ավելի քիչ արդյունավետ են, քանի որ դրանք արտադրությունը կայունացնող են, բայց գնաճն ապակայունացնող (Գծապատկեր 1.3.9): Կառուցվածքային բարեփոխումները (մասնավորապես աշխատանքի շուկայում) կնպաստեն մեղմացնել առաջարկի ցնցումները: Այնուամենայնիվ, աշխատաշուկայի բարեփոխումները հիմնականում պահանջում են պրոգրեսիվ հարկերի, ինչպես նաև գործազրկության նպաստների կրճատում: Արդյունքում, պահանջարկի ցնցումների դեպքում ավտոմատ

[74] Նույն տեղում, էջ 129

կայունարարների մեղմացնող հնարավորությունները կկրճատվեն: Սակայն, այդ փոխզիջումը կայունության և ճկունության միջև միշտ չէ որ պարտադիր պայման է[75]:

Գծապատկեր 1.3.9 *Այլընտրանքային հարկային դրույքաչափերով դրական առաջարկի ցնցումների ազդեցությունը*[76]



Հարկաբյուջետային բարեփոխումները պետք է մեծացնեն ճկունությունն առանց տնտեսական կայունացման վրա բացասական ազդեցության: Այս եզրակացությունը գալիս է AD-AS մոդելից, որտեղ հարկերն ազդում են առաջարկի վրա: Երբ հարկային դրույքաչափերը բարձր են, ապա առաջարկի շոկերն առաջացնում են արտադրության և գնաճի ապակայունացում (Գծապատկեր 1.3.10): Ավելին, բարձր հարկային դրույքաչափերը՝ զուգակցված պահանջարկի ցնցումներով, գնաճն ապակայունացումն են, սակայն արտադրությունը կայունացնում (Գծապատկեր 1.3.8):

[75] Նույն տեղում, էջ 129
[76] Նույն տեղում, էջ 128

Գծապատկեր 1.3.10 *Այլընտրանքային հարկային դրույքաչափերով դրական առաջարկի ցնցումների ազդեցությունը, երբ հարկերն ազդում են առաջարկի վրա*[77]



Ընդհանրապես գոյություն ունի կրիտիկական հարկային դրույքաչափ, որի արդյունքում հարկերը և տնտեսական օգուտներն ունենում են ապակայունացնող ազդեցություն արտադրության վրա առաջարկի ցնցումների ժամանակ և միաժամանակ ապակայունացնող ազդեցություն գնաճի վրա, երբ առաջարկի և պահանջարկի ցնցումները տեղի են ունենում միաժամանակ: Արդյունքում, բարձր հարկային դրույքաչափերի կրճատումը նպաստում է արտադրության կայունացմանը, երբ առաջարկի ցնցումներ են տեղի ունենում, և գնաճի կայունացմանը՝ պահանջարկի ցնցումների դեպքում: Այնուամենայնիվ, պահանջարկի ցնցումները միշտ էլ արտադրությունն ապակայունացնող են, երբ հարկերը կամ տնտեսական օգուտները կրճատվում են (Աղյուսակ 1.3.1): Հետևաբար, եթե արտադրության կայունացումը ֆիսկալ իշխանությունների հիմնական նպատակն է, և եթե պահանջարկի ցնցումները գերակշռեն, ապա այդ պարագայում պետություն կողմից ավելի մեծ սոցիալական քաղաքականություն կիրականացվի[78]:

[77] Նույն տեղում, էջ 128
[78] Eichengreen B. (1998), "Comment on 'The Political Economy of Fiscal Adjustments' ", Brookings Paper on Economic Activity, no1, 255-262.

Աղյուսակ 1.3.1 *Առաջարկի և պահանջարկի ցնցումների ազդեցությունը ցածր և բարձր հարկային դրույքաչափերի ժամանակ*

	Արտադրություն		**Գնաճ**	
Հարկերի նախնական մակարդակը	Ցածր	Բարձր	Ցածր	Բարձր
Պահանջարկի շոկ	-	-	-	+
Առաջարկի շոկ	-	+	+	+

Եզրակացնելով վերոնշյալ ուսումնասիրությունները՝ կարող ենք փաստել, որ հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը շարունակվում է հարցականի տակ մնալ տեսական և էմպիրիկ մակարդակներում: Տեսական մակարդակում, ֆիսկալ մուլտիպլիկատորների ոչ քեյնսյան ազդեցությունները կարող են առաջանալ, եթե սպասումները ռացիոնալ են, սպառողները լիովին տեղյակ են կառավարության որոշումներից, ժամանակավոր բյուջետային սահմանափակումներից և եթե առկա են առաջարկի խոչընդոտներ: Տվյալ ուսումնասիրությունից եզրակացնում ենք ընդլայնողական ֆիսկալ կոնսոլիդացիայի անհրաժեշտությունը: Հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը գնահատվել է նաև տնտեսական կայունացման շրջանակներում, մասնավորապես՝ ավտոմատ կայունարարների աշխատանքի միջոցով: Վերլուծությունները ցույց են տալիս, որ ավտոմատ կայունարարները լիովին չեն փոխհատուցում մակրոտնտեսական ցնցումները, այնպես որ ընդլայնողական քաղաքականության գործողություններն անհրաժեշտորեն կավելացնեն քաղաքականության կայունացնող ներուժը: Այնուամենայնիվ, ընդլայնողական կայունացնող գործողությունները խոչընդոտվում են ժամանակային զգալի լագերով, որպեսզի նրանք հասանելի լինեն հակապարբերաշրջանային միջոցառումների իրականացման ժամանակաշրջանում:

Հիմնական եզրակացությունն այն է, որ չնայած ֆիսկալ քաղաքականության միջոցառումների բոլոր տեսական զարգացումներին, ինչպես նաև մակրոտնտեսական տվյալների և էկոնոմետրիկ վերլուծությունների բարելավմանը, ֆիսկալ մուլտիպլիկացիայի ծավալն ու նշանակությունը որոշակի պայմաններում շարունակվում են մնալ անորոշ:[79]:

[79] Aghajanyan H., Matshkalyan A.,"The Macroeconomic Effects of Fiscal Policy (theoretical background)", The journal "Bulletin of Armenian National Agrarian University", 2017, V.4, p 153-156

1.4 Հարկաբյուջետային քաղաքականության դերը տնտեսական նոր կոնսենսուսում:

Տնտեսական նոր կոնսենսուսը մակրոտնտեսագիտական զարգացումների համադրումն է նեոդասական սինթեզից մինչև ներկա ժամանակներ, որին բնորոշ է այն պահանջը, որ ընտրողական-տեսական միկրո հիմնադրույթները որոշում են մակրոտնտեսական արդյունքները: Ներկայումս հիմնական տեսությունը (mainstream) ենթադրում է, որ լրիվ զբաղվածության և արտադրանքի մակարդակի արդյունքները վերլուծելու համար բոլոր մակրոտնտեսական մոդելները պետք է համապատասխան կերպով միավորվեն ռացիոնալ սպասումների վրա հիմնված անհատական ժամանակավոր որոշումների կայացմանը: Այս շրջանակներում հնարավոր է շեղումներ համախառն արդյունքի հավասարակշռությունից (ի տարբերություն նոր դասական և իրական գործարար պարբերաշրջանների տեսության), սակայն դրանք պայմանավորված են ռացիոնալ անհատների վարքագծի վրա աշխատուժի և կապիտալի շուկաներում անհամար կոշտ դիրքերի սահմանափակումներով: Պոտենցիալ արտադրության մակարդակն այլևս նույնը չէ, ինչ քեյնսյան լրիվ զբաղվածության արտադրության հավասարակշռության ժամանակ. ավելի շուտ դա արտադրության այն մակարդակն է, որը կառաջանա բավականաչափ ճկուն գների և աշխատավարձի պայմաններում: Կարճաժամանակետ հատվածում դա նաև գործազրկության մակարդակն է, որը չի արագացնում գնաճը: Հետևաբար, գնաճի և գործազրկության միջև փոխզիջումը, որը ենթադրում է ակնկալվող ընդլայնված Ֆիլիպսի կոր, տնտեսական նոր կոնսենսուսի մեկ այլ առանձնահատկությունն է հանդիսանում, որտեղ գործազրկությունը սովորաբար ամրագրվում է արտադրական բացի (ճեղքի) միջոցով: Վերջապես, եթե անհատական սահմանափակված օպտիմալացումը տեղի է ունենում անկատար կամ թերի շուկաներում, ապա այդ պարագայում գոյություն ունի կարևոր դեր կարճաժամկետ կարգավորիչ քաղաքականության համար: Այս մեղմացնող միջոցների ձևն ու կառուցվածքը տնտեսական նոր կոնսենսուսի ևս մեկ կարևոր առանձնահատկությունն է:

Մասնավորապես, նշվում է, որ կայունացման կարևոր միջոցառումները կարող են իրականացվել դրամավարկային քաղաքականության միջոցով[80]:

Մոնետարիստական գաղափարը՝ համաձայն որի կենտրոնական բանկը պատասխանատու է գնաճի վերահսկման համար, շարունակվում է մնալ որպես հիմնական սկզբունքն, սակայն այժմ գնաճի վերահսկման հիմնական գործիքը տոկոսադրույքն է, այլ ոչ թե փողի առաջարկը: Այս տեսակետը, IS-LM մոդելի գաղափարի հետ մեկտեղ, ըստ որի տոկոսադրույքների մակարդակի փոփոխություններն ազդում են ներդրումների և արտադրանքի մակարդակի վրա, հանգեցրել է դրամավարկային քաղաքականության կոնսենսուսի: Դա կարող է ազդել ինչպես արտադրանքի մակարդակի, այնպես էլ գնաճի վրա տոկոսադրույքների ճշգրտման միջոցով: Տնտեսական նոր կոնսենսուսի ժամանակ տոկոսադրույքներ-ներդրումներ հարաբերությունների և տոկոսադրույքի կառավարման մեխանիզմի համադրությունը ցույց է տալիս, որ դրամավարկային քաղաքականությունը կարող է իրականացնել ընդհանուր պահանջարկի կառավարման գործառույթներ, եթե հասույթը շեղվի բնական մակարդակից: Քանի որ դիսկրեցիոն փոփոխությունները չեն խրախուսվում, ապա քաղաքականության ժամանակային անհամապատասխանության նկատառումներից ելնելով՝ տնտեսական նոր կոնսենսուսում դրամավարկային քաղաքականության տեսակը հիմնված է արձագանքման ֆունկցիայի վրա (Թեյլորի կանոն)[81]:

Վերոնշյալ գաղափարները համարվում են տնտեսական նոր կոնսենսուսի հիմնական հիմնադրույթները, որոնք հստակեցվել են հետևյալ երեք մոդելներում[82].

1. IS հավասարումը.

$$y_t = g_t + E_t(y_{t+1} - g_{t-1}) - \sigma(i_t - E_t\pi_{t+1}) \qquad (1)$$

[80] Leith, C. and S. Wren-Lewis. 2005. "Fiscal Stabilization Policy and Fiscal Institutions", Oxford Review of Economic Policy, 21(4), 584-597.

[81] Sargent, T. J. and N. Wallace. 1973. "The Stability of Models of Money and Growth with Perfect Foresight." Econometrica, 41(6). Nov., pp. 1043-1048

[82] Tcherneva P., 2008, "The Return of Fiscal Policy: Can the New Developments in the New Economic Consensus Be Reconciled with the Post-Keynesian View?", The Levy Economics Institute, Working Paper No. 539, pp. 5-6

Որտեղ y_t-ն ամբողջական արդադրանքն է, որը որոշ բաղադրյալ էկզոգեն խոչընդոտների՝ g_t, և տվյալ իրական տոկոսադրույքի ֆունկցիա է (i_t անվանական թիրախն է, իսկ $E_t\pi_{t+1}$ ապագա ինֆլյացիայի մակարդակի ընթացիկ սպասումներն են):

2. Նոր քեյնսյան Ֆիլիպսի կորը.

$$\pi_t = k(y_t - y_{pt}) + \beta E_t \pi_{t+1} \qquad (2)$$

Որտեղ π_t–ն ինֆլյացիայի մակարդակն է, որը ֆունկցիա է արդադրության ճեղքերի (կամ իրական և պոտենցյալ արտադրության միջև տարբերության՝ $y_t - y_{pt}$) և ապագա ինֆլյացիայի մակարդակի ընթացիկ սպասումների նկատմամբ: Դա ակնկալվող ընդլայնված Ֆիլիպսի կորն է:

3. Թեյլորի կանոնը.

$$i_t = \pi_t + r_t^* + \alpha_\pi(\pi_t - \pi_t^*) + \alpha_y(y_t - \bar{y}_t) \qquad (3)$$

Որտեղ i_t՝ թիրախավորված կարճաժամկետ տոկոսադրույքի, π_t՝ ՀՆԱ դեֆլյատորով չափված գնաճի, π_t^*՝ գնաճի ցանկալի մակարդակներն են, r_t^*՝ ենթադրվող հավասարակշռության իրական տոկոսադրույքն է, y_t՝ իրական ՀՆԱ-ի լոգարիթմն է, $\bar{y}_t$՝ հնարավոր արտադրանքի լոգարիթմն է:

Դրամավարկային քաղաքականության միջոցով կարճաժամկետ պահանջարկի կառավարումն արդյունավետ լինելու համար այն պետք է լինի ավտոմատ, թափանցիկ և վստահելի: Իսկ ինչպիսի՞ն պետք է լինի այս մոտեցման մեջ ֆիսկալ քաղաքականության առաջադրված տեղն ու դերը և ի՞նչ է փոխվել տնտեսական նոր կոնսենսուսում. դա այն է, որ հարկաբյուջետային քաղաքականությունն այլևս անարդյունավետ չի համարվում, ինչպես որ այն դիտարկվում էր նոր դասական և իրական գործարար պարբերաշրջանների տեսությունների կողմից: Փոխարենը դրա խոչընդոտող և գնաճային ազդեցությունները կարող են օգտագործվել ճգնաժամային ժամանակներում՝ լրացնելով դրամավարկային քաղաքականության միջոցով իրականացվող կայունացման քաղաքականությանը: Հարկաբյուջետային քաղաքականության այս նոր դերը պետք է ուսումնասիրվի էնդոգեն փողի համատեքստում: Ավելին, պետք է հասկանալ, որ եթե ֆիսկալ քաղաքականությունն ազդում է արտադրանքի և գնաճի վրա, ապա դա անպայմանորեն ազդում է նաև դրամավարկային քաղաքականության վրա: Նմանապես, գնաճին նպատակադրված

դրամավարկային քաղաքականությունը կարող է ազդել այդ ֆիսկալ հետևանքների վրա[83]: Այնուամենայնիվ, տնտեսական նոր կոնսենսուսի վերաբերյալ գրականության մեջ գերիշխող տեսակետը դեռևս շարունակվում է մնալ այն, որ հարկաբյուջետային քաղաքականությունը խոչընդոտող է, գնաճային և, հետևաբար, օգտակար է առավելապես ծայրահեղ դեֆլյացիայի ժամանակաշրջանում[84]:

Տնտեսական նոր կոնսենսուսում հարկաբյուջետային քաղաքականության դերի վերականգնման վերջին կոչերն ընդհանուր առմամբ առաջանում են զրոյական տոկոսադրույքով պայմանավորված դրամավարկային քաղաքականության հետ կապված մտահոգություններից: Քանի որ կարճաժամկետ փոխարժեքը հանդիսանում է կենտրոնական բանկի քաղաքականության հիմնական լծակը, ապա բավականին նվազելուց հետո դրամավարկային քաղաքականության միջոցով հետագա տնտեսական խթաններ իրականացնել հնարավոր չէ: Այս համատեքստում է, որ հարկաբյուջետային քաղաքականությունը կոչվում է «փրկարարական»: Դա հին իրացվելիության ծուղակի խնդրի արդյունավետորեն վերաձևակերպումն է[85]:

Ուսումնասիրություններից պարզ է դառնում նաև, որ տնտեսական նոր կոնսենսուսում հարկաբյուջետային քաղաքականությունն ունի իր դերը, չնայած այն ուղղված չէ լուծելու հարկադիր գործազրկության խնդիրը: Ավելին, պարզ է նաև, որ տնտեսական նոր կոնսենսուսն ըստ էության դրամական ռեժիմ է: Ակնկալվում է, որ հարկաբյուջետային քաղաքականությունը կզբաղեցնի հետին դիրքեր դրամավարկային քաղաքականության նկատմամբ և կիրականացնի ֆիսկալ կարգապահության ապահովում տնտեսական նորմալ իրավիճակներում: Այս տեսակետն ամրապնդվում է գների մակարդակի ֆիսկալ տեսության կողմից, որտեղ հարկաբյուջետային ազդեցությունները հատկապես ապակայունացնող են գնաճի դեմ պայքարի ռեժիմներում: Չնայած տնտեսական նոր կոնսենսուսում հարկաբյուջետային քաղաքականության դերը հեռու է այն բանից, ինչը հետքեյնսյան մտածողության կողմնակիցները վաղուց հավատում էին, որ դա մակրոտնտեսական համակարգման և

---

[83] Woodford M. 1998. "Public Debt and the Price Level." Princeton University Working Paper, July. pp. 44-48

[84] Krugman, P. 2005. "Is Fiscal Policy Poised for a Comeback?" Oxford Review of Economic Policy, 21(4), 515-523.

[85] Bernanke, B., V. R. Reinhart, and B. P. Sack. 2004. "Monetary Policy Alternatives at the Zero Bound: An Empirical Assessment." Brookings Papers on Economic Activity, 2:2004, pp. 1-78.

կայունացման ավելի ուժեղ գործիք է: Սակայն, հետքեյնսյան գրականության մեջ հարկաբյուջետային քաղաքականության կառուցվածքն ու ձևը դեռևս պարզ չէ, թեև այստեղ կա ավելի շատ կոնսենսուս, քան տնտեսագիտական հիմնականում ուղղության մեջ: Հետքեյնսյան քաղաքականության վերջին գաղափարները վերակենդանանում են Աբբա Լեռների ֆունկցիոնալ ֆինանսավորման մոտեցմամբ: Ըստ Լեռների, հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է դատել ոչ թե հետբյուջետային արդյունքներով, այլ տնտեսության վրա դրա իրական հետևանքներով: Նա նաև բացատրեց, որ ֆիսկալ մարմինների դերն է ծախսել այնքան, որքան անհրաժեշտ է տնտեսությունը լրիվ զբաղվածություն մակարդակի բերելու համար [86]:

Մեծ դեպրեսիայից տնտեսությունները դուրս հանելու վերաբերյալ բանավեճում Աբբա Լեռները ստեղծել է «ղեկային կառավարման» մետաֆորիա՝ հակադրելու իր «տնտեսության վերահսկողության» մոտեցմանը և այն ժամանակվա գերիշխող «չմիջամտելու» քաղաքականությանը (“laissez-faire” policy): Նա պնդում էր, որ «չմիջամտելու» մոտեցումը նման էր առանց ղեկի մեքենա վարելուն, որի բնական արդյունքն այն էր, որ տնտեսությունը շարունակականորեն «վթարի էր ենթարկվում»՝ ճանապարհին անցնելով մեկ մի ուղղությամբ, ապա մյուս: Ժամանակն էր, որ կառավարությունները որդեգրեին քեյնսյան «տնտեսություն վերահսկողության» մոտեցումը, որով նրանք կօգտագործեին տնտեսության միայն մեկ հստակ ղեկ՝ ֆունկցիոնալ ֆինանսները, տնտեսությունը սահուն կերպով պահելու համար[87]:

Տնտեսության վերահսկողության և տնտեսությանը չմիջամտելու քաղաքականությունների միջև այդ տարբերությունը լրացնելու համար նա առաջարկեց նոր լուծում ֆունկցիոնալ ֆինանսների քաղաքականության միջոցով: Համահունչ ֆիսկալ քաղաքականությունն ընդգրկում է մի շարք կանոններ. միշտ հավասարակշռված բյուջե՝ բացի պատերազմական ժամանակներից, և չավելացնել փողի առաջարկը տնտեսության աճի տեմպը գերազանցող չափով: Լեռների համար խնդիրը կայանում էր նրանում, որ այս ֆիսկալ կանոնները չեն վերլուծվել. դրանք պարզապես ընդունվել են որպես փաստ: Լեռները պնդում էր նաև, որ երբ կառավարությունները հասկանան, թե

[86] Lerner, A. P. 1943. “Functional Finance and the Federal Debt.” Social Research 10(1): 38–57.
[87] Lerner, A. 1945. “The Economics of Control: Principles of Welfare Economics”. Review by: George J. Stigler, Political Science Quarterly Vol. 60, No. 1, pp. 113-115

իրականում ինչպես է տնտեսությունը մակրոմակարդակում գործում, նրանք կստեղծեն «ֆունկցիոնալ ֆինանսների» այլընտրանքային կանոնների շարք: Ֆունկցիոնալ ֆինանսների կանոնների համաձայն՝ դեֆիցիտի և փողի առաջարկի վերաբերյալ որոշումները կարող են կատարվել քաղաքականությունների արդյունավետության գնահատմամբ, և ոչ թե վերացական, բարոյական նախադրյալներով, որ դեֆիցիտը, պարտքը և ընդլայնողական դրամավարկային քաղաքականությունը բացասական են համարվում[88]:

Այսպիսով, «ֆունկցիոնալ ֆինանսները» բաղկացած են հետևյալ երեք կանոններից[89].

1. Կառավարությունը պետք է պահպանի պահանջարկի ողջամիտ մակարդակ բոլոր ժամանակներում: Եթե կա ծախսերի ցածր մակարդակ և, հետևաբար, լրացուցիչ գործազրկություն, կառավարությունը պետք է նվազեցնի հարկերը կամ ավելացնի իր սեփական ծախսերը: Եթե ծախսերի մակարդակը բարձր է, կառավարությունը պետք է կանխի գնաճը՝ նվազեցնելով սեփական ծախսերը կամ ավելացնելով հարկերը:

2. Փոխառությունների միջոցով իրականացվող ֆիսկալ ընդլայնման ժամանակ, երբ կառավարությունը ցանկանում է բարձրացնել տոկոսադրույքը և վարկեր տրամադրելով կամ պարտքի մարումով, ապա կառավարությունը պետք է պահպանի տոկոսադրույքի այն մակարդակը, որը կապահովի ներդրումների օպտիմալ չափը:

3. Եթե առաջին երկու կանոններից մեկը հակասում է «առողջ ֆինանսների» սկզբունքներին, ապա բյուջեի հավասարակշռումը կամ պետական պարտքը սահմանափակելն այդ սկզբունքների պահպանման համար ավելի վատ ազդեցություն կունենան: Կառավարությունը պետք է թողարկի այնքան փող, որքան անհրաժեշտ կլինեն 1-ին և 2-րդ կանոններն իրականացնելու համար:

Այնուամենայնիվ, վերջին հետքեյնսյան ներդրումներում մենք կարող ենք լայնորեն տարբերակել ֆունկցիոնալ ֆինանսավորման երկու հատուկ տեսակ: Մեկը փաստում է, որ հարկաբյուջետային քաղաքականության հիմնական նպատակն է ապահովել

[88] Forstater, M. 1999. "Functional Finance and Full Employment: Lessons from Lerner for Today?" The Jerome Levy Economics Institute, Working Paper No. 272, pp. 1-8

[89] Forstater, M. 1998. "Toward a New Instrumental Macroeconomics: Abba Lerner and Adolph Lowe on Economic Method, Theory, History and Policy" The Jerome Levy Economics Institute, Working Paper No. 254, pp. 1-9

լիարժեք զբաղվածություն և դա ապահովելու ամենալավ միջոցն աշխատանքային համընդհանուր երաշխիքներն են: Մյուս տեսակետը սատարում է այն միտքը, որ ամբողջական պահանջարկն անհրաժեշտ է ավելացնել այնքան, որքան պետք է արտադրության բացը փակելու համար, սակայն առանց ակնհայտ երաշխիքների լրիվ զբաղվածություն ապահովելու առումով: Գրականության մեջ ընդունված է դրանք անվանել ֆունկցիոնալ ֆինանսներ աշխատատեղերի ստեղծման և ֆունկցիոնալ ֆինանսներ համախառն պահանջարկի միջոցով:

Ֆունկցիոնալ ֆինանսներ համախառն պահանջարկի միջոցով

Սա հետքեյսնյան ուղղության հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ ամենատարածված մոտեցումն է: Վերջին դիտարկումները պատկանում են Ռոբերտ Էյսներին, ով հաճախ պնդում էր, որ պետական դեֆիցիտի վերաբերյալ խեղաթյուրված պատկերացումները համախառն պահանջարկը թողնում են չափազանց սահմանափակ շրջանակներում[90]: Կոլանդերը և Մեթյուները նույնպես պնդում են, որ բյուջեները միայն հաշվապահական երևույթներ են, և հարկերն ու պետական ծախսերը պետք է ճշգրտվեն հակաճգնաժամային քաղաքականության շրջանակներում՝ կենտրոնանալով իրենց տնտեսական ազդեցության վրա[91]: Արեստիսը և Սոյերը ամենայն հավանականությամբ, առավել ակնհայտորեն են ներկայացրել ֆունկցիոնալ ֆինանսավորման միջոցով իրականացվող հարկաբյուջետային քաղաքականությունը, որտեղ, մասնավորապես, կառավարության քաղաքականության խնդիրն է ամբողջական պահանջարկի բարձր մակարդակի ապահովումը, երբ մասնավոր պահանջարկը բավարար չէ[92]:

Ամբողջական պահանջարկի միջոցով իրականացվող Ֆունկցիոնալ ֆինանսների մոտեցման առանձնահատկություններից մեկն այն է, որ հարկաբյուջետային քաղաքականության նպատակն է լրացնել պահանջարկի բացը: Այս առումով Արեստիսը և Սոյերը ֆունկցիոնալ ֆինանսների այն երկու ջատագովներն են, ովքեր կարծում են, որ

---

[90] Eisner, R. 1986. How Real Is the Federal Deficit? New York: Free Press, pp. 799-801

[91] Colander, D. and P. H. Matthews. 2006. "Integrating Sound Finance with Functional Finance" in P. G. Berglund and M. Vernengo, eds., The Means to Prosperity: Fiscal Policy Reconsidered. London: Routledge, pp. 52-66

[92] Arestis, P. and M. Sawyer. 2003. "The Case for Fiscal Policy." Working Paper No. 382. The Levy Economics Institute. pp. 2-20

այս մոտեցումը պարտադիր չէ, որ հակասի տնտեսական նոր կոնսենսուսին[93]:

Հետքեյնսականների մեծամասնության համար պահանջարկի բացը լրացնելը նպատակ է, բայց այդ բացը՝ փաստացի և պոտենցիալ արտադրանքների միջև տարբերությունը, նույնը չէ, ինչ նոր կոնսենսուսի մեջ: Վերջինիս համար պոտենցիալ արտադրանքն այն է, որ ձեռք է բերվում կատարյալ ճկուն գներով և աշխատավարձով: Իսկ հետքեյնսականների համար այն լրիվ զբաղվածության չափման միջոց է, որտեղ վերացվել է քեյնսյան ստիպողական գործազրկությունը: Ֆունկցիոնալ ֆինանսավորման այս մոտեցման հիմնական առանձնահատկությունն այն է, որ այն հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա. այն ավելացնում է համախառն պահանջարկը, խթանում է ներդրումները, բարձրացնում արտադրական հզորությունները, և դրանով իսկ նպաստում տնտեսական աճին: Սա կանխամտածված ներդրումների աճի քաղաքականություն է, որի նպատակն է փոխհատուցել կամ նվազեցնել պահանջարկի բացը: Այս քաղաքականությունը կախված չէ պետական ծախսերի կամ պետական ներդրումների որոշակի տեսակներից[94]:

Ֆունկցիոնալ ֆինանսներ աշխատատեղերի ստեղծման միջոցով

Այս մոտեցումը ներառում է Լեռների առաջարկությունը, որ կառավարությունների բյուջեների մասին պետք է դատել դրանց հետևանքներով և ոչ թե մեծությամբ: Ավելին, քանի որ դեֆիցիտը և պարտքը միշտ էլ նախկին ֆիսկալ հաշվառման արդյունքներ են, ապա ֆիսկալ քաղաքականությունը, որը նպատակ ունի սահմանել դեֆիցիտի կամ պարտքի որոշակի թիրախ, ամբողջովին մոլորեցնող է: Փոխարենը, հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է նպատակ ունենա հասնել լրիվ զբաղվածության՝ ապահովելով աշխատատեղեր աշխատել ցանկացող բոլոր աշխատողների համար: Այս ուղղության կողմնակիցները նաև հավատում են, որ ամբողջական պահանջարկի խթանման միջոցով լրիվ զբաղվածության ապահովումը կարող է շատ դժվար թվալ, եթե ոչ անհնարին: Այսպիսով, կարող ենք փաստել, որ հարկաբյուջետային քաղաքականությունը, որը միշտ համապատասխանում է լրիվ զբաղվածության

[93] Նույն տեղում:
[94] Setterfield, M. 2007. "Is There a Stabilising Role for Fiscal Policy in the New Consensus?" Review of Political Economy, 19(3), 405-418.

ապահովման նպատակին, շարունակվում է լինել դժվար խնդիր[95]:

Հարկաբյուջետային քաղաքականությունը և լրիվ զբաղվածությունը տնտեսական նոր կոնսոնսուսում

Կարևոր հիմնահարց է համարվում նաև հարկաբյուջետային քաղաքականության և լրիվ զբաղվածության միջև կապը: Ֆեդերալ ռեզերվային բանկի նախկին նախագահ Բեն Բերնանկեն պնդում էր, որ խստորեն հավատարիմ է Հեմֆրի-Հոուկինսի մանդատին (1978 թ. «Լրիվ զբաղվածության և հավասարակշռված աճի» ակտը, որը հայտնի է որպես Հեմֆրի-Հոուկինսի ակտ, ԱՄՆ տնտեսական քաղաքականության ուշադրությունը տեղափոխեց դեպի գների կայունության երկակի մանդատին, որն ավելացվեց զբաղվածության նպատակին): Այնուամենայնիվ, նույնիսկ այն պնդումները, որոնք հանդես են գալիս ֆիսկալ քաղաքականության օգտին, որպես կայունացման հիմնական գործիք, հստակորեն չեն զուգակցվում լրիվ զբաղվածության ապահովման նպատակի հետ: Գոյություն ունի Ֆիսկալ քաղաքականության և լրիվ զբաղվածության միջև կապի խզման երկու պատճառ: Մեկը տեսական է, մյուսը՝ մեթոդաբանական: Տնտեսական նոր կոնսենսուսի մեջ մակրոտնտեսական արդյունքների տեսական ընտրության միկրո հիմքերը հաստատում են որոշումը միայն որպես գերռացիոնալ անհատների վարքագծի օպտիմալացման գործառույթ: Քաղաքականությունը կարող է ի վիճակի լինել ազդելու զբաղվածության արդյունքների վրա, քանի դեռ կարող է ազդել անհատական վարքագծի վրա[96]:

Երբ Քեյնսը ներկայացրեց ֆիսկալ քաղաքականության և լրիվ զբաղվածության միջև կապ, նա մտահոգված էր, թե ինչպե՞ս պետք է վերացնել հարկադիր գործազրկությունը: Տնտեսական նոր կոնսենսուսում ընդհանուր հավասարակշռման դինամիկ մոդելը (որն ի սկզբանե մշակվել է իրական գործարար պարբերաշրջանների տեսության կողմից և հետագայում ներկայացվել է նոր քեյնսականների կողմից) թույլ չի տալիս ուսումնասիրել հարկադիր գործազրկությունը: Փաստորեն, մեթոդաբանական

[95] Tcherneva P., 2008, "The Return of Fiscal Policy: Can the New Developments in the New Economic Consensus Be Reconciled with the Post-Keynesian View?", The Levy Economics Institute, Working Paper No. 539, pp. 32-38

[96] Seidman, L. 2006. "Learning About Bernanke." Challenge, 49 (5), September/October, pp. 19–32.

անհրաժեշտության պատճառով, գործազրկությունը, որը տնտեսական նոր կոնսենսուսի շրջանակներում հնարավոր է մոդելավորել, դա ֆրիկցիոն, այսինքն զուտ կամավոր գործազրկությունն է[97]:

Տնտեսական նոր կոնսենսուսի շրջանակներում գործազրկությունն, ըստ երևույթի, կարծես «կամավոր» երևույթ է դինամիկ մոդելներում՝ համապատասխան գործառույթով: Այլ կերպ ասած, արդյո՞ք անհատը կամովին է դուրս եկել աշխատանքից, թե ակամա կերպով է գործազուրկ դարձել: Տնտեսական նոր կոնսենսուսն ընդունում է Լուկասի հայտնի պնդումը՝ համաձայն որի ստիպողական գործազրկությունը մակրոտնտեսական հետազոտությունների ծրագրերում տեղ չունի: Նոր նեոդասական սինթեզը կարելի է մեկնաբանել նաև որպես գործընթացի վերջնական քայլ, որը կնպաստի մակրոտնտեսական հետազոտություններում հարկադիր գործազրկության հասկացության ավարտին: Այժմ մեթոդաբանությունը չեզոք չէ, քանի որ այն հիմնված է մի շարք տեսական և քանակական գործիքների վրա և քիչ թե շատ համապատասխանում է որոշակի խնդիրների վերլուծությանը: Մակրոտնտեսագիտության մեջ ձևավորվող մեթոդաբանական կոնսենսուսն անպայման կհանգեցնի որոշ կոնցեպտուալ հարցերի ուսումնասիրության և որոշների անտեսման: Մասնավորապես, թվում է, թե նոր դասական սինթեզն անպայմորեն կբացառի հարկադիր գործազրկության հայեցակարգը ապագա մակրոտնտեսական հետազոտությունների օրակարգից[98]:

Սա շատ սահմանափակ տեսակետ է համարվում, քանի որ տնտեսական նոր կոնսենսուսը թողնում է հնարավորությունների նեղ շրջանակ գործազրկության հետ կապված քաղաքականության առումով: Պետք է նշել, որ ոչ բոլորն են համակարծիք Լուկասի տեսակետին, որ հարկադիր գործազրկությունն անտեղի է (օրինակ, 1989թ. Մենքյուն պնդեց, որ այն գոյություն ունի և պետք է լինի տնտեսագետների ուսումնասիրություններում)[99]: Բայց եթե տնտեսական նոր կոնսենսուսը չի կարող մեթոդաբանորեն հաղթահարել այդ հայեցակարգը, ապա հարկաբյուջետային կամ

[97] Zouache, A. 2004. "Towards a 'New Neoclassical Synthesis?' An Analysis of the Methodological Convergence Between New Keynesian Economics and Real Business Cycle Theory." History of Economic Ideas, 12(1): 95-117.
[98] Նույն տեղում:
[99] Mankiw, N. G. 1989. "Real Business Cycles: A New Keynesian Perspective." Journal of Economic Perspectives, Summer, 3(3): 79-90.

դրամավարկային քաղաքականության միակ նպատակը պետք է լինի կարգավորել կարճաժամկետ տատանումները լրիվ զբաղվածություն ապահովելու համար: Դրանց ազդեցության փոխանցման մեխանիզմը հիմնված է անհատների ռացիոնալ սպասումների և վարքագծի վրա: Հարկադիր գործազրկությունը Քեյնսի հեղափոխական տեսության առաջացման պատճառներից է եղել: Տնտեսական նոր կոնսենսուսի համաձայն հարկաբյուջետային քաղաքականությունը շատ քիչ է վերաբերվում Քեյնսի տեսական դրույթների հետ և նրա քաղաքականության առաջարկությունների հետ չնչին առնչություն ունի:

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալ ուսումնասիրությունները, կարող ենք եզրակացնել, որ հարկաբյուջետային քաղաքականությունն ունեցել է շատ խայտաբղետ անցյալ: Քեյնսի հեղափոխական տեսական մոտեցումը կարևոր տեղ է հատկացրել հարկաբյուջետային քաղաքականության համար, որը հետագայում քանդվել է գերիշխող տեսությամբ (mainstream): Եվ մինչ հիմնական տեսությունը փորձում էր հարկաբյուջետային քաղաքականության համար ապահովել որոշակի դեր, հետքեյնսյան տնտեսագետները երկար ժամանակ պայքարում էին քեյնսյան գաղափարների համար: Վերջնական վերլուծությունում տնտեսական նոր կոնսենսուսը դրամավարկային քաղաքականությունը համարեց առանցքային և տնտեսական կարգավորման հիմնական գործիք: Հետքեյնսյան տնտեսագետների համար, ոգեվորված Լեռների և Քեյնսի գաղափարներով, այս դերը վերագրվում է հարկաբյուջետային քաղաքականությանը: Այսպիսով, որքանո՞վ է տնտեսական նոր կոնսենսուսը ֆիսկալ քաղաքականության համար վերականգնում որոշակի դեր, դա հստակ չէ: Այն միայն վերահաստատում է, որ հարկաբյուջետային քաղաքականությունն ըստ էության գնաճային է: Թեև տնտեսական նոր կոնսենսուսը բացահայտել է պետական ֆինանսների «կեղծ տրամաբանությունից» խուսափելու հնարավորությունը և պնդել, որ պետական բյուջեի պակասուրդների առումով անկայուն ոչինչ չկա, այս սղաճային ազդեցությունը, զուգահեռ ֆիսկալ քաղաքականության աղավաղված ազդեցության հետ, վերահաստատում է «ողջամիտ ֆինանսավորման» անհրաժեշտությունը որպես նորմ: Հետքեյնսյան տնտեսագետները երկար ժամանակ պաշտպանել են հարկաբյուջետային քաղաքականությունը, որպես մակրոտնտեսական կայունության և

լրիվ զբաղվածության ապահովման քաղաքականություն՝ ենթադրելով, որ կառավարվող գների և դրամական զանգվածի պայմաններում, որտեղ հիմնարար անորոշությունը, ստիպողական գործազրկությունը և տնտեսական ներուժի թերօգտագործումը նորմա են, ապա հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ գնաճային ոչինչ չկա: Փաստորեն, դա կարող է ծառայել որպես կայունացման գործիք, որը վերականգնում է հարկաբյուջետային քաղաքականության և լրիվ զբաղվածություն միջև կապը: Ինչպես արդեն ներկայացվեց, հետքեյնսյան ճամբարի հիմնական դրույթները հարստացրել են Լեռների ֆունկցիոնալ ֆինանսավորման մոտեցումը երկու տարբեր ուղղություններով: Առաջինը լրիվ զբաղվածության ապահովման անուղղակի մոտեցումն է ամբողջական պահանջարկի կառավարման միջոցով, երկրորդը՝ լրիվ զբաղվածության ապահովման ուղղակի մոտեցումն աշխատանքային երաշխիքների միջոցով: Հետքեյնսյան տնտեսագետների համար հաջորդ խնդիրն է գնահատել յուրաքանչյուր մոտեցման մակրոտնտեսական առավելությունները:

Ամփոփելով վերոնշյալ ուսումնասիրությունները և հաշվի առնելով վերջին տարիների տնտեսական զարգացումները և պետության մակրոտնտեսական կարգավորման գործիքների հարաբերակցության փոփոխությունները՝ անհրաժեշտություն ենք համարում առաջ քաշել տնտեսական նոր կոնսենսուսում հարկաբյուջետային քաղաքականության ունեցած դերի վերանայման հարցը՝ պայմանավորված ներկա ժամանակաշրջանում ֆիսկալ գործիքների կիրառման ընդլայնման և դրանց արդյունավետության մեծացման հանգամանքներով, որոնք կարևոր հանգամանքներ են հանդիսանում տնտեսական նոր կոնսենսուսում հարկաբյուջետային քաղաքականության իրական տեղը և դերը գնահատելու համար:

ԳԼՈՒԽ 2: ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲՆՈՒՅԹԸ

2.1 Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը տնտեսական աճի վրա

Հարկաբյուջետային և մակրոտնտեսական կայունությունը միջնաժամկետ և երկարաժամկետ տնտեսական աճի համար կարևոր նախապայմաններ են հանդիսանում: Հարկաբյուջետային քաղաքականության անորոշությունը և պետական պարտքի բարձր մակարդակը խաթարում են մասնավոր ներդրումները և դանդաղեցնում են տնտեսական աճը: Ֆիսկալ կոնսոլիդացիան կարող է օգնել, բայց դրա ազդեցությունը տնտեսական աճի վրա կախված է հատկապես դրա տեմպից, կառուցվածքից և ֆինանսավորման եղանակներից: Շատ առաջադեմ և զարգացող տնտեսություններում, հարկաբյուջետային կայունություն ապահովելու համար կպահանջվի ժամկետային ծախսային ճնշումներ՝ առանց վնաս հասցնելու եկամուտներին:

Հարկաբյուջետային քաղաքականությունը կարող է խթանել տնտեսական աճը և կենսամակարդակի բարելավումը մի շարք տարբեր ուղղություններով: Այդ լծակները ներառում են ինչպես մակրոտնտեսական (օրինակ, բյուջետային դեֆիցիտի ազդեցությունը տնտեսական աճի վրա), այնպես էլ միկրոտնտեսական (ռեսուրսների օգտագործման արդյունավետության վրա ներազդելու միջոցով) ուղղությունները: Սակայն, հիմնական դժվարությունը կայանում է նրանում, թե ինչպե՞ս են այդ ուղիները հստակորեն աշխատում զարգացող երկրներում:

Տեսականորեն պետական ծախսերի և հարկերի ազդեցության արդյունա-վետությունը տնտեսական աճի վրա բազմազան և տարակարծիք տեսական հիմնահարց է: Ավելի վաղ Թոմաս Հոբսը կյանքն առանց կառավարության բնութագրեց որպես «խեղճ, դաժան և կարճ» և պնդեց, որ կառավարության կողմից տրամադրված օրենքները և կարգերը քաղաքակիրթ կյանքի անհրաժեշտ բաղադրիչներն են[100]: Հաշվի

[100] Hobbes, Thomas. 1950 “Leviathan”, New York, NY: E.P. Dutton, (orig. 1651).p. 295

առնելով Հոբսի տեսակետը՝ իշխանության որոշ գործառույթներ, ինչպիսիք են անհատների և նրանց ունեցվածքի պաշտպանությունը և վեճերի լուծման համար դատական համակարգի գործունեությունը, պետք է բարձրացնեն տնտեսական աճը: Մեկ այլ տեսանկյունից՝ սեփականության իրավունքի ապահովումը, պայմանագրերի կատարումը և կայուն դրամական ռեժիմն ապահովում են շուկայական տնտեսության անխափան գործունեության հիմքերը:

Զարգացող երկրներում մակրոտնտեսական կարգավորման տեսանկյունից անցյալում կատարված ուսումնասիրությունների կենտրոնական եզրահանգումներից մեկն այն է, որ խելամիտ հարկաբյուջետային քաղաքականությունը ենթադրում է բյուջեի պակասուրդի և պետական պարտքի ցածր մակարդակ, որը տնտեսական աճի ապահովման հիմնական բաղադրիչն է հանդիսանում, ինչն իր հերթին կարևոր է աղքատության մակարդակի նվազեցման և սոցիալական արդյունքների բարելավման համար: Բյուջեի դեֆիցիտի ցածր մակարդակը նույնպես նվազեցնում է տնտեսական ճգնաժամերի ռիսկը, որը կարող է կառավարության կողմից մտահոգություններ առաջացնել՝ կապված պարտքի սպասարկման տեսանկյունից: Միաժամանակ, անհրաժեշտ է կանխել տոկոսադրույքների աճն այն մակարդակներում, որոնք ճնշում են ճգնաժամային ժամանակաշրջանի սոցիալական ծախսերը և ապահովում են, որ պարտքային ֆոնդը մնա այն մակարդակի վրա, որը համապատասխանում է պարտքի սպասարկման տվյալ երկրի կարողություններին: Անշուշտ, նման ճգնաժամերի բացակայության հետ կապված մակրոտնտեսական կայունությունը բերում է բազմաթիվ առավելություններ՝ ներառյալ ներդրումների, տնտեսական աճի և կրթական մակարդակի ավելի բարձր տեմպեր[101]:

Հարկաբյուջետային քաղաքականությունը կարճաժամկետ հատվածում ազդում է մակրոտնտեսական հավասարակշռության, հետևապես՝ տնտեսական աճի վրա: Միկրոտնտեսական տեսանկյունից հարկերը խոչընդոտում են մասնավոր գործակալների որոշումները՝ խնայելու և ներդրումներ իրականացնելու համար, ինչն իր հերթին կարող է փոխել տնտեսական աճի տեմպը: Սակայն, տնտեսական աճի վրա

[101] Gavin, Michael, and Ricardo Hausmann, 1998, "Macroeconomic Volatility and Economic Development," IEA Conference Volume No. 119 (London: Macmillan), pp. 97–116.

հարկերի ազդեցության էմպիրիկ ապացույցները համոզիչ չեն: Հարկային քաղաքականության հետևանքները դժվար է առանձնացնել և գնահատել էմպիրիկ փաստերով: Հստակ ապացույցների բացակայությունը, թե ինչպես է հարկային քաղաքականությանն ազդում տնտեսական աճի վրա, մասամբ կարող է բացատրվել իրականացվող ծախսային քաղաքականությամբ:

Մասնավորապես, ծախսերի քաղաքականության մի քանի կատեգորիաներն ազդում են երկարաժամկետ տնտեսական աճի վրա: Օրինակ, էնդոգեն տնտեսական աճի տեսությանն առնչվող ուսումնասիրությունները ենթադրում են, որ հարկաբյուջետային քաղաքականությունը կարող է մեծացնել կամ նվազեցնել տնտեսական աճը՝ պայմանավորված ֆիզիկական և մարդկային կապիտալում ներդրումների վերաբերյալ որոշումներով: Մասնավորապես՝ կրթության, առողջապահության, ենթակառուցվածքների, հետազոտությունների և զարգացման (R&D) ուղղություններով ծախսերի ավելացումը կարող է խթանել երկարաժամկետ տնտեսական աճը: Բարձր տնտեսական աճն իր հերթին ձևավորում է ավելի մեծ հարկային ռեսուրսներ՝ ուղղված մարդկային կապիտալի ծախսերի հետագա ֆինանսավորմանը՝ էլ ավելի ամրապնդելով տնտեսության դինամիկան[102]:

Խոշոր հարկաբյուջետային պակասուրդները նվազեցնում են համախառն խնայողությունները տնտեսության մեջ և կարող են հանգեցնել գնաճի, տոկոսադրույքների աճի և վճարային հաշվեկշռի ճնշումների, բացասական տնտեսական աճի հետևանքների հետ միաժամանակ: Անշուշտ, մակրոտնտեսական անկայունության հետևանքով ստեղծված քաղաքականության անորոշությունը տնտեսական աճի վրա ազդում է ներդրումների վերադարձի փոփոխականության, անորոշության պատճառով և ռեսուրսների ոչ արդյունավետ բաշխման միջոցով, քանի որ գնային ազդանշաններն աղավաղված են: Սա կարևորում է ավտոմատ կայունարարների դերը մակրոտնտեսական անկայունության նվազեցման գործում. ֆիսկալ շրջանակները, որոնք նպաստում են ավտոմատ կայունարարների համաչափ գործունեությանը, վերացնում են պետական պարտքի կուտակման աղբյուրը և

[102] Romer, Paul M., 1990, "Endogenous Technological Change", Journal of Political Economy, Vol. 98 (October), pp. 71–102.

նպաստում միջնաժամկետ տնտեսական աճին[103]: Միևնույն ժամանակ, մեծ պետական պարտքը հակված է խոչընդոտել տնտեսական աճը՝ մեծացնելով ապագա հարկման նկատմամբ անորոշությունը, արտամղելով մասնավոր ներդրումները և թուլացնելով երկրի դիմադրողականությունը տնտեսական ցնցումների նկատմամբ:

Այսպիսով, Ֆիսկալ կոնսոլիդացիայի տեմպը կարևոր է միջնաժամկետ և երկարաժամկետ տնտեսական աճի համար: Տնտեսագիտական գրականություն մեծ մասը՝ հիմնականում նախաճգնաժամային շրջանը, ընդգծում է ընդլայնողական ֆիսկալ ճշգրտումների կարևորությունը ոչ միայն զարգացած տնտեսությունների, այլ նաև զարգացող շուկայական տնտեսությունների և ցածր եկամուտ ունեցող երկրների համար: Այնուամենայնիվ, խորը և երկարատև անկման ժամանակ հարկաբյուջետային կոնսոլիդացիան հավանական է, որ բացասական կարճաժամկետ ազդեցություն կունենա տնտեսական աճի վրա, երբ առկա են արտադրության բացասական մեծ բացեր և դրամավարկային քաղաքականությունը սահմանափակված է զրոյական ստորին սահմանով և չաշխատող վարկային լծակներով: Նման պայմաններում կոնսոլիդացման քաղաքականությունը կարող է վնասակար լինել երկարաժամկետ տնտեսական աճի համար, երբ ֆիսկալ գործիքների ժամանակավոր կրճատումները դառնում են մշտական: Ավելին, խորը ռեցեսիայի դեպքում, հավանաբար, ներդրումները հնարավորինս ցածր կլինեն երկարատև ժամանակ՝ նվազեցնելով հետագա պոտենցիալ արտադրանքի քանակությունը: Ընդհանուր առմամբ, այս փաստարկները կարևորում են խորը անկման ժամանակ հարկաբյուջետային ճշգրտման տեմպը վերանայելու անհրաժեշտությունը: Մասնավորապես՝ այն երկրները, որոնք շուկայական համակարգի վրա արտաքին ճնշման ներքո չեն, պետք է աստիճանաբար անցնեն հարկաբյուջետային կոնսոլիդացիայի՝ խարսխված վստահելի միջնաժամկետ ծրագրերով[104]:

Ինչպես հայտնի է, տնտեսագետներն ավանդաբար առաջարկում են, որ կարճաժամկետ հատվածում հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է օգտագործվի արտադրության և զբաղվածության տատանումների մեղմացման համար,

---

[103] Fischer, S., 1993, "The Role of Macroeconomic Factors in Growth," Journal of Monetary Economics, 32, pp. 485-512.

[104] De Long, J.B., and L. Summers, 2012, "Fiscal Policy in a Depressed Economy" Brookings Papers on Economic Activity, Economic Studies Program, The Brookings Institution, Vol. 44(1), pp. 233-297.

և առկա էմպիրիկ ապացույցների մեծ մասը սատարում են այս տեսակետը: Այսպիսով՝ հակապարբերաշրջանային հարկաբյուջետային քաղաքականությունը կարող է օգտագործվել համախառն պահանջարկի խթանման և լճացած տնտեսության վերականգնման համար: Միևնույն ժամանակ տնտեսագիտական վերլուծություններում գնալով աճում է տեսակետն այն մասին, որ որոշ դեպքերում ակտիվ հարկաբյուջետային քաղաքականությունը չի կարող ունենալ տնտեսական գործունեության կարգավորման վրա իր դրական ազդեցությունը: Այս հանգամանքները ներառում են այն դեպքերը, երբ պետական պարտքի մակարդակը բարձր է և անկայուն: Նույնիսկ այն երկրների համար, որոնք բնութագրվում են զգալիորեն ավելի մեծ արտաքին օգնություն ստանալու ակնկալիքներով, ընդլայնողական բյուջեներն օգնության մեծ հոսքերի հետ կապված չեն կարող կենսունակ տարբերակ լինել մակրոտնտեսական բացասական հետևանքների պատճառով, և այդ ռեսուրսներն արդյունավետ կերպով կլանելու հնարավորությունների բացակայությամբ:

Տեսականորեն հարկաբյուջետային բարեփոխումները կարող են ազդել տնտեսական աճի վրա չորս հիմնական փոխանցման ուղիներով՝ աշխատուժի առաջարկ, ներդրումներ ֆիզիկական ու մարդկային կապիտալի և ընդհանուր գործոնային արտադրողականության մեջ:

Ընդհանրապես, պետական ծախսերի, հարկման և տնտեսական աճի միջև փոխհարաբերություններն ուսումնասիրելու համար որպես առաջին քայլ կարևոր նշանակություն ունի կառավարության գործունեությունը բաժանել մի քանի կատեգորիաների: Ամենամեծ բաժանումը ներառում է ծախսերը և եկամուտները: Ծախսերը կարող են տարանջատվել պետական սպառման (որը ներառում է պետական սուբսիդիաները) և ներդրումներ: Այս ներդրումները կարելի է հետագայում բաժանել որպես ներդրումներ ենթակառուցվածքների, կրթության, պաշտպանության և այլ որորտներում: Բացի այդ, այն ուղիները, որոնց միջոցով եկամուտներն ավելանում են, անհրաժեշտ են հետագա դասակարգման: Առաջին տարբերությունը պրոգրեսիվ և միանվագ հարկման համակարգերի միջև է: Պրոգրեսիվ հարկումը կարող է հետագայում դասակարգվել կապիտալի և աշխատուժի հարկման, դրանց պրոգրեսիվության աստիճանով և այլն: Վերջապես, պետական ծախսերը և եկամուտներն անհնար է

դիտարկել մեկուսացման մեջ: Այս երկուսի տարբերությունը կառավարության դեֆիցիտն է, որը կուտակվում է պետական պարտքի մեջ:

Տնտեսագիտական հետազոտությունների մեջ նեոդասական մոդելի զարգացումը հանրային ֆինանսների հետազոտողներին և տեսաբաններին տրամադրեց տեսական կառուցվածք, որը նպատակահարմար էր կիրառել տնտեսական աճի վրա հարկաբյուջետային քաղաքականության հետևանքների ուսումնասիրության ժամանակ: Տարբեր հետազոտողներ և տեսաբաններ (Sato - 1967, Krzyzaniak - 1967, Feldstein - 1974) օգտագործեցին Սոլոուի (1956) մոդելի զանազան տարբերակներ՝ ուսումնասիրելու հարկային քաղաքականության դինամիկ ազդեցությունը: Համեմատաբար վերջերս, Քրիստոֆ Չերնլին[105] և Քենեթ Ջուդը[106] ի թիվս այլոց օգտագործել են նեոդասական աճի մոդելը՝ էնդոգեն խնայողությունների դրույքաչափով, որպես ֆիսկալ քաղաքականության ուսումնասիրության լաբորատոր գործիք:

Քանի որ նեոդասակական մոդելում պետական հատվածի կայուն աճը պայմանավորված է էկզոգեն գործոններով, ապա բնակչության դինամիկան և տեխնոլոգիական առաջընթացը, հարկաբյուջետային քաղաքականությունը կարող են ազդել տնտեսական աճի տեմպի վրա միայն կայուն վիճակի անցման ժամանակ: Այս փաստի պատճառով նեոդասակական մոդելի վրա հիմնված ավանդական եզրակացությունը եղել է այն, որ հարկային համակարգերի և պարտքային ու ծախսային քաղաքականությունների միջև տարբերությունները կարող են լինել արտադրության մակարդակի որոշման կարևոր դերակատարներ, սակայն հավանական չէ, որ մեծ ազդեցություն ունենան տնտեսական աճի տեմպի վրա[107]:

«Էնդոգեն աճի» մոդելները հակված են վերափոխելու ժամանակավոր տնտեսական աճի հետևանքները, որոնք նեոդասական մոդելի կողմից ենթադրվում են որպես տնտեսական աճի մշտական հետևանքներ: Այս ազդեցության ուժը տարբերվում է մի մոդելից դեպի մյուս մոդել, որը մեծապես կախված է աշխատանքի առաջարկի

---

[105] Charnley, C., 1986, "Optimal taxation of capital income in genera) equilibrium with infinite lives", Econometrica 54, p. 607-622

[106] Judd, K., 1985, "Redistributive taxation in a simple perfect foresight model", Journal of Public Economics 28, pp. 59-83.

[107] King, R. and S. Rebelo, 1993, "Transitional dynamics and economic growth in the neoclassical model", American Economic Review. p. 908-931

էլաստիկությունից և մարդկային կապիտալի կուտակման ու նոր ապրանք ստեղծելու տեխնոլագիական ասպեկտներից, որի մասին այժմ շատ քիչ է հայտնի: Որպեսզի մեկուսացվի յուրաքանչյուր ֆիսկալ գործիքի ազդեցությունը, հանրային ֆինանսների մեջ ընդունված է ենթադրել, որ պետական եկամուտների կամ ծախսերի վրա հարկային փոփոխության ազդեցությունը փոխհատուցվում է միանվագ հարկերի կամ սուբսիդիաների միջոցով[108]:

Միևնույն ժամանակ, տնտեսական աճի մոդելների մեծ մասը կանխատեսում են, որ ներդրումների և եկամուտների վրա հարկերի աճը բացասական ազդեցություն ունի: Այս հարկերն ազդում են տնտեսական աճի տեմպի վրա պարզ, ուղղակի մեխանիզմների միջոցով. դրանք նվազեցնում են մասնավոր եկամուտները խնայողություններ կատարելու համար: Սակայն ոչ բոլոր հարկերն են ազդում տնտեսական աճի տեմպի վրա: Աշխատուժի առաջարկի էկզոգեն մոդելներում տնտեսական աճի տեմպը կախված չէ սպառողական հարկերի մակարդակից. այս հարկերը չեն խաթարում սպառման հարաբերական գինը՝ անփոփոխ թողնելով կապիտալի կուտակման խթանները: Պետական սպառման աճի ազդեցությունը նույնպես պետք է զրոյի հավասար լինի, եթե մենք պետական ծախսերի այս բաղադրիչը դիտարկում ենք այն առումով, որ դա ազդեցություն չի ունենում մասնավոր հատվածի արտադրողականության վրա: Ի հակադրություն, պետական ներդրումների ազդեցությունը պետք է դրական լինի, քանի որ այս տեսակի գործունեությունը հավանաբար կբարձրացնի մասնավոր հատվածի արտադրողականությունը: Երբ մենք փոխում ենք ավելի քան մեկ գործիք, միաժամանակ ստանում ենք այս տարբեր մասնակի հետևանքների համադրությունը. օրինակ, եկամտային հարկերով ֆինանսավորվող պետական ներդրումների աճի հետևանքները միանշանակ չեն[109]:

Այնուամենայնիվ, կարող ենք եզրակացնել, որ կառավարությունների գործունեության շրջանակները շարունակվում են աճել, և ավելի ու ավելի շատ ռեսուրսներ են սկսվում հատկացվել քաղաքական, այլ ոչ թե շուկայական ուժերի կողմից:

---

[108] Jones, L., R. Manuelli, and P. Rossi, 1993, "Optimal taxation in convex models of equilibrium growth", Journal of Political Economy 101, p. 485-517

[109] Barro, R., 1990, "Government spending in a simple model of endogenous growth", Journal of Political Economy 98, 103-125.

Ընդհանրապես, հայտնի փաստ է, որ առկա են այնպիսի հիմնական գործոններ, որոնք ենթադրում են, որ տնտեսական աճի վրա տնտեսական բարենպաստ ազդեցությունը կթուլանա և ի վերջո բացասական կլինի: Նախ, պետական ծախսերը ֆինանսավորելու համար պահանջվող ավելի բարձր հարկերը և լրացուցիչ փոխառությունները բացասական ազդեցություն են ունենում տնտեսության վրա: Քանի որ կառավարությունն ավելի ու ավելի շատ ծախսեր է իրականացնում աշխատողների աշխատավարձերի գծով, ապա նրանց մոտիվացիան ներդրումներ կատարելու, ռիսկի դիմելու և արտադրողականության բարձրացմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու ուղղությամբ նվազում է: Ինչպես հարկերը, այնպես էլ փոխառու միջոցները կարտամղեն մասնավոր ներդրումները, ինչը կհանգեցնի ապագա հարկերի ավելի բարձր մակարդակների: Այսպիսով, նույնիսկ եթե պետական ծախսերի արտադրողականությունը չի նվազում, ապա հարկերի և փոխառու միջոցների խոչընդոտող ազդեցությունները, երբ ռեսուրսները մասնավոր հատվածից տեղափոխվում են պետական հատված, բացասաբար կանդրադառնան տնտեսական աճի վրա:

Երկրորդ, ինչպես վերևում արդեն նշվեց, պետության չափերն աճում են շուկայական հատվածի նկատմամբ, ապա նվազում է եկամուտների հետ վերադարձը: Ենթադրենք, որ կառավարությունը սկզբում կենտրոնանում է այն գործառույթների վրա, որոնց համար այն լավագույնս է համապատասխանում (օրինակ, գույքային իրավունքների պաշտպանություն, անաչառ իրավական համակարգի ապահովում, կայուն դրամավարկային համակարգի զարգացում և ազգային պաշտպանության ապահովում): Այս հիմնական գործառույթներն իրականացնելով՝ կառավարությունն ապահովում է շուկաների արդյունավետ գործունեությունը և դրանով իսկ խթանում տնտեսական աճը: Քանի որ այն ընդլայնվում է նաև այլ ոլորտներում, ինչպիսիք են ենթակառուցվածքների և կրթության ապահովումը, ապա կառավարությունը դեռևս կարող է բարելավել արտադրողականությունը և նպաստել տնտեսական աճին, թեև մասնավոր հատվածը ցույց է տվել այդ ֆունկցիաներն արդյունավետ կերպով ապահովելու ավելի մեծ հնարավորություններ: Սակայն, եթե կառավարության գործունեության ընդլայնումը շարունակվի, ապա ծախսերը գնալով ավելի ու ավելի քիչ

արդյունավետ կդառնան: Ի վերջո, քանի որ կառավարության գործունեությունը մեծանում է և ավելի շատ գործառույթներ է իրականացվում, որի պատճառով այն արդյունավետ չէ, արդյունքում բացասական եկամուտներ են արձանագրվում, և տնտեսական աճը դանդաղում է (Գծապատկեր 2.1.1): Դա, ամենայն հավանականությամբ կհանգեցնի նրան, որ կառավարությունները կներգրավվեն մասնավոր ապրանքների արտադրության մեջ: Արդյունքում, չկա պատճառ, որպեսզի ակնկալել, որ կառավարությունները կամրապնդեն կամ կտրամադրեն նման ապրանքներն ավելի արդյունավետ, քան շուկայական հատվածի կողմից:

Գծապատկեր 2.1.1 ***Կառավարության գործունեության ծավալի և տնտեսական աճի միջև կապը***[110]



Եվ վերջում, քաղաքական գործընթացն ավելի պակաս դինամիկ է, քան շուկայական գործընթացը: Պետական հատվածում փոփոխությունների ճշգրտումը շատ ավելի դանդաղ է: Շուկայական հատվածի հետ համեմատելու տեսանկյունից սխալները շտկելու համար անհրաժեշտ ժամանակը (օրինակ՝ վատ ներդրումներ) և փոփոխվող հանգամանքների հետ կապված համապատասխանությունները, նոր տեղեկությունները և բարելավված տեխնոլոգիաներ ներդնելն ավելի երկար ժամանակահատված է պահանջում պետական հատվածի համար: Սա մեծ թերություն է, քանի որ վերաբերվում

[110] Gwartney J., Lawson R., Holcombe R. (1998). "The size and functions of government and economic growth", Joint Economic Committee, Washington, D.C., p. 5

է տնտեսական աճին: Մեծ չափով տնտեսական աճը «բացահայտման» գործընթաց է: Քանի որ գործարարները բացահայտում են նոր և բարելավված տեխնոլոգիաներ, արտադրության կազմակերպման ավելի լավ մեթոդներ և հնարավորություններ, որոնք նախկինում անտեսվել են, նրանք կարողանում են միավորել ռեսուրսները՝ ստեղծելով ավելի բարձր արժեք ունեցող ապրանքներ և ծառայություններ: Սա հարստության ստեղծման և տնտեսական աճի կենտրոնական տարրն է: Այս գործընթացին նպաստում է շուկաների նկատմամբ վստահության և տնտեսական ազատության առկայությունը: Ակնհայտ է, որ պետության գործունեության ընդլայնումը շուկայական հատվածի նկատմամբ դանդաղեցնում է տնտեսական աճի այս կարևոր աղբյուրը[111]:

Ընդհանուր առմամբ, պետության կողմից շուկայական տնտեսության գործունեության համար ենթակառուցվածքների ապահովումը և սահմանափակ հանրային բարիքների տրամադրումը կարող են երաշխավորել տնտեսական աճի համար նպաստավոր հիմքեր: Այնուամենայնիվ, քանի որ կառավարությունների գործունեության շրջանակները շարունակվում են աճել, ավելի բարձր հարկերի և փոխառությունների խանգարող հետևանքները, նվազող եկամուտները և հարստության ստեղծման գործընթացի դանդաղումն ավելի ու ավելի կարևոր են դառնում: Ի վերջո, այդ գործոնները գերակշռող են, և սահմանային պետական ծախսերը բացասաբար կանդրադառնան տնտեսական աճի վրա: Գծապատկեր 2.1.1-ում նկարագրվում է կառավարության գործունեության շրջանակների ծավալների և տնտեսական աճի միջև փոխհարաբերությունները՝ ենթադրելով, որ կառավարությունները գործունեություն են իրականացնում իրենց «եկամտաբերության» հիման վրա: Քանի որ հորիզոնական առանցքի վրա ներկայացված «կառավարության չափն» ընդլայնվում է զրոյից (ամբողջական անարխիա), ապա սկզբում տնտեսական աճը մեծանում է, որը չափվում է ուղղահայաց առանցքի վրա: A կետից մինչև B-ն նկարագրում է այս իրավիճակը: Քանի որ կառավարության մասնաբաժինը տնտեսության մեջ շարունակվում է աճել, ապա ծախսերը կշարունակվեն ուղղվել դեպի ավելի քիչ արդյունավետ ուղղություններով, ինչը

[111] Bazhal, I. 2016 "The Theory of Economic Development of J.A. Schumpeter: Key Features". MPRA Paper No. 69883, pp.3-7

հանգեցնում է տնտեսական աճի տեմպի նվազման և ի վերջո անկման: Β կետից հետո նկարագրվում է տնտեսության տվյալ իրավիճակը[112]:

Հիմք ընդունելով վերոնշյալ ուսումնասիրությունները՝ կարող ենք փաստել, որ տնտեսական քաղաքականություն մշակողները պետք է կատարեն որոշ եզրակացություններ, որպեսզի ունենան տնտեսական աճին նպատակաուղղված հարկաբյուջետային արդյունավետ քաղաքականություն: Ստորև ներկայացնում ենք տնտեսական աճին միտված հարկաբյուջետային քաղաքականության մշակման համար անհրաժեշտ հիմնական սկզբունքները[113].

- Հարկային բազայի ընդլայնումը, միաժամանակ, հարկերի ազատման և արտոնյալ ռեժիմների ռացիոնալացման միջոցով կբարձրացնի եկամուտները և կնպաստի եկամուտների վերաբաշխման հորիզոնական հավասարությանը:
- Եկամուտների կառավարման բարելավումը՝ ներառյալ ռիսկերի կառավարման մեթոդների ներդրման, օրենքների պարզեցման և հարկ վճարողների ու գործառնությունների սեգմենտավորման միջոցով, որոնք կարող են ամրապնդել հարկ վճարողների պատրաստակամությունը և բարձրացնել եկամուտների հավաքագրումը:
- Հարկերի կառուցվածքի փոփոխումը՝ պայմանավորված տնտեսական արդյունավետության բարձրացման հետ. մասնավորապես ուղղակի և անուղղակի հարկերի կառուցվածքի այնպիսի փոփոխությունները, որոնք առավել քիչ ազդեցություն կունենան տնտեսվարողների իրական եկամուտների նվազման և գնաճի վրա: Գույքի կամ հարստության հարկերը նույնպես կարող են նպաստել հարկային համակարգի պրոգրեսիվության բարձրացմանը:
- Զարգացող երկրները, որոնք բարդությունների են հանդիպում ֆիսկալ տիրույթի ընդլայնման ժամանակ, պետք է կենտրոնանան այնպիսի բարեփոխումների վրա, որոնք բյուջետային կայունության առումով չեզոք ազդեցություն կունենան ֆինանսական համակարգի վրա:
- Առավել արդյունավետ երկարաժամկետ հարկային միջոցառումներ ձեռնարկել

[112] Gwartney J., Lawson R., Holcombe R. (1998). "The size and functions of government and economic growth", Joint Economic Committee, Washington, D.C., pպ. 4-5

[113] Matshkalyan A.V. "The Role of Fiscal Policy in The Long-Term Economic Growth", The journal "Bulletin of Armenian National Agrarian University", 2017, V.4, p. 156-159

պարտքի միջոցով ֆինանսավորվող ֆիսկալ քաղաքականության փոխարեն:

- Ֆինանսական կայունության ապահովման համար անհրաժեշտ է նախապես հայտարարված ոլորտային ռազմավարությունների մշակում և ներկայացում:

2.2 Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացիայի անհրաժեշտությունը

Մակրոտնտեսական քաղաքականության հիմնական նպատակները ենթադրում են ցածր գնաճային, կայուն տնտեսական աճի ձեռքբերումը՝ տնտեսական քաղաքական գործիքների օգտագործմամբ, առավելապես դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության համակարգերի միջոցով: Երկու հիմնական շահագրգիռ կողմերի կողմից վերոնշյալ քաղաքականությունների գործիքների կիրառման հետևանքները հաճախ հակասում են միմիանց: Այնուամենայնիվ, նշված գործիքների օգտագործումը բարդ է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրանք գտնվում են առանձին դրամավարկային և ֆիսկալ իշխանությունների ձեռքում, և հաճախ դրանք հակասող նպատակներ ունեն: Սա կարևորագույն պատճառներից մեկն է, թե ինչու է անհրաժեշտ ստեղծել դրանց կոորդինացման համապատասխան մեխանիզմ, որը կապահովի համահունչ տնտեսական քաղաքականություն: Դրա համար կան մի շարք տեսական և էմպիրիկ հետազոտություններ, որոնք ապացուցել են տնտեսական քաղաքականության երկու հիմնական գործիքների միջև կոորդինացման հիմնավորումը: Ոչ արդյունավետ կոորդինացման արդյունքում առաջացող տարբեր անհավասարակշռությունների կանխման համար անհրաժեշտ է ստեղծել մի շարք տարբեր ինստիտուցիոնալ և գործառնական միջոցառումներ, որոնք, ի հավելումն, կպահպանեն այդ քաղաքականությունների արժանահավատությունը: Հետևաբար, համապատասխան կոորդինացման մեխանիզմների անհրաժեշտությունն այս երկու փոխկապակցված քաղաքականությունների միջև ի հայտ եկավ որպես տնտեսական քաղաքականության ցանկալի վերջնական նպատակներին հասնելու անհրաժեշտություն:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսությունը բարդ և դինամիկ զարգացող համակարգ է, որի վրա ազդում են բազմաթիվ գործոններ, որոնց քանակն անընդհատ աճում է, ինչը տնտեսությունը դարձնում է անկայուն, ապա

մակրոտնտեսական քաղաքականության՝ հատկապես դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների կոորդինացիան, ժամանակակից տնտեսական զարգացումների համար անհրաժեշտություն է համարվում: Սա հատկապես կարևոր է այն առումով, որ մոռացված քեյնսյան-մոնետարիստական հակասությունը հիմնված է տնտեսական քաղաքականության մեկի հաշվին մյուս գործիքի կիրառման վրա և դրանով իսկ ստեղծելով գործիքների համադրման մեխանիզմի և դրամավարկային ու հարկաբյուջետային քաղաքականությունների միջոցառումների մշտական ստուգումներ ու վերլուծություններ՝ հաշվի առնելով, որ եթե նրանց միջև պատշաճ փոխազդեցություն չլինի, հազիվ թե կկարողանանք խոսել ցանկացած նպատակային և արդյունավետ տնտեսական քաղաքականության մասին: Խնդիրն ավելի ակնհայտ է դառնում այն առումով, որ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունները, որոնք իրականացվում են առանձին և համեմատաբար անկախ, բայց միմիանց հետ կապված ինստիտուտների կողմից, շատ հաճախ դժվար է նրանց միջև տարբերություն դնել և ճշգրտորեն պատասխանել, թե որքանո՞վ է իրականացված միջոցառումը մի քաղաքականության ազդեցությունը, և որտեղի՞ց է սկսվում մյուսի ազդեցության շրջանակները: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ, անկախ այս երկու քաղաքականությունների տարանջատվածության բնույթին, դրանց միջև գոյություն ունեցող կախվածությունն ակնհայտ է:

Ընդհանրապես, հարկաբյուջետաին և դրամավարկային քաղաքականությունների միջև կոորդինացման բացակայությունը կհանգեցնի ընդհանուր տնտեսական արտադրողականության վատթարացմանը: Թույլ քաղաքական դիրքորքշումը քաղաքականության մի ոլորտում ծանրաբեռնում է մյուս ոլորտը, և երկարաժամկետ հեռանկարում ընդհանուր տնտեսական քաղաքականությունը դառնում է անկայուն: Օրինակ, թույլ հարկաբյուջետային քաղաքականությունը ճնշում կգործադրի դրամավարկային քաղաքականության խստացման համար, նույնիսկ եթե վերջինս չի կարող ամբողջությամբ փոխհատուցել ֆիսկալ անհավասարակշռությունները:

Այսպիսով, այն հիմնական պատճառները, որոնք բացատրում են հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման

անհրաժեշտությունը հետևյալներն են[114].

- ներքին միասնական և փոխադարձ համաձայնեցված դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների միջոցառումների նպատակների սահմանում՝ ուղղված ցածր գնաճային ու կայուն տնտեսական աճի ապահովմանը,
- խթանել նախորդ որոշումների արդյունավետ իրականացմանը՝ նպատակ ունենալով հասնել դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների նպատակներին՝ այդ ուղղությամբ իրականացնելով տեղեկատվության փոխանակման մեխանիզմների կատարելագործում,
- ազդելով հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքկանությունների վրա՝ կայուն տնտեսական աճ ապահովելու համար:

Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությյունների արդյունավետ կոորդինացման համար անհրաժեշտ են մի շարք առաջնային պայմաններ: Առաջին, քաղաքականությունների կայունությունը պետք է ապահովվի այնպես, որ յուրաքանչյուրի միջնաժամկետ ուղին կայուն լինի: Երկրորդ, երկու քաղաքականությունների արժանահավատությունը պետք է պահպանվի հասարակության սպասումների կայունացման միջոցով: Երրորդ, պետք է հաշվի առնել քաղաքականությունների ճշգրտման գործողությունների տարբեր ժամկետները: Այլ կերպ ասած, հարկաբյուջետային դիրքորոշման ճշգրտումը տևում է երկար ժամանակ, մինչդեռ մոնետար դիրքերը հաճախակիորեն կարող են կարգավորվել: Չորրորդ, դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների նպատակներն ու քաղաքականութան ուղղությունները պետք է համատեղ որոշվեն: Իրոք, ցանկացած տնտեսության մեջ քաղաքականությունների կոորդինացիան անհրաժեշտ է՝ անկախ նրա զարգացման փուլից: Այնուամենայնիվ, այն տարբերվում է՝ ելնելով տարբեր հանգամանքներից, որոնք բնութագրում են յուրաքանչյուր տնտեսության ֆինանսական շուկաների զարգացման աստիճանը, փոխարժեքի ռեժիմը և այլ ինստիտուցիոնալ

[114] Hanif, N. Muhammad, and Arby M. Farooq. (2008) "Monetary and Fiscal Policy Coordination". MPRA Paper No. 10307, p. 3

միջոցառումները[115]:

Դրամավարկային քաղաքականության ազդեցությունը տոկոսադրույքների և դրանց ժամկետային կառուցվածքի, գնաճի վրա զգալի հարկաբյուջետային հետևանքներ է ունենում: Տոկոսադրույքների մակարդակը, ի հավելումն տնտեսության վրա ունեցած բազմաթիվ հետևանքների, արտացոլում է իր անմիջական ազդեցությունը ֆիսկալ քաղաքականության վրա պետական պարտքի սպասարկման ծախսերի արժեքի միջոցով՝ ազդելով երկրում տնտեսական կայունության վրա: Ի վերջո, բարձր գնաճը ևս մեկ գործոն է, որը բազմաթիվ բացասական հետևանքներ է առաջացնում հանրային ֆինանսների համար, մասնավորապես՝ փաստացի հարկային բեռի ավելացումը, այսպես կոչված Թանզի-Օլիվերի էֆեկտը, որն արտացոլվում է հարկերի վատթարացմամբ և հետաձգում է հարկերի վճարումը՝ բյուջեի ծախսային մասի վրա ճնշում գործադրելով, և ընդհանրապես խոչընդոտում է ապագայի համար ճշգրիտ ֆիսկալ կանխատեսումների կայացմանը[116]:

Մյուս կողմից, հարկաբյուջետային քաղաքականությունն ազդում է դրամավարկային քաղաքականության վրա ուղղակի և անուղղակի տարբեր լծակներով: Ամենակարևորը, անշուշտ, այն է, որ ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականությունը կարող է հանգեցնել խոշոր հարկաբյուջետային պակասուրդների, որը կարող է ստիպել կառավարությանը ճնշում գործադրելու դրամավարկային մարմինների նկատմամբ դեֆիցիտի դրամայնացման համար՝ խթանելով ընդլայնողական դրամավարկային քաղաքականությունը, ավելացնելով գնաճային սպասումները, խախտելով փոխարժեքի մակարդակը, որը կառաջացնի վճարային հաշվեկշռի հետ կապված խնդիրներ և, վերջապես, արժութային կամ ֆինանսական ճգնաժամի ձևավորմանը[117]: Հարկաբյուջետային քաղաքականության փոփոխությունները դրամավարկային քաղաքականության վրա ազդում են նաև համախառն պահանջարկի անմիջական ազդեցությամբ: Հարկերի մակարդակի

[115] Laurens, B. and De La Piedra, E., 1998, "Coordination of Monetary and Fiscal Policies". IMF working paper wp/98/25. Pp. 5-7

[116] Caballe J., Panades J., "Inflation, tax evasion, and the distribution of consumption", Journal of Macroeconomics 26 (2004) 567–595

[117] Chadha, S. Jagjit, and Charles Nolan. (2003), "On the Interaction of Monetary and Fiscal Policy". DAE Working Paper No. 0303. pp. 2-5

փոփոխություններն ազդում են ֆիրմաների շահութի և դրանց տնօրինվող եկամուտների վրա, հետևաբար, դրանց սպառման և ներդրումային որոշումները կարող են հետևանքներ ունենալ գնաճի վրա: Գնաճի վրա ֆիսկալ քաղաքականությունը կարող է ազդել մեկ այլ ձևով՝ ֆիսկալ էֆեկտների միջոցով ազդելով պոտենցիալ արտադրանքի վրա: Ավելի ցածր շահութահարկը կարող է լինել այնպիսի գործոններից մեկը, որն ազդում է նոր ընկերությունների ստեղծման վրա, որոնք ի վերջո կարող են մեծացնել պոտենցիալ արտադրանքը[118]:

Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների միջև փոխկապվածությունը լավ հասկանալու համար ներկայացնենք երկու քաղաքականությունների պետական բյուջեի դեֆիցիտի հետ ունեցած կապերը, և վերջինիս ֆինանսավորման աղբյուրները կարող ենք ներկայացվել հետևյալ կերպ[119].

$$\mathbf{D(t) = [B(t) - B(t-1)] + [M(t) - M(t-1)],}$$

որտեղ D(t)-ն պետական բյուջեի դեֆիցիտն է, [B(t)-B(t-1)] պետական պարտատոմսերի զուտ տեղաբաշխումն է (արտաքին և ներքին), [M(t)-M(t-1)] դրամական բազայի փոփոխությունն է, որը կապված է կառավարությանը կենտրոնական բանկի վարկավորման հետ: Այստեղից ակնհայտ է, որ հավասարման երեք փոփոխականներից միայն երկուսը կարեղ են որոշվել էկզոգենորեն:

Հետպատերազմյան տարիների ընթացքում՝ ֆիսկալ քաղաքականության գործիքների կիրառության գագաթնակետի ժամանակաշրջանում, դրամավարկային քաղաքականությունը չէր համարվում առաջնային կամ կարևոր թեմա: Հիմնական տեսակետն այն էր, որ դրամավարկային քաղաքականության հիմնական գործառույթն է «խթանել» պարտքային ֆինանսավորվող գնումները՝ տոկոսադրույքների մակարդակները ցածր պահելով: Գնաճն առաջին հերթին համարվում էր օգտակար, մեղմացնող միջոց գործազրկության ցածր մակարդակ ապահովելու համար և գնաճը կարող էր կրճատվել միայն բարձր գործազրկության հանդեպ «հանդուրժողականության» արդյունքում: 60-ականների վերջին և 70-ականների

[118] Benigno, P., and M. Woodford. (2003) "Optimal Monetary and Fiscal Policy: a Linear-Quadratic Approach". pp.271-273

[119] Laurens B., Enrique G. de la Piedra, 1998, "Coordination of Monetary and Fiscal policies", IMF Working Paper No. 95/25, p. 10

սկզբին, երբ արժեզրկված դոլարը դարձավ ավելի քիչ պոպուլյար քան սպասվում էր, գնաճը սովորաբար բնութագրվում էր որպես ջերմային մետաֆոր («գերտաքացում») և դիտարկվում էր որպես էնդեմիկ խնդիր. անվերջ «կռվել» հարկաբյուջետային քաղաքականության գործիքների կիրառմամբ, բայց ոչ երբեք դրամավարկային քաղաքականության միջոցով: Իրականում 1965-1970թթ. կայուն աճող գնաճը պայմանավորված չէր զանգվածային բյուջետային դեֆիցիտի հետ, ինչպես ներկայացվում է սովորաբար, այլ աննպատակ դրամավարկային քաղաքականության արդյունքն էր[120]: Կարլ Բրունները և Ալան Մելթերը հետագայում նկատել են. «Քեյնսյան վերլուծության մեջ փողի զանգվածի աճի ավելացման պատճառը դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների պատշաճ կոորդինացիայի ապահովումն էր»[121]:

Երբ հարկերի բարձր դրույքաչափերի և ավելի արագ դրամական աճի «պատշաճ զուգակցումն» առաջացնում էին միայն ստագֆլյացիա, տնտեսագիտության հիմնական ուղղությունը դժվարությամբ որոշակի հետաքրքրություն ցուցաբերեց դրամի նկատմամբ՝ համատեղելով քեյնսյան-նեոդասական սինթեզը: Ջեյմս Թոբինը դա անվանել է «ձագարի» տեսություն (funnel theory). դա նշանակում է, որ կառավարությունը կարող է կա՛մ ֆիսկալ, կա՛մ դրամական խթաններով ազդել ձագարի մի եզրին, իսկ ՀՆԱ-ի ավելի արագ աճը դուրս կգա մյուս կողմից[122]: Եթե տնտեսությունը լրիվ զբաղվածության մակարդակից ցածր է, ապա անվանական ՀՆԱ-ի աճն ավտոմատ կերպով կապահովի իրական ՀՆԱ-ի ավելի արագ աճ: Առաջարկը ստեղծում է սեփական պահանջարկը՝ համաձայն Սեյի օրենքի: Եթե տնտեսությունը լրիվ զբաղվածության մակարդակում է, և հակառակը, աշխատողները պահանջում են ավելի բարձր աշխատավարձ և գործատուները գները կբարձրացնեն այդ ծախսերը ծածկելու համար՝ ստեղծելով «աճող պարույր», որը ենթադրում էր աշխատավարձ-գներ մեխանիզմի վերահսկում: Սակայն նախագահ Նիքսոնի աշխատավարձ-գների վերահսկման փորձը

[120] Reynolds, A. (2001) "The Fiscal-Monetary Policy Mix". Cato Journal, Vol. 21, No. 2, p. 263
[121] Brunner, K., and Meltzer, A.H. (1997), "Money and the Economy: Issues in Monetary Analysis". Cambridge: Cambridge University Press, p. 69
[122] Tobin, J.1986. "The monetary-fiscal policy mix: Long-run implications". The American Economic Review, 76(2): 213-218.

ձախողվեց՝ 1973-75թթ.-ին սարսափելի «ստագֆլացիա» ստեղծելով[123]: Այդ ժամանակ փորձված պահանջարկի կառավարման մեխանիզմը կրել է վստահելիություն մշտական կորուստ: Թեև անկման և գնաճի համադրությունը կարծես անոմալիա էր, եթե այն դիտարկվում էր «ձագարի» տեսություն միջոցով, այնուամենայնիվ, դա նորմ էր, այլ ոչ թե բացառություն հետ Բրետտոն Վուդսյան ժամանակաշրջանում (այսինքն՝ 1970-71, 1973-75, 1980-82 և 1990-91): Ճգնաժամերի քեյնսյան «բուժումը» պահանջում էր խթանել պահանջարկը, իսկ գնաճի բուժումը պայմանավորված էր պահանջարկը սանձելու (զսպելու) միջոցով, բայց ակնհայտորեն անհնար էր երկուսն էլ անել միաժամանակ: Սա ստիպել է Ռոբերտ Մանդելին առաջարկել, որ գնաճը դադարեցնելու աշխատանքը պետք է ամբողջությամբ հանձնվի դրամավարկային քաղաքականությանը (ինչպես այժմ այն կոչվում է «գնաճային թիրախ»), իսկ հարկաբյուջետային քաղաքականության գործիքակազմը պետք է ընդլայնվի՝ ներառելով միկրոտնտեսական կենտրոնացման առաջարկի կողմը, այսինքն՝ հարկային խթանման, սեփականաշնորհման միջոցով պոտենցիալ առաջարկը մեծացնելով[124]:

Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների փոխգործակցության հարցն ավանդաբար քննարկվում է Մանդել-Ֆլեմինգի մոդելի շրջանակներում, որտեղ ներքին մնացորդը ֆիսկալ քաղաքականության հիմնական նպատակն է, իսկ արտաքին մնացորդը դրամավարկային քաղաքականության նպատակն է[125]: Հետագայում, Սարջենտը և Ուոլասը իրենց առաջատար աշխատության մեջ քաղաքականությունների փոխգործակցությունը համարում են անընդունելի խաղ երկու իշխանությունների միջև, ինչը հանգեցնում է քաղաքականությունների կոորդինացման՝ Պարետտո արդյունավետության հասնելու համար: Նրանք նկարագրել են դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների փոխհարաբերությունները, որպես մի խաղ, որի մեջ առաջինը քայլ իրականացնողն իր կանոնները թելադրում է մյուսին: Նրանք հայտարարեցին, որ նույնիսկ դրամավարկային

[123] Sargent, T.J. (1988) "The Role of Monetary Policy under U.S. Institutions." In A. Anderson and D.J. Bark (eds.) Thinking about America: The United States in the 1990s, 311–322.
[124] Mundel Robert, 1971 "The dollar and the policy mix:1971", Essays in international finance, Princeton, No.85, pp.15-18
[125] Mundell, R., 1962, "The Appropriate Use of Monetary and Fiscal Policy for Internal and External Stability", IMF Staff-Papers 9, 1, 70-79.

միջավայրում հարկաբյուջետային քաղաքականությունը կարող է հանդես գալ որպես գերիշխող՝ դրանով իսկ նպաստելով, որ դրամավարկային քաղաքականությունը կկորցնի գների մակարդակի վերահսկողության գործառույթը: Նրանք հայտարարեցին, որ կարճաժամկետ կտրվածքով գնաճը թեև դա դրամական երևույթ է, սակայն, երկարաժամկետ հեռանկարում դառնում է ֆիսկալ խնդիր: Սա, իր հերթին, կարևորում է ֆիսկալ կարգապահությունը՝ որպես դրամավարկային կայունության նախադրյալ[126]:

Դրամավարկային քաղաքականությունը ֆիսկալ քաղաքականությունից առանձնացնող փաստարկը լավագույնս հիմնված է այն ենթադրության վրա, որ քաղաքականություններից մեկի գործողությունները չեն ազդում մյուսի նպատակային փոփոխականների վրա: Մասնավորապես, դա պետք է սահմանի հետևյալ պահանջները. հարկաբյուջետային քաղաքականությունը չի հանդիսանում գնաճի հիմնական աղբյուրը, դրամավարկային քաղաքականության ազդեցությունը պետական բյուջեի վրա փոքր է[127]: Այս երկու պայմանները երաշխավորում են, որ երկու կողմերի քաղաքականության արտաքին ազդեցությունները, որոնք ընկած են ֆիսկալ և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման խնդիրների հիմքում, շատ աննշան են: Եթե նման արտաքին ազդեցություններն ուժեղ են, ապա կոորդինացման բացակայությունը հանգեցնում է տնտեսական քաղաքականության անարդյունավետության: Հակառակ պարագայում, նկատի ունենալով, որ քաղաքականության երկու դերակատարները կարող են հասնել ավելի լավ արդյունքների, անհրաժեշտ է հաշվի առնել իրենց գործողությունների ազդեցությունը մյուս մասնակիցների թիրախային նպատակների վրա: Միևնույն ժամանակ, դրամավարկային և հարկաբյուջետային ինստիտուտների տարանջատման սկզբունքը հիմնված է այն հանգամանքի վրա, որ մոնետար և հարկաբյուջետային քաղաքականությունները թողնելով կառավարության ձեռքում, հանգեցնում է անբավարար գնաճի կողմնակալության՝ հայտնի ժամանակային հետևողականության խնդրի պատճառով (time-consistency problem): Այնուհետև կառավարությունները

[126] Sargent, T. and Wallace, N., 1981, "Some Unpleasant Monetarist Arithmetic", The Federal Reserve Bank of Minneapolis Quarterly Review 531.pp. 2-15

[127] Woodford, M. (2001), "Fiscal requirements for price stability", Journal of Money, Credit and Banking 33, pp. 669-728.

կփորձեն օգտվել դրամավարկային քաղաքականության լծակներից՝ հարկերի և սուբսիդիաների կողմից ստեղծված աղավաղումները շտկելու համար, որը կարող է պայմանավորված լինել հանկարծակի գնաճի միջոցով արտադրության և զբաղվածության մակարդակի անընդհատ նվազեցմամբ: Ակնկալելով դա՝ մասնավոր հատվածը սպասում է գնաճի ավելի բարձր մակարդակ. հավասարակշռության ժամանակ գնաճը դրական է, որի պարագայում արտադրության և գնաճի ավելացումը մշտական չի լինի[128]:

Համապատասխան համակարգման մեխանիզմների և դրամավարկային ու հարկաբյուջետային քաղաքականությունների գործիքների ստեղծումը վերջնական նպատակների իրականացման նախապայմանն է երկու ոլորտների քաղաքականություն մշակողների համար, քանի որ այլ կերպ առանձին քաղաքականության և փոխադարձ հակասող նպատակներ իրականացնողները կարող են առաջացնել տարամետ մակրոտնտեսական միտումներ: Մեծ դեպրեսիան, որը տեղի է ունեցել «մեծ կայունության» (“great moderation”) ժամանակաշրջանից հետո և զգալիորեն վնասել է դրամավարկային և հարկաբյուջետային իշխանությունների վստահությունը, ոչ մի կերպ չի նվազեցրել, այլև ավելացրել է համապատասխան կոորդինացման անհրաժեշտությունը: Դա պայմանավորված է նաև նրանով, որ այստեղ խնդիրը ոչ թե մեկ տնտեսական գործիքի միաժամանակյա օգտագործումն է մյուսի հաշվին, այլ ուշադրության կենտրոնացումը կոորդինացման հաստատման մեթոդների վրա:

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալ ուսումնասիրությունները և փաստերը, հանգում ենք այն եզրակացության, որ ցածր գնաճային, կայուն տնտեսական աճ ապահովելու նպատակով ՀՀ-ում Կենտրոնական բանկի և կառավարության կողմից մշակվող դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների կոորդինացման և դրա հետ կապված ինստիտուցիոնալ ու գործնական կարգավորումների հիմքում պետք է լինեն հետևյալ սկզբունքները՝ ապահովելու տարամետ մակրոտնտեսական միտումների բացակայությունը և ներդաշնակ ու փոխադարձ համաձայնեցված թիրախների առկայությունը: Դրանք են.

[128] Barro, R. and Gordon, D. (1983b), “Rules, discretion and reputation in a model of monetary policy”, Journal of Monetary Economics 12, 101-121.

- սահմանել հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների ներդաշնակ և փոխադարձ համաձայնեցված թիրախներ՝ ոչ գնաճային, կայուն տնտեսական աճ ապահովելու նպատակով,
- հարկաբյուջետային քաղաքականությունը չպետք է հանդիսանա գնաճի հիմնական աղբյուրը, միևնույն ժամանակ դրամավարկային քաղաքականության ազդեցությունը պետական բյուջեի վրա պետք է փոքր լինի,
- նպաստել քաղաքականության որոշումների արդյունավետ իրականացմանը հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների սահմանված նպատակներին հասնելու համար՝ տեղեկատվության փոխադարձ փոխանակման և նպատակաուղղված քննարկումների միջոցով,
- ստիպել Կենտրոնական բանկին և կառավարությանը կայուն քաղաքականություն վարել:

Միաժամանակ, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման հիմնավորումը բխում է նպատակների փոխկապակցվածությունից: Առանց արդյունավետ քաղաքականության կոորդինացման, ֆինանսական անկայունությունը կարող է հանգեցնել բարձր տոկոսադրույքների, փոխարժեքի ճնշումների, բարձր գնաճի և տնտեսական աճի վրա բացասական ազդեցության:

2.3 Հարկաբյուջետային քաղաքականությունը և մակրոտնտեսական կայունությունը զարգացող երկրներում

Հարկաբյուջետային քաղաքականությունը շատ մեծ դեր է խաղում զարգացող երկրների տնտեսություններում: Դրա վերաբերյալ որոշումները՝ հատկապես եթե ճիշտ կերպով համահունչ են դրամավարկային քաղաքականությանը, կարող են մեղմել գործարար պարբերաշրջանների բացասական ազդեցությունները՝ ապահովելով համապատասխան պետական ներդրումների և եկամուտների վերաբաշխում:

Զարգացող երկրներում հարկաբյուջետային հիմնախնդիրներն ունեն լայն շրջանակներ՝ միաժամանակ ինդուստրիալ զարգացած երկրներից տարբերվելով

ֆիսկալ կարգավորումների մոտեցումներով: Հիմնական առանձնահատկությունները հետևյալներն են[129].

- զարգացող երկրները զարգացած երկրների համեմատ ունեն հարկեր/ՀՆԱ և ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունների ցածր մակարդակ՝ չնայած զարգացող երկրներին անհրաժեշտ են ավելի շատ ֆինանսական միջոցներ,
- զարգացող երկրներում հարկաբյուջետային դիրքը հաճախ պարբերաշրջանային է,
- պետական ծախսերի պարբերաշրջանային փոփոխականությունը գերազանցում է մասնավոր ծախսերի մեծությանը խոշոր չափերով,
- զարգացող երկրների հարկային ռեսուրսներն ավելի անկայուն են, քան զարգացած երկրներում:

Այսպես, այս բաժնում ներկայացվում են զարգացող երկրներում հարկաբյուջետային քաղաքականության ակնհայտ տարբերությունները, որոնց պատճառները կարող են առաջանալ ֆինանսական շուկաների անկայունությունների և պետական եկամուտների ու ծախսերի կառուցվածքի թերությունների համադրությունից: Հարկաբյուջետային իշխանությունները ներկայացնում են մի դերակատարություն, որը փորձում է պահպանել մասնավոր հատվածի համար համեմատաբար հարթ վճարային հոսքերի ապահովումը (այսինքն՝ ապահովելով սոցիալական պաշտպանվածության մեխանիզմները)՝ ի դեմս էական, ոչ երաշխավորված եկամուտների ռիսկերի:

Զարգացող երկրներում բարձր և աճող պետական ծախսերի ճնշումները բազմազան են: Մեկ շնչի հաշվով եկամուտների ցածր և միաժամանակ աղքատության բարձր մակարդակի պայմաններում զարգացող երկրներն անհանգստացած են տնտեսական աճի համար բարձր տեմպեր ապահովելու համար: Հիմնականում ինստիտուտների մշտական անարդյունավետությունը խնայողությունների հավաքագրման և ուղղորդման գործընթացում նվազեցնում է պետության խիստ կարևոր դերը ռեսուրսների օգտագործման և զարգացման գործընթացում: Թույլ կարգավորման մեխանիզմների և անկատար շուկայական ազդանշանների պայմաններում պետությունը

[129] Talvi, E. and Vegh, C. (2005). Tax base variability and procyclical fiscal policy in developing countries. Journal of Development Economics, 78(1), pp.156-190.

կարևոր դեր ունի ներդրումային ֆոնդերի բաշխման և աղքատության դեմ պայքարի ծրագրերում, ինչպես նաև դրանց նախագծման և պլանավորման գործընթացում:

Վերջին տարիներին զարգացող երկրների տնտեսություններում տնտեսական աճը դանդաղել է, և ակնկալվում է, որ ֆինանսավորման դժվարությունները, որոնց հետ նրանք բախվում են, կմեծանան: Համաշխարհային ֆինանսատնտեսական պայմանների խստացումը և ֆինանսական շուկաների անկայունության խոչընդոտները կարող են հանգեցնել կապիտալի ներհոսքի կտրուկ դանդաղեցումների: Քանի որ կապիտալի ներհոսքերի հետ կապված ռիսկերը կարող են զարգացող տնտեսություններում խաթարել դրամավարկային քաղաքականությանը, այս պարագայում հատկապես կարևորվում է հարկաբյուջետային քաղաքականության հակապարբերաշրջանային գործիքների կիրառությունը: Սակայն, որքանո՞վ արդյունավետ կլինի հարկաբյուջետային քաղաքականությունը, որը կխթանի տնտեսությանն անկումային ժամանակաշրջանում, շարունակվում է մնալ զարգացող երկրների համար կարևոր մարտահրավեր:

Միաժամանակ, հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության բարձրացման անհրաժեշտություններով պայմանավորված՝ անհրաժեշտ է գնահատել և հաշվի առնել ոչ միայն կարճաժամկետ հատվածում տնտեսական համակարգում ընթացող զարգացումները, այլև երկարաժամկետ հատվածում մակրոտնտեսական միջավայրի փոփոխականության միտումները և ուղղությունները, բյուջետային եկամուտների հնարավոր ծավալը և այլն: Ակնհայտ է նաև, որ ՀՀ-ում պետական ծախսերի կառավարման և պլանավորման ուղղությամբ տարեկան մշակվող ծրագրերը սահմանափակվում են այն պատճառով, որ դրանց հիմքում դրվում են կարճաժամկետ մակրոտնտեսական կանխատեսումներ և շատ դեպքերում կատարվող ծախսերի և դրանցից ակնկալվող արդյունքների միջև փոխկապվածությունը բացակայում է: Ըստ էության հենց այս հիմնահարցի լուծումն էլ պետք է ընկած լինի հարկաբյուջետային գործընթացի՝ մասնավորապես միջնաժամկետ ծախսերի ծրագրի համակարգի զարգացման հիմքում[130]:

[130] Բոստանջյան Վ.Բ., «Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2017թ., էջ 350-351

Մյուս կողմից, զարգացող երկրների համար կայուն հարկաբյուջետային քաղաքականության ապահովման համար կարևոր նախապայմաններ են հանդիսանում համապատասխան ֆիսկալ տիրույթի առկայությունը և գործող կայուն հարկաբյուջետային կանոնների համակարգը:

Գրականության մեջ օգտագործվում է ֆիսկալ տիրույթի (fiscal space) մի շարք սահմանումներ: Մենք հետևում ենք Լեյի տեսակետին և սահմանում ֆիսկալ տիրույթը որպես «բյուջետային ռեսուրսների մատչելիություն որոշակի նպատակների համար՝ առանց վտանգելու կառավարության ֆինանսական դիրքը կամ տնտեսության կայունությունը»[131]: Այս ընդլայնված սահմանումը թույլ է տալիս հարկաբյուջետային տիրույթը դիտարկել բազմաբնույթ հարթություններում. առաջին՝ հարկային վճարունակության ռիսկերը, երկրորդ՝ սահմանվում է վճարային հաշվեկշռի խոցելիությունը, ինչպես օրինակ, պետական պարտքի մարման ժամկետը և ոչ ռեզիդենտների մասնաբաժինը պարտքի մեջ, որոնք կարող են առաջացնել վերաթողարկման կամ սուվերեն պարտքի իրացվելիության ռիսկ: Երրորդ հարթությունը ներառում է այն գործոնները, որոնք կարող են ազդել մասնավոր հատվածի հաշվեկշիռների վրա և, ի վերջո, հանգեցրել են պայմանական ֆիսկալ պարտավորությունների ձևավորմանը, ինչպիսիք են արտաքին պարտք/ՀՆԱ կամ արտաքին պահուստներ հարաբերակցությունը, կարճաժամկետ պարտքի մասնաբաժինն արտաքին պարտքի մեջ և մասնավոր հատվածի վարկավորումը ՀՆԱ-ի նկատմամբ:

Գրականությանը համապատասխան անհրաժեշտ է ֆիսկալ տիրույթը դիտարկել հիմնականում ֆիսկալ վճարունակության տեսանկյունից: Ֆիսկալ վճարունակության ռիսկը չափվում է երեք այլընտրանքային եղանակներով՝ տարբեր տարրեր գրավելու համար. առաջին հերթին պետության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը (ընթացիկ պարտքի կայունության գնահատման միջոց), երկրորդը ֆիսկալ հաշվեկշիռ/ՀՆԱ հարաբերակցությունը (պարտքի կուտակման հոսքային միջոց՝ նշելով ապագա պարտքի կայունությունը), և երրորդ՝ ֆիսկալ կայունության ճեղքը: Ֆիսկալ կայունության ճեղքը (բացը) որոշվում է որպես առաջնային իրական հավասարակշռության և պարտքը

[131] Ley, E. 2009. "Fiscal Policy for Growth", PREM N 131, World Bank, Washington, DC, p.1

կայունացնող առաջնային հավասարակշռության միջև տարբերություն, որը կախված է թիրախային պարտք/ՀՆԱ հարաբերակցությունից երկարաժամկետ հեռանկարում, տոկոսադրույքից և տնտեսական աճից: Այս վերջին միջոցառումը ենթադրում է, որ պարտքի կայունությունը կախված է արտադրության աճից և տոկոսադրույքներից, ինչպես նաև չմարված պարտքից և դեֆիցիտից: Բացի ֆիսկալ վճարունակության ռիսկի այս միջոցառումներից, անհրաժեշտ է նաև քննարկել վճարային հաշվեկշռի խոցելիության և մասնավոր հատվածի նկատմամբ պարտքի որոշ ասպեկտներ:[132]: Անհրաժեշտ է նաև հաշվարկել հարկաբյուջետային կայունության բացերը՝ հետևելով Լեյին, ով ֆիքսում էր ֆիսկալ կայունության վրա ճնշումները, որոնք առաջանում են խոշոր հարկաբյուջետային մնացորդներից, որոնք կուտակվում են ժամանակի ընթացքում անկայուն պարտքային մասնաբաժիններից, նույնիսկ եթե սկզբնական պարտքի ծավալները չնչին են: Ընդհանուր հաշվեկշռի կայունության բացը՝ ogap (overall balance sustainability gap), ներկայացվում է հետևյալ կերպ[133].

$$\mathrm{ogap} = \mathrm{b} - \left(\frac{-\gamma}{1+\gamma}\right) * \mathrm{d}^* \qquad (1)$$

որտեղ γ-ը ներկայացնում է անվանական ՀՆԱ-ի աճի տեմպը, b՝ ընդհանուր ֆիսկալ հաշվեկշիռը (ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսներով), իսկ վերջին փոփոխականը՝ ընդհանուր ֆիսկալ հավասարակշռությունը, որը կայունացնում է պարտքի մասնաբաժինը (ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսներով): Պարտքի մասնաբաժինը՝ d*, թիրախային պարտք/ՀՆԱ հարաբերակցությունն է հանդիսանում: Առաջնային հավասարակշռության կայունության բացը՝ pgap (primary balance sustainability gap), առաջնային հավասարակշռության և պարտքի կայունացնող առաջնային հավասարակշռության միջև տարբերություն է[134].

$$\mathrm{pgap} = \mathrm{p} - \left(\frac{i-\gamma}{1+\gamma}\right) * \mathrm{d}^* = \mathrm{p} - \left(\frac{r-g}{1+g}\right) * \mathrm{d}^* \qquad (2)$$

որտեղ p-ն առաջնային հաշվեկշիռն է (ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսներով), i-ն՝ անվանական երկարաժամկետ տոկոսադրույքն է, γ-ը՝ անվանական ՀՆԱ-ի աճն է, իսկ

[132] Նույն տեղում՝ էջ 1-2:
[133] Raju Huidrom, M. Ayhan Kose, and Franziska L. Ohnsorge, 2016 "Challenges of Fiscal Policy in Emerging and Developing Economies", CAMA Working Paper 34/2016, p.4
[134] Նույն տեղում:

r-ը՝ իրական տոկոսադրույքը (սահմանվում է որպես ՀՆԱ դեֆլյատորի կողմից դեֆոլտի անվանական տոկոսադրույք), g-ն՝ իրական աճի տեմպը, և d*-ը՝ թիրախային պարտքի բաժինը:

Այսպես, ենթադրենք պետությունը պլանավորում է միջնաժամկետ բյուջեն և փորձում է գնահատել ռեսուրսների մոբիլիզացման ներուժը երեք տարվա ընթացքում (դա կարող է լինել նաև տարեկան բյուջեի համատեքստում): Եկամտաբերության գնահատականները կարող են հանգեցնել այն հանգամանքներին, որ ՀՆԱ-ի լրացուցիչ 4 տոկոսային կետը կարող է բարձրացվել հարկերի բազայի ընդլայնման և հարկային վարչարարության միջոցառումների միջոցով: Դոնորների և զարգացման գործընկերների հետ բանակցությունները կարող են բերել ՀՆԱ լրացուցիչ 3 տոկոսի ավելացում պլանավորման ժամանակահատվածում դրամաշնորհային օժանդակության միջոցով: Պետական ծախսերի վերանայումը կարող է որոշել առավել ռացիոնալ ոլորտները, որոնք ռեսուրսների վերաբաշխման արդյունքում ՀՆԱ-ի 3 տոկոս հավելաճ կթողարկեն: Իսկ մակրոտնտեսական և պարտքի կառավարման հարցերը կարող են վկայել, որ նշված ժամանակահատվածի ընթացքում փոխառությունները պետք է սահմանափակվեն ՀՆԱ-ի 2 տոկոսի սահմաններում: Այս թվերը ճշմարիտ են և թույլ են տալիս մեզ ցույց տալ հարկաբյուջետային տիրույթը, որը ցանկացած երկիր կարող է օգտագործել[135]:

[135] Development Committee, "Fiscal Policy for Growth and Development" (DC2006–3), World Bank April 2006, p.18

Գծապատկեր 2.3.1 *Հարկաբյուջետային տիրույթը - «Ֆիսկալ ադամանդը»*[136]



Վերոնշյալ գծապատկերի նպատակն է ներկայացնել հարկաբյուջետային տիրույթի ստեղծման եղանակների առանձնահատկությունները: Գծապատկերի արժեքն այն է, որ բոլոր 4 գործիքները միաժամանակ դիտարկելով, ստիպում է մեզ հասկանալ, որ փոխառությունները ֆիսկալ տիրույթի ստեղծման միայն մի գործիքն են հանդիսանում, և որ կան երեք այլ գործիքներ, որոնք նույնպես անհրաժեշտ է գնահատել: Այն թույլ է տալիս հաշվի առնել նաև յուրաքանչյուր տարբերակի սահմանային արժեքը՝ գնահատելով համապատասխան ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը և ֆիսկալ տիրույթի ստեղծման հնարավորությունները:

Խոշոր քննարկումներ և մտավախություններ են առաջացել, թե արդյո՞ք արտաքին

[136] Նույն տեղում:

օգնության ներհոսքի ընդլայնումը զարգացող երկրներում «հոլանդական հիվանդության» սպառնալիքներ կստեղծի, թե ոչ: ԱՄՀ-ի կողմից վերջին ժամանակներում կատարած հետազոտությունների միջոցով վերանայվեցին մի շարք զարգացող երկրների փորձը և ներկայացվեց այն կարծիքը, որ արտաքին օգնությունները շատ դեպքերում «հոլանդական հիվանդության» ազդեցություն չեն ունեցել, քանի որ օգնություն ստացող երկրներն օգտագործում են մեծ քանակությամբ ֆինանսական ներհոսքեր պահուստների ստեղծման համար՝ խուսափելով իրական տնտեսության վրա ճնշումներից: Այս միտումների շարունակումը կարող է նվազեցնել օգնությունների ավելացման ծավալները, և դոնոր երկրները չեն կարող ակնկալել ռեսուրսների տրամադրման հնարավորություններ հիմնականում պաշարների ձևավորման համար: Արդյունավետ օգնության ծավալները կառավարելու համար կպահանջվի արտադրողականության բարձրացում, որը ոչ առևտրային ակտիվների վրա ճնշում է գործադրում, մինչդեռ սա հնարավոր է միայն տեսականորեն, ինչը գործնականում լուրջ մարտահրավեր է[137]:

Այսպիսով, հարկաբյուջետային տիրույթի գաղափարն օգնում է մեզ հստակեցնել հարկաբյուջետային քաղաքականության ձևավորման և պլանավորման ժամանակ առկա մարտահրավերները, որոնք արդյունքում ապահովում են երկարաժամկետ տնտեսական աճ:

Միևնույն ժամանակ զարգացող երկրների համար էական նշանակություն ունի սահմանել Ֆիսկալ քաղաքականության դիրքը: Ուստի, անհրաժեշտ է ներկայացնել գրականության մեջ լայն տարածում ունեցող ֆիսկալ դիրքի գնահատման երկու մոտեցումները. կառուցվածքային հավասարակշռությունը և պետական սպառողական ծախսերը: Կառուցվածքային հավասարակշռությունը հավասարեցնում է ընդհանուր հաշվեկշռում եկամուտների աճն ու անկումը (օրինակ, եկամտահարկի պարբերաշրջանային բաղադրիչը) և ծախսերը (հատկապես սոցիալական նպաստները), որոնք կարող են վերագրվել գործարար պարբերաշրջանին: Կառուցվածքային հավասարակշռությունը սահմանվում է որպես պարբերաշրջանային ճշգրտված

[137] IMF (2005c). "The Macroeconomics of Managing Increased Aid Flows: Experiences of Low-Income Countries and Policy Implications." August, p.23

եկամուտների և պարբերաշրջանային ճշգրտված ծախսերի միջև տարբերություն (ենթադրելով զրոյին մոտ առաձգականություն): Կառուցվածքային հավասարակշռությունը (structural balance) ներկայացվում է հետևյալ կերպ[138].

$$sbal = revenues(1 + ygap)^{-1} - expenditures(1 + ygap)^{0.1} \quad (3)$$

որտեղ ygap-ը ներկայացնում է արտադրության բացը:

Մյուս չափանիշը՝ պետական սպառողական ծախսերը, որոնք հիմնականում պետական հատվածի աշխատավարձերն են և ապրանքների ու ծառայությունների համար իրականացվող ծախսերը, ապահովում են հարկաբյուջետային քաղաքականության դիրքի նեղ սահմանումը, սակայն այն տնտեսապես ավելի համադրելի է և ենթակա չէ անորոշության, որը չի պարունակում պարբերաշրջանային ճշգրտումներ, օրինակ, հարկային եկամուտների պարբերաշրջանային եկամտաբերության առաձգականության կամ արտադրության բացի մեծության վերաբերյալ անորոշություն[139]:

Ինչպես հայտնի է տնտեսական տատանումներն ընդհանուր առմամբ շատ ավելի մեծ են զարգացող տնտեսություններում: Միաժամանակ, բարձր տնտեսական տատանումները զարգացող տնտեսություններում հանգեցնում են դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների ավելի մեծ պարբերաշրջանային փոփոխությունների: Արդյունքում, այն ինստիտուցիոնալ բարեփոխումը, որը քաղաքական դաշտում նոր շեշտադրում է իրականացնում, և որը կարող է պատասխանատու լինել կրճատված հակապարբերաշրջանային հարկաբյուջետային քաղաքականության համար, հանդիսանում է ֆորմալ հարկաբյուջետային կանոնների իրականացումը: Թեև վերջին տարիներին նկատվում է հարկաբյուջետային կանոնների միջոցով քաղաքականության ղեկավարման և խոչընդոտման գործողությունների իրականացում, սակայն, հիմնականում ուշադրությունը կենտրոնացել է պետական բյուջեի դիրքի և պարտքի երկարաժամկետ կայունության, այլ ոչ թե ֆիսկալ կանոնների ազդեցությունը նվազեցնելու քաղաքականության հակապարբերաշրջանային բնույթի

[138] Huidrom R., Ayhan Kose M., Ohnsorge F., "Challenges of Fiscal Policy in Emerging and Developing Economies", CAMA Working Paper 34/2016, June 2016, p.5

[139] World Bank, 2015. "Having Fiscal Space and Using It. Global Economic Prospects". Washington, DC: World Bank, pp. 125-126

վրա: Հարկաբյուջետային կանոններն օրենսդրական համաձայնագրեր են, որոնք ուղղված են «դեֆիցիտի հակման» մեղմացմանը և հարկաբյուջետային կարգապահության խթանմանը՝ քաղաքականության մշակողների «ձեռքերը կապելու» միջոցով, որի նպատակը ծախսերի և եկամուտների ծրագրերի վերաբերյալ որոշումների սահմանափակումն է: Խթանելով ֆիսկալ կայունությունը գործարար պարբերաշրջանների ընթացքում՝ հարկաբյուջետային կանոնները կարող են նաև մեղմացնել հակապարբերաշրջանային ֆիսկալ քաղաքականությունը: Այնուամենայնիվ, սա կարող է տեղի ունենալ ֆիսկալ կանոնների անուղղակի հետևանքների արդյունքում, որոնք առաջին հերթին նախատեսված են պետական ֆինանսների երկարաժամկետ վճարունակության խթանման համար[140]:

Ինչպե՞ս կարող են հարկաբյուջետային կանոնները մեղմացնել հակապարբերաշրջանային քաղաքականության գործընթացը և զարգացող երկրներում ինչպիսի՞ կանոններ կամ պայմաններ կարող են դրանք առավել արդյունավետ դարձնել: Նախ, անուղղակի ուղղությունները, որոնց միջոցով հարկաբյուջետային կանոնները կարող են նվազեցնել ֆիսկալ հակապարբերաշրջանային պրոցեսը, հավանաբար կախված է կանոնների գործողության որոշակի տեսակից: Թեև հարկաբյուջետային կանոնների ցանկացած տեսակ կարող է սկզբունքորեն արդյունավետ լինել ֆիսկալ պարբերաշրջայնության նվազեցման համար, սակայն կարող են լինել քաղաքական, տնտեսական, ինստիտուցիոնալ կամ տեղեկատվության թափանցիկության պատճառներ, թե ինչպես ֆիսկալ մի կանոնը կարող է ավելի արդյունավետ լինել քան մյուսները: Օրինակ, պետական ծախսերի կանոնը, որը սահմանափակում է պետական ծախսերի աճի տեմպը, կնվազեցնի բյուջետային ծախսերի աճը՝ հատկապես պարբերաշրանների վերելքի փուլում, դրանով իսկ մասամբ կրճատելով քաղաքականության պարբերաշրջայնության բնույթը: Պարբերաշրանի ընթացքում բյուջետային դեֆիցիտը սահմանափակող հարկաբյուջետային կանոնները մյուս կողմից խթան կհանդիսանան կառավարության համար անկման փուլում պակասուրդների կրճատման համար, ինչը թույլ կտա նրանց ավելի մեծ բյուջետային ճկունություն անկման

[140] Bergman, M. and M. Hutchison (2015). "Economic Stabilization in the Post-Crisis World: Are Fiscal Rules the Answer?" Journal of International Money and Finance, 52: pp.82-101.

ժամանակ: Պարտքի կանոնները և եկամտի կանոնները, հավանաբար, կգործեն փոքր ինչ այլ քաղաքականությամբ: Հիմնական եզրահանգումն այն է, որ նախորդ ծախսային կանոնը հավանաբար գերիշխող է այլ կանոնների նկատմամբ, քանի որ, ընդհանուր առմամբ, ավելի հեշտ է վերահսկել և ստուգել պետական ծախսերը, քան եկամուտները[141]:

Հարկաբյուջետային կանոնները հավանական է, որ ավելի արդյունավետ կլինեն, եթե արդյունավետորեն զուգակցվեն կառավարության գործունեության հետ: Կառավարության գործունեության արդյունավետության բարձր մակարդակն, ընդհանուր առմամբ, կապված է բյուջետային թափանցիկության և բյուջեի կատարման արդյունավետության հետ: Հարկաբյուջետային կանոնները կարող են ավելի քիչ արդյունավետ լինել գնաճի նպատակդրման ռեժիմով երկրներում պարբերաշրջանների նվազեցման տեսանկյունից, այսինքն, գնաճի նպատակադրման քաղաքականությունն արդեն կարող է նվազեցնել քաղաքականության պարբերաշրջայնությունն այնքանով, որքանով հարկաբյուջետային կանոններն ավելորդ կլինեն:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ հարկաբյուջետային ավտոմատ կայունարարներն օգնում են մեղմել տնտեսական տատանումները: Դիսկրեցիոն հարկաբյուջետային քաղաքականության ներդրումը տնտեսական անկումների դեմ պայքարի ժամանակ շարունակվում է մնալ վիճելի խնդրի: Երկարաժամկետ լագերը, որոնք սովորաբար բնութագրում են ֆիսկալ քաղաքականության հիմնական փոփոխությունները, դանդաղեցնում են դիսկրեցիոն քաղաքականությունը դերը:

[141] Era Dabla-Norris, Nicolas End, Fazeer Rahim, John Zohrab and Matt Crooke, 2017," Republic of Armenia: Upgrading Fiscal Rules", IMF, Technical Assistance Report, pp. 1-58

ԳԼՈՒԽ 3: ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

3.1 ՀՀ-ում հարկաբյուջետային քաղաքականության բնույթն ու հարկաբյուջետային միջավայրի գնահատումը

Ընդհանրապես, «արդյունավետ» պետության և տնտեսական համակարգի ձևավորման համար անհրաժեշտ է ստեղծել պետական ֆինանսների կառավարման գործուն և արդյունավետ համակարգ: Այս ուղղությամբ իրականացվող բարեփոխումների հիմքում պետք է դրվեն ֆինանսական թափանցիկության, բյուջետային վերահսկողության, պետական կառավարման համակարգի գործունեության ծախսատարության սահմանափակման, պարտավորությունների և ռեսուրսների, բյուջետային համակարգի բոլոր մակարդակների իրավասությունների և պարտավորությունների հաշվեկշռվածության ու պետական պարտքի արդյունավետ կառավարման ապահովման սկզբունքները[142]:

Հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունն անհրաժեշտ է իրականացնել դրա մակրոտնտեսական հետևանքների գնահատմամբ: Կառավարության ակտիվ հարկաբյուջետային քաղաքականության ազդեցության գնահատումն անհրաժեշտ է իրականացնել՝ հաշվի առնելով գործարար պարբերաշրջանների ազդեցությունը: Վերջինս խիստ անհրաժեշտ է հատկապես հակաճգնաժամային ճիշտ քաղաքականություն ընտրելու և ճգնաժամի հետևանքները մեղմելու համար: Հարկաբյուջետային քաղաքականության մակրոհետևանքների ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է դիտարկել ինչպես քաղաքականության կարճաժամկետ ազդեցությունը տնտեսական իրավիճակի, մասնավորապես՝ տնտեսական աճի, այնպես էլ առավել երկարաժամկետ ազդեցությունը ՀՆԱ ներուժային մակարդակի վրա:

ՀՀ կառավարությունը նպատակադրել է առաջիկա տարիներին իրականացնել այնպիսի հարկաբյուջետային քաղաքականություն, որը կխթանի տնտեսական աճը և

[142] Բոստանջյան Վ.Բ., «Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2017թ., էջ 330

աստիճանաբար կբարձրացնի տնտեսական ակտիվության մակարդակը: Միաժամանակ, հարկաբյուջետային քաղաքականության մակրոտնտեսական շրջանակը միջնաժամկետ հատվածում ուրվագծվելու է պարտքը կայունացնող քաղաքականության համատեքստում, ինչը տնտեսական աճին խթանող մակրոտնտեսական կայուն միջավայրի նախապայման կհանդիսանա[143]:

Ինչպես արդեն նշել ենք, հարկաբյուջետային գործիքների ակտիվ օգտագործումը համարվում է տնտեսության պետական կարգավորման կարևորագույն լծակներից մեկը: Պետական ծախսերի և հարկերի նշանակությունը մակրոտնտեսական կայունության ապահովման մեջ պայմանավորված է տնտեսական գործընթացների վրա դրանց նպատակաուղղված և արդյունավետ ազդեցությամբ: ՀՀ-ում հարկաբյուջետային քաղաքականության մակրոհետևանքների գնահատումը և հարկաբյուջետային քաղաքականության առկա հիմնախնդիրները բացահայտելու և անհրաժեշտ եզրակացություններ կատարելու համար անհրաժեշտ է վերլուծել վերջին տարիներին ՀՀ կառավարության ֆիսկալ քաղաքականության բնույթը և թե որքանո՞վ է այն եղել կայունացնող, որքանո՞վ է այն ազդել տնտեսական աճի վրա՝ համախառն առաջարկի և պահանջարկի կարգավորման առումով և որքանո՞վ է ֆիսկալ քաղաքականությունն ունակ ազդելու միջնաժամկետ կայուն տնտեսական աճի վրա առաջիկա տարիներին: ՀՀ ֆիսկալ կայունության վերլուծության համար առաջնային գնահատականների համար անհրաժեշտ է վերլուծել հարկաբյուջետային համակարգի այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են՝ պետական բյուջեն, համախառն պետական պարտքը, պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը, պետական պարտքի սպասարկման մասնաբաժինը ընդհանուր բյուջետային ծախսերի մեջ և այլ կարևոր ֆիսկալ ցուցանիշներ:

Վերլուծությունը սկսենք ՀՀ պետական պարտքի գնահատմամբ, որը միջնաժամկետ կայուն տնտեսական աճ ապահովելու համար կարևոր գործոն է հանդիսանում: Պարտքի միջոցով ներգրավված միջոցները կարող են խթանել կամ խոչընդոտել տնտեսական աճը՝ պայմանավորված նրանով, թե ինչպես են փոխառու միջոցներն օգտագործվում: Եթե բյուջետային փոխառություններն օգտագործվում են

[143] ՀՀ Կառավարության 2017-2022 թթ. ծրագիր, Երևան 2017

տնտեսական մեծ ազդեցություն ունեցող ներդրումային ծրագրերի ֆինանսավորման համար (մասնակցում են ավելացված արժեքի ստեղծմանը), ապա այդ պարագայում փոխառու ֆինանսական ռեսուրսների օգտագործումը կնպաստի տնտեսական աճին և կառավարության համար կհանդիսանա որպես հավելյալ եկամուտների աղբյուր: Սակայն, եթե փոխառու միջոցներն օգտագործվում են ընթացիկ ծախսերը ֆինանսավորելու համար, ապա պետական պարտքի սպասարկումը և պետության պարտքային կայունությունն առաջացնում են անկայունության միավայր:

Վերջին տարիներին ՀՀ պետական պարտքն աճել է բարձր տեմպերով, ինչը տնտեսագետների և հարկաբյուջետային քաղաքականություն մշակողների համար մտածելու և վերլուծություններ կատարելու լուրջ հիմքեր է ստեղծել:

Գծապատկեր 3.1.1. *ՀՀ պետական պարտքը 2007-2017 թթ. (մլն ԱՄՆ դոլար)*[144]



ՀՀ պետական պարտքը 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 6 մլրդ 796 մլն դոլար կամ 3 տրլն 28.3 մլրդ դրամ՝ ՀՆԱ-ի 60.7 տոկոսը (Գծապատկեր 3.1.1), իսկ 2018 թվականի տարեվերջին այն կկազմի 7 մլրդ 168 մլն դոլար կամ 3 տրլն 46.3 մլրդ դրամ, կամ ՀՆԱ-ի 59.2 տոկոսը: Այդ թվում՝ 2017 թ. ՀՀ կառավարության

[144] ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

արտաքին պարտքը 4 մլրդ 934.9 մլն դոլար է, ներքին պարտքը՝ 1 մլրդ 259.9 մլն դոլար, ՀՀ Կենտրոնական բանկը 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ունի 611.4 մլն դոլարի արտաքին պարտք[145]: Հիշեցնենք, որ օրենսդրությամբ որպես կառավարության պարտքի և համախառն ներքին արդյունքի հարաբերակցության սահմանային շեմ սահմանվել է 60 տոկոս[146]: 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կառավարության պարտքը 6 մլրդ 184.6 մլն դոլար է, կամ ՀՆԱ-ի 55.3 տոկոսը (Գծապատկեր 3.1.2): ՀՀ կառավարությունն արտաքին վարկերի գծով 2018թ. ակնկալում է ներգրավել 410.6 մլն ԱՄՆ դոլարի վարկային միջոցներ, որից՝ 98.5 մլն ԱՄՆ դոլարը՝ բյուջետային աջակցության վարկերի գծով, 312.1 մլն ԱՄՆ դոլարը՝ նպատակային վարկերի գծով, սակայն Կառավարությունն ակնկալում է, որ տնտեսական աճի հաշվին պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կնվազի (Վիճակագրական տվյալներն ըստ ՀՀ ԱՎԾ տարեգրքերի և տվյալների բազաների):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պետք է եզրակացնենք, որ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը մոտենում է կրիտիկական սահմանաչափին, ինչը պետք է լինի կառավարության ուշադրության կենտրոնում՝ որպես միջնաժամկետ կայուն աճ ապահովելու համար հիմնական խոչընդոտ:

Սակայն, այս ամենից հարց է առաջանում, թո՞ւյլ է տալիս արդյոք ՀՀ պետական պարտքի ներկա մակարդակն իրականացնել ակտիվ հարկաբյուջետային քաղաքականություն: Իրականում 2017 թվականին պարտքի կայունության պահպանման նպատակով նպատակադրվել և իրականացվում է զսպող հարկաբյուջետային քաղաքականություն, ինչի արդյունքում պետական սպառումը 2017 թվականին նվազել է 4.3%-ով, որը 2018 թվականին կունենա նվազման ավելի մեծ տեմպ, քանի որ 2018 թվականին կշարունակվի հարկաբյուջետային կոնսոլիդացիան՝ եկամուտների չեզոք, իսկ ծախսերի զսպող ազդակի դրսևորմամբ[147]:

---

[145] ՀՀ կառավարության 2018 թվականի բյուջետային ուղերձ
[146] «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենք, 26.05.2008թ
[147] «2018թ. Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք,

Գծապատկեր 3.1.2. *ՀՀ Պետական պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ (տոկոսներով) դոլարային արտահայտությամբ,* (2007-2017թթ.) [148]



Մեկ այլ անհանգստացնող հանգամանք է համարվում պետական բյուջեի ծախսերի մեջ պետական պարտքի սպասարկման մասնաբաժինը, որը, համաձայն 2018 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի, կկազմի բյուջետային ծախսերի 9.6 տոկոսը (Գծապատկեր 3.1.3), ինչն արդեն մտահոգիչ թիվ է հանդիսանում միջնաժամկետ տնտեսական աճ ապահովելուն նպատակադրված հարկաբյուջետային քաղաքականության համար:

Գծապատկեր 3.1.3. *ՀՀ Պարտքի սպասարկման մասնաբաժինն ընդհանուր բյուջետային ծախսերի մեջ 2008-2018 թվականներին*[149]*:*



[148] ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
[149] ՀՀ պետական բյուջեի մասին օերնքներ 2008-2018թթ.

Գծապատկեր 3.1.3-ից հստակ երևում է, որ 2008 թվականից սկսած պետական ծախսերի սպասարկման մասնաբաժինն ընդհանուր բյուջետային ծախսերի մեջ աճման միտում է ունեցել, ինչը պայմանավորված է ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների մեղմման նպատակով շարունակական պետական պարտքի ծավալների ավելացմամբ, ինչի արդյունքում այն 2018 թվականին հասել է իր առավելագույն մակարդակին՝ 9.6 տոկոս: Համեմատության համար նշենք, որ 2018 թվականին կրթությանն ուղղված պետական ծախսերը կազմում են ընդհանուր բյուջետային ծախսերի 8.7 տոկոսը, առողջապահությանն ուղղված ծախսերը՝ 5.3 տոկոս, տրանսպորտային ծախսերը՝ 5.2 տոկոս, գյուղատնտեսությանն ուղղված ծախսերը՝ 1.1 տոկոս[150]:

Պետական պարտքի հետ կապված մտահոգությունները, սակայն, կապված են ոչ միայն դրա մեծության հետ (իրացվելիության ռիսկ), այլ դրա ընթացիկ սպասարկման բարդությունների հետ (վճարունակության ռիսկ): Այսինքն՝ պետական պարտքի սպասարկմանն ամեն տարի ուղղվում է ավելի ու ավելի շատ գումար, որի վճարման հետ կապված պետական բյուջեն կարող է լուրջ դժվարություններ ունենալ, որը կիրականացնի այլ ծախսերի կրճատման հաշվին: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ ՀՀ կառավարության կողմից պարտքի վերլուծության արդյունքները փաստում են, որ երկարաժամկետ հեռանկարում ՀՀ կառավարության պարտքը կայուն է, սակայն զգայուն է տնտեսական աճի և փոխարժեքի տատանումների նկատմամբ, միաժամանակ ՀՀ պետական պարտքը ներկայումս գտնվում է չափավոր ռիսկայնության տիրույթում[151]:

[150] «2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը
[151] «ՀՀ պետական պարտքի կայունության վերլուծություն», ՀՀ ՖՆ, 2017

Գծապատկեր 3.1.4. *Կառավարության պարտքի մարումների գրաֆիկը 31.12.2017թ. դրությամբ*



Վճարունակության ռիսկն առավել մանրամասն ներկայացված է Գծապատկեր 3.1.4.-ում (աղբյուրը՝ ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2019-2021թթ.ռազմավարական ծրագիր), որտեղ 2020թ. և 2025թ. մարման մեծ ծավալները պայմանավորված են երկու փուլով թողարկված եվրապարտատոմսերի մարումներով, որոնք համապատասխանաբար կազմում են տվյալ տարում մարվող պարտքի 68.0%-ը և 68.2%-ը: Եվ ինչպես ակնկալվում է կառավարության վարած քաղաքականությունից, ապա 2020 թվականին հավանաբար կթողարկվի եվրապարտատոմսերի նոր խմբաքանակ, հավանաբար՝ 500 մլն դոլարից ոչ պակաս ծավալով, որի տեղաբաշխումից ստացված գումարն ուղղվելու է հենց առաջին փուլի եվրապարտատոմսերի մարմանը:

Պարզ ասած՝ կառավարությունն այդ կերպ ոչ թե մարելու է եղած պարտքը, այլ ըստ էության՝ երկարաձգելու է այն: Իսկ դա դրական թե բացասական ազդեցություն կունենա տնտեսության վրա, կախված է ներգրավվող փոխառու միջոցների եկամտաբերությունից:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է հստակորեն տարանջատել պետական պարտքի կառավարման գործընթացում ներգրավված տարբեր մարմինների իրավասություններն ու պարտականությունները: Տարբեր երկրների փորձի

ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետական պարտքի կառավարման գործառույթները միաժամանակ կարող են իրականացվել տարբեր մարմինների կողմից՝ ինչպիսիք են ֆինանսների նախարարությունը, կենտրոնական բանկը, կենտրոնական դեպոզիտարիան, ինչպես նաև պետական պարտքի կառավարման համար ստեղծված մասնագիտացված գործակալությունը: Այնուամենայնիվ, անկախ պետական պարտքի կառավարման գործընթացում ներգրավված մարմինների կազմից և կառուցվածքից, անհրաժեշտ է հստակորեն ապահովել տարբեր ֆունկցիոնալ գործառույթների պատվիրակումը և տեղեկատվության միջգերատեսչական փոխանակումը[152]:

Շարունակելով հարկաբյուջետային քաղաքականության բնույթը նկարագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծությունը՝ կարող ենք փաստել, որ տնտեսական իրավիճակի վերաբերյալ կանխատեսումները նկարագրում են այն մակրոմիջավայրը, որի պայմաններում էլ հենց գործելու է կառավարությունը: Միաժամանակ, կառավարության կողմից իրականացվող հարկաբյուջետային քաղաքականությունն իր հերթին ազդում է մակրոտնտեսական միջավայրի վրա, ուստի մակրոտնտեսական կանխատեսումներն էլ հնարավորություն են տալիս պատկերացնելու, թե կառավարության կողմից իրականացվող միջնաժամկետ հարկաբյուջետային քաղաքականությունը որքանով է համապատասխանում տնտեսության բոլոր հատվածների զարգացման միտումներին: Ընդհանրապես կառավարության հարկաբյուջետային քաղաքականության դիրքը գնահատող և պլանավորվող քաղաքականության բնույթը բնութագրող մյուս հիմնական գործիքները հանդիսանում են պետական բյուջեն և ՀՆԱ-ն: Պետության ֆիսկալ կայունությունը և մասնավորապես պարտքի վճարունակության ռիսկերը գնահատելու համար անհրաժեշտ է նաև գնահատել պոտենցիալ ՀՆԱ-ն: Պետական հատվածի դիրքը և միաժամանակ հարկաբյուջետաին քաղաքականության կայունությունը տնտեսությունում չափվում է հիմնականում կառավարության ծախսերի, եկամուտների և դեֆիցիտի ծավալով (պետական ծախսեր/ՀՆԱ, հարկային եկամուտներ/ՀՆԱ):

[152] Բայադյան Ա.Հ., Մարկոսյան Ա. Հ., «Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան 2015, էջ 158-159

Մասնավորապես, ինչպես երևում է Գծապատկեր 3.1.5-ից՝ (աղբյուրը՝ «ՀՀ պետական բյուջեի մասին» 2008-2018թթ. օրենքներ) ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերակցության ցուցանիշը 2007-2017թթ. եղել է 16%-22.4%-ի սահմաններում, իսկ համաձայն 2018-2020թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի այդ ցուցանիշը կտատանվի 23.4%-23,6%-ի սահմաններում՝ գրանցելով փոփոխության չնչին միտում: Միևնույն ժամանակ, ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի ծախսերի հարաբերակցության ցուցանիշը 2007-2017թթ. եղել է 18.2%-25.2%-ի սահմաններում, և համապատասխանաբար 2018-2020 թթ. այդ ցուցանիշը պլանավորվում է պահպանել ՀՆԱ-ի 26.1%-25.7%-ի սահմաններում[153]:

Գծապատկեր 3.1.5 *Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և դեֆիցիտը ՀՆԱ-ի նկատմամբ (%), 2007-2017թթ.*[154]



Համախառն ներքին արդյունքի դինամիկան վերլուծելու համար փորձենք վիճակագրական տվյալներ ներկայացնել ավելի երկար ժամանակահատվածի համար

[153] «ՀՀ պետական բյուջեի մասին» 2008-2018թթ. օրենքներ
[154] Նույն տեղում:

(2000-2017թթ)՝ պատկերացում կազմելու տատանումների հիմանական պատճառների և ՀՆԱ-ի աճի վրա հարկաբյուջետային քաղաքականության ունեցած ազդեցության վերաբերյալ:

ՀՀ-ում նշանակալի տնտեսական աճ գրանցվեց 2000-2008 թվականներին, որի արդյունքում անվանական ՀՆԱ-ն քառապատկվեց, իսկ տնտեսական աճի տեմպը 2003 թվականին արձանագրեց ռեկորդային 14 տոկոսանոց մակարդակ (Գծապատկեր 3.1.6): Միևնույն ժամանակ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն դոլարային արտահայտությամբ ավելի քան հնգակի աճ արձանագրեց (մանրամասն տե՛ս Հավելված 1):

Այս ժամանակահատվածում տնտեսական աճի հիմնական խթանող ուժը ոչ-առևտրային ոլորտներն էին, հիմնականում շինարարությունը, որը սնուցվում էր դրամական փոխանցումների զգալի ներհոսքով և ավելի պակաս չափով՝ օտարերկրյա ուղղակի ներդրումներով: Արդյունքում, 2002թ. և 2008թ. ընթացքում շինարարության ծավալն իրական արտահայտությամբ աճում է միջինը 28%, և, արդյունքում, նպաստում այդ ժամանակաշրջանի ՀՆԱ-ի աճի գրեթե մեկ երրորդին: 2008-2009թթ. ընթացքում տնտեսական ճգնաժամը վեր հանեց Հայաստանի տնտեսության խոցելի կողմերը, երբ արտարժույթի ներհոսքը, արտահանումը, դրամական փոխանցումները և ՕՈՒՆ-ը շեշտակիորեն նվազեցին[155]:

ՀՀ կառավարությունն իրականացրեց ճգնաժամի հետևանքները մեղմելուն ուղղված մի շարք միջոցառումներ, ներառյալ՝ խոշոր ենթակառուցվածքային ծրագրերի նախաձեռնումը, միաժամանակ սոցիալական աջակցության ծրագրերի ավելացումը: Արդյունքում, կարող ենք փաստել, որ իրական ՀՆԱ-ն ճգնաժամից հետո սկսեց աճը՝ 2010թ կազմելով 2.2%, 2011թ՝ 4.7%, 2012թ՝ 7.2%, իսկ 2017թ. ՀՆԱ-ն գրանցել է հետճգնաժամային շրջանի ամենաբարձր ցուցանիշը՝ 7.5% (Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն): Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշվել է, չնայած հարկաբյուջետային քաղաքականության այս միջոցառումները նպաստել են ճգնաճամի սոցիալական ազդեցությունների մեղմմանը, սակայն դրանք հանգեցրել են պետական պարտքի մակարդակի շեշտակի աճին:

[155] Asian Development Bank, “Armenia: Country Partnership Strategy (2014-2018)”, 2014

Գծապատկեր 3.1.6. *Համախառն ներքին արդյունք, շուկայական գներով և ՀՆԱ-ի իրական աճի տեմպը (%), հազ. դրամ / 2000-2017*[156]



Ընդհանրապես, երկրի տնտեսության մասին նախնական պատկերացում կազմելու և հարկաբյուջետային քաղաքականության մշակման համար էական նշանակություն ունի վերլուծել տվյալ երկրի տնտեսության ճյուղային կառուցվածքը: Եվ չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիներին ՀՀ-ում իրականացվել են տնտեսության կառուցվածքային ձևափոխմանն ուղղված միջոցառումներ, միևնույն է ՀՆԱ-ի կառուցվածքում շարունակում են գերակայել ցածր արտադրողականությամբ ոլորտները: ՀՆԱ-ում բարձր արտադրողականությամբ ոլորտը՝ շինարարությունը, ֆինանսատնտեսական վերջին ճգնաժամից հետո, իր տեղը զիջել է ծառայությունների և գյուղատնտեսության ոլորտներին:

Այսպես՝ եթե 2008թ. Հայաստանի ՀՆԱ-ի կառուցվածքում ծառայությունների մասնաբաժինը կազմում էր 21.6%, ապա 2016թ. ցուցանիշը հասել է 50.1%-ի: Այս ընթացքում շինարարության մասնաբաժինը կրճատվել է 21.3 տոկոսային կետով՝ մինչև 8%, ծառայությունների մասնաբաժինն ավելացել է 28.5-տոկոսային կետով՝ կազմելով 50.1% (Գծապատկեր 3.1.7, աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն):

[156] ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

Գծապատկեր 3.1.7. *ՀՆԱ-ի կառուցվածքը (2008-2016թթ.)*[157]



Շատ կարևոր է նաև վերլուծել կոնկրետ ճյուղի ներսում տիրող իրավիճակը՝ մասնավորապես արդյունաբերության մեջ, քանի որ այն հանդիսանում է ՀՀ տնտեսության կարևորագույն հիմնասյունը: Ինչպես տեսնում ենք Հավելված 4-ից, արդյունաբերական արտադրանքի կառուցվածքի 18%-ը զբաղեցնում է հանքագործական արդյունաբերությունը, որի ծավալը վերջին 5 տարիների ընթացքում ավելացել է շուրջ 2 անգամ՝ 2016թ.-ին կազմելով 256.4 մլրդ դրամ (Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն): Այս հանգամանքն ինքնին մտահոգիչ է, քանի որ հանքահումքային արդյունաբերության ծավալների կտրուկ ավելացումը կարող է հանգեցնել մակրոտնտեսական ցնցումների՝ տնտեսության մրցունակության անկման պատճառով: Այսպիսով, տնտեսական տվյալ իրավիճակը կարող է սպառնալիք դառնալ «հոլանդական հիվանդության» բացասական հետևանքների առաջացմանը, որը կանխելու համար էական դեր կարող է ունենալ հարկաբյուջետային քաղաքականությունը՝ պետական բյուջեի ծախսային լծակների միջոցով: Մասնավորապես, ծախսային քաղաքականության արդյունավետ պլանավորումը կարող է օգնել զսպել Հոլանդական հիվանդությունը՝ ծախսերն ուղղելով ոչ առևտրային

[157] ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

սեկտորից դեպի առևտրային հատված (ներառյալ արտահանելի հատված): Բարձրացնելով ծախսային ծրագրերի որակը՝ որպեսզի երաշխավորվի, որ ոչ առևտրային ոլորտի արտադրողականությունն աճում է կառուցվածքային ծրագրերի հետ զուգահեռ, որը նույնպես անհրաժեշտ ուղղություն է համարվում: Արդյունքում հարկաբյուջետային քաղաքականության իրական պտուղները կարող են քաղվել երկարաժամկետ հեռանկարում: Այնուամենայնիվ, առավել հասուն մի շարք ոլորտներ ունեն արագ արդյունքներ ցույց տալու և գործընթացի մասնակիցներին խթանելու ներուժ[158]:

Պետական ֆինանսների օգտագործման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ նկատառումներից է համարվում նաև համապատասխան ֆինանսական գործիքների կիրառումը՝ կոնկրետ ճյուղային տնտեսական աճ ապահովելու համար: Ինչպես ցույց է տալիս ԵՄ փորձը, անդամ երկրները վերջին տարիներին էական քայլեր են իրականացրել ֆինանսական գերծիքների օգտատգործման արդյունավետության բարձրացման տեսանկյունից: Մասնավորապես, անցում է կատարվել սուբսիդավորման և գրանտային ֆինանսավորման գործիքներից դեպի կոնկրետ ճյուղային ոլորտների վարկավորման խթանմանը և այլ անուղղակի ֆինանսական գործիքների կիրառմանը: Տվյալ քաղաքականությունը պահանջում է կոնկրետ ֆինանսական գործիքի և թիրախային խմբերի համապատասխան մոնիթորինգի ու պահանջմունքների վերլուծություն, ինչպես նաև անհրաժեշտ ծախսային ծրագրերի պլանավորում և իրականացում[159]:

Այս ուսումնասիրություններից և վերջին տարիներին ՀՀ մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների ու հարկաբյուջետային քաղաքականության բնյութի վերլուծություններից պարզ է դառնում, որ քաղաքականություն մշակողները լուրջ քայլեր պետք է ձեռնարկեն տնտեսական կայունության և երկարաժամկետ տնտեսական աճ ապահովելու համար: Մասնավորապես, համապատասխան հարկաբյուջետային քաղաքականությունը, որը տնտեսական անկումների համար պետք է լինի հիմնական

---

[158] Տ. Էլբակյան, Ա. Մաճկալյան, ««Հոլանդական հիվանդության» էությունը, առկայությունը ՀՀ տնտեսությունում և հարկաբյուջետային քաղաքականության պատասխանը», «Հանրային կառավարում» գիտական հանդես, 2018, N1, էջ 80-86

[159] Matshkalyan A., Feher A.,"Financial Instruments of European Union Stimulating Rural Development", "Management Agricol" scientific journal, Vol 19, No 2 (2017), p. 95-100

պատասխանը, կախված է մի շարք գործոններից և կարող է որոշել, թե տվյալ պայմաններում համապատասխանում է հարկաբյուջետային ընդլայնումը թե կոնսոլիդացիան: Այս տեսանկյունից հիմնական նկատառումները, որոնք պետք է հաշվի առնեն քաղաքականություն մշակողները, հետևյալներն են[160].

- Արդյո՞ք ֆիսկալ գործիքների օգտագործումը նպատակային և արդարացված է, թե ոչ, և ի՞նչ հետևանքներ այն կունենա պետական պարտքի կառավարման կայունության վրա: Հարկաբյուջետային քաղաքականություն իրականացնողները պետք է ուսումնասիրեն ֆիսկալ գործիքների ռիսկերը մինչև դրանց իրականացումը և գնահատեն տնտեսական ակտիվության վրա այդ գործիքների արդյունքները՝ միևնույն ժամանակ չմոռանալով, թե ի՞նչ ազդեցություն կարող է այն ունենալ պետական պարտքի կայունության վրա:
- Բացահայլտել, թե ի՞նչ համադրություն պետք է ունենա հարկաբյուջետային ընդլայնումը կամ կոնսոլիդացիան: Ծախսերի աճը հակված է ունենալ ավելի մեծ ֆիսկալ բազմապրկիչների ազդեցություն՝ հարկային կրճատումների հետ համեմատած: Բացի այդ, ծախսային և հարկային լծակներով պայմանավորված միջոցառումները, որոնք առաջարկի վրա ցանկալի ազդեցություն ունեն, կարող են կարճաժամկետ դրական ազդեցություն ունենալ՝ պայմանավորված սպասումներով: Կարևոր է նաև գնահատել արտադրողական և անարդյունավետ ծախսերի միջև տարբերությունը:
- Եվ վերջում, պարզել, թե ի՞նչն է ազդում տնային տնտեսությունների և ֆիրմաների վարքագծի վրա: Հավանաբար, սա ամենակարևոր գործողություններից մեկն է, բայց այն ուղղությունները, թե խնայողությունները և ներդրումներն ինչպես են արձագանքում հարկաբյուջետային ընդյալնմանը կամ կոնսոլիդացիային, կարող են նշանակալիոնեն պայմանավորված լինել իրացվելիության խոչընդոտներով, որը մեծ նշանակություն ունի տնային տնտեսությունների և ֆիրմաների համար որոշումների կայացման ժամանակ:

[160] Matshkalyan A.V. "The Effectiveness of Fiscal Policy: Keynesian Approach and Crowding Out", The journal "Bulletin of Armenian National Agrarian University", 2017, V.1, p 84-86

3.2 ՀՀ-ում հարկաբյուջետային քաղաքականության վերլուծությունը և բարելավման անհրաժեշտ ուղիները

3.2.1 Հարկաբյուջետային համակարգի բարեփոխումների անհրաժեշտ ուղղությունները ՀՀ-ում

Զարգացող և անցումային փուլում գտնվող երկրների համար, ինչպիսին է նաև Հայաստանի Հանրապետությունը, կարևոր նշանակություն ունի հարկաբյուջետային համակարգի կատարելագործումը և անհրաժեշտ բարեփոխումների իրականացումը: ՀՀ տնտեսության զարգացման ներկա ժամանակաշրջանում հարկաբյուջետային համակարգում կուտակված հիմնախնդիրները լուծելու համար առաջադրվում են նոր մարտահրավերներ, որոնք պայմանավորված են տնտեսական համակարգի զարգացման ռազմավարական նոր առաջնահերթություններով: Հարկաբյուջետային համակարգի հետագա բարեփոխումները, մասնավորապես պետք է միտված լինեն ֆիսկալ վերլուծությունների գործիքակազմի ընդլայնմանը և կատարելագործմանը, մակրոտնտեսական միջավայրի ախտորոշման համակարգի ընդլայնմանը և ամենակարևորը՝ հարկաբյուջետային թափանցիկության բարձրացմանը:

Մակրոտնտեսական կայունության բարելավման և հարկաբյուջետային համակարգի կայունության ապահովման ուղղությամբ վերջին երկու տասնամյակում մեր երկրում էական քայլեր են կատարվել: Արտաքին ցնցումների երկրորդ մեծ ալիքը հարվածեց ՀՀ տնտեսությանը՝ նախքան համաշխարհային ֆինանսական ճգնաժամից երկրի լիարժեք վերականգնման ապահովումը, որը հիմնականում պայմանավորված էր Ռուսաստանում տնտեսական աճի տեմպերի անկման և դրան հաջորդած՝ արժույթի կտրուկ արժեզրկմամբ: Արդյունքում կարող ենք փաստել, որ այս տարիներին Հայաստանի պետական ֆինանսները և հարկաբյուջետային հիմնական ցուցանիշները շարունակաբար վատթարացել են՝ հանգեցնելով պետական պարտքի կուտակման մեծացմանը:

Այսպիսով, վերոնշյալ հետճգնաժամային հետևանքները հաղթահարելու և մակրոտնտեսական միջավայրը բարելավելու համար մեր երկրում իրականացվել և

շարունակվում են իրականացվեն մի շարք ռազմավարական բարեփոխումներ հարկաբյուջետային համակարգի կայունացման և կատարելագործման ուղղությամբ:

Ընդհանրապես հարկաբյուջետային համակարգի բարեփոխումները պետք է միտված լինեն հանրային ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ դրանով իսկ բարձրացնելով քաղաքականությունների և մատուցված ծառայությունների որակը, մասնավորապես՝

- Հարկաբյուջետային կարգապահության ապահովումը, ինչը կնպաստի մակրոտնտեսական կայունությանը և բյուջետային համակարգի կանխատեսելիությանը,
- Ֆինանսական ռեսուրսների հիմնական քաղաքականությունների և գերակայությունների հետ կապի երաշխավորումը ռազմավարական մոտեցումներին հետևելու միջոցով,
- Ֆինանսական արդյունավետության երաշխավորումը, ինչպես նաև միջոցների ֆինանսական և տեխնիկական արդյունավետության և տնտեսաբար օգտագործման երաշխավորում,
- Հանրային միջոցների ծախսման հաշվետվողականության և թափանցիկության ապահովումը:

Բարեփոումների առանցքային տեսլականը պետք է լինի. «Կենտրոնացված կանոնակարգում – ապակենտրոնացված կառավարում»: Սա իրականացնելու համար, հանրային ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումները պետք է օգնեն ձևավորել հանրային ֆինանսների կառավարման մշակույթ[161]:

Վերջին տարիներին հարկաբյուջետային համակարգի առանցքային բարեփուխումներից է համարվում ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ իրականացված միջոցառումները:

Ընդհանրապես, ծրագրային բյուջետավորման հիմնական հատկանիշներից է հանդիսանում բյուջետային ծախսերի դիմաց մատուցվող ծառայությունների և արդյունքների թափանցիկության և հաշվետվողականության կարևորումը, որի դեպքում պետական բյուջեի միջոցների հաշվին մատուցվող ծառայությունների, ինչպես նաև

[161] Ա. Մաճկալյան, «Ծրագրային բյուջետավորման ներդրման համար անհրաժեշտ բարեփոխումները ՀՀ-ում», Հանրային կառավարում գիտական հանդես, Երևան 2015, N1, էջ 83-90

պետական մարմինների գործունեության ոչ ֆինանսական արդյունքների ցուցանիշները նույնքան կարևոր են համարվում, որքան և ֆինանսականը: Կառավարության ծրագրային բյուջետավորման նպատակն է ներկայացնել բյուջետային տեղեկատվությունն այնպիսի կառուցվածքով, որի արդյունքում հնարավոր կլինի վերահսկել, որ պետական բյուջեն օգտագործվում է՝ իրականացնելու կառավարության քաղաքականություններն ու քաղաքականությունների վերաբերյալ խորհրդարանի որոշումները[162]: Այնուամենայնիվ, ամբողջական ծրագրային բյուջետավորման ներդրումն անընդհատ հետաձգվում է՝ պայմանավորված մի շարք խոչընդոտներով, սակայն համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման ռազմավարության», մշակվել է 2017-2020թթ. իրականացվելիք գործողությունների ծրագիր համակարգի ամբողջական ներդրման համար[163]:

Հարկաբյուջետային համակարգի կայունության ապահովման համար ամենակարևոր ցուցանիշներից մեկը՝ պետական պարտքի մակարդակը, ներկայումս նույնպես մտահոգիչ հիմնահարց է հանդիսանում, ինչին առավել մանրամասն անդրադարձ արդեն իսկ կատարվել է: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ պետական պարտքը շարունակում է մնալ կառավարման կայուն մակարդակում, այնուամենայնիվ հարկաբյուջետային խոշոր բուֆերների վերականգնման համար ներկայումս անհրաժեշտ է իրականացնել հարկաբյուջետային կանոնների շրջանակների արդիականցում: Ներկա ժամանակաշրջանում ֆիսկալ դիրքը հիմնականում բացատրվում է արտաքին ցնցումների նկատմամբ Հայաստանի տնտեսության և հարկաբյուջետային համակարգի խոցելիությամբ: Սակայն, պետք է արձանագրել, որ այն պայմանավորվող կարևոր գործոններ են եղել նաև հարկաբյուջետային կանոնների շրջանակներում առկա թերությունները և խոցելի կողմերը: ՀՀ-ում պետական պարտքի կանոնների վրա հիմնված գործող շրջանակն ապահովում է հարկաբյուջետային կայունության հետ դյուրըմբռնելի կապ, սակայն, ակնհայտ է, որ այն հարկաբյուջետային քաղաքականության համար ոչ բավարար աշխատանքային հնարավորություններ է

[162] GIZ, 2015, "Programme Budgeting Reforms In Armenia: Analytic Toolkit", Yerevan, pp. 6-10.
[163] «Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի արձանագրություն», 13 օգոստոսի 2015 թվականի N 38, էջ 3

ապահովում. տնտեսական կայուն ժամանակներում համացիկլային է և անհրաժեշտ բավարար ճկունություն չունի տնտեսական ծանր ցնցումներին դիմակայելու համար:

Այնուամենայնիվ, առաջիկա տարիների պետական բյուջեի պլանավորման և կառավարության պարտքային քաղաքականության մշակման ժամանակ ՀՀ կառավարությունը պետք է շարունակի հարկաբյուջետային կոնսոլիդացիայի արդյունքում պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշի նվազման գործընթացը՝ հարկաբյուջետային կայունությունն ապահովելու համար: Կառավարությունը պետք է սահմանի պարտքի երկարաժամկետ հետագծի ուղղությամբ ցանկալի ցուցանիշը՝ պահպանելով պարտքի գործող՝ ՀՆԱ-ի նկատմամբ 60 տոկոս վերին շեմը, որը կապահովի պարտքի երկարաժամկետ անվտանգ մակարդակը: Ամենամյա բյուջետային պլանավորման ընթացքում ծախսերի կանոնի սահմանումը կօգնի արդյունավետորեն արձագանքել հարկաբյուջետային քաղաքականության համացիկլայնությանը և առավել խիստ ուշադրության կենտրոնում պահել այն, ինչը կարճաժամկետ հատվածում կառավարությունը վերահսկում է: Նման ծախսային կանոնը համապատասխան ծախսերի աճի հնարավորություն կտա՝ նպաստելով ՀՆԱ-ի աճին, և միևնույն ժամանակ տնտեսական կայուն ժամանակներում որոշակի մակարդակում կզսպի ծախսերի աճը՝ խրախուսելով ավելի ապագայամետ և ռացիոնալ կարգապահություն հարկաբյուջետային քաղաքականության իրագործման ընթացքում:

Վերջին տարիներին ՀՀ-ում հարկաբյուջետային համակարգի կարևորագույն բարեփոխումներից է համարվում նաև հարկային օրենսդրության բարեփոխումները: Ուստի, անհրաժեշտ ենք համարում ներկայացնել, թե ինչպես է հնարավոր խթանել տնտեսական աճը հարկային համակարգի բարեփոխումներով և որոնք են այն հիմնական սկզբունքներն այդ նպատակին հասնելու համար: Ընդհանուր առմամբ, հարկային քաղաքականությունը պետք է խթանի տնտեսական համակարգին և տնտեսական գործակալներին, ներկա և ապագա հարկային քաղաքականության ուղղությունների և մոտեցումների միջոցով: Հարկատուի համար հարկային քաղաքականությունը պետք է լինի կանխատեսելի և թափանցիկ՝ հարկատուի եկամտի հիմնական աղբյուրները հստակ պլանավորելու համար:

Կարևոր է նաև ընդգծել հարկերի կառուցվածքի և հարկային համակարգի ազդեցությունը ՀՆԱ-ի աճի և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի վրա: Սակայն, ընդհանուր առմամբ, դժվար է գնահատել հարկային բարեփոխումների ընդհանուր ազդեցությունն արտադրության մակարդակի վրա մի քանի պատճառներով: Նախևառաջ, ցանկացած հարկի փոփոխություն կարող է միաժամանակ ազդել ՀՆԱ-ի մի քանի բաղադրիչների վրա: Երկրորդ, հարկային բարեփոխումները սովորաբար ներառում են մի քանի տեսակի հարկային գործիքների փոփոխություններ՝ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի բաղադրիչների վրա ունենալով լրացուցիչ կամ փոխհատուցող ազդեցություն: Եվ վերջապես, հարկային քաղաքականության փոփոխությունների արդյունքը հաճախ կախված է այլ քաղաքականությունների պլանավորումից և այլ ինստիտուտներից[164]:

Այսպիսով, ամփոփելով վերը նշված գործոնները, մենք եզրակացնում ենք, որ ՀՀ-ում հարկային բարեփոխումների ընթացքում քաղաքականության մշակողները պետք է հստակեցնեն հարկային քաղաքականության հիմնական սկզբունքները, որոնք պետք է լինեն ամբողջ տնտեսական քաղաքականության գաղափարախոսության հիմքում:

Մենք առաջարկում ենք դիտարկել հետևյալ հիմնական սկզբունքները[165].

- Արդյոք երկարաժամկետ կամ կարճաժամկետ տնտեսական աճն է նպատակադրված հարկային քաղաքականության մեջ: Եթե դա երկարաժամկետ տնտեսական աճն է, ապա տնտեսագետների ու հարկաբյուջետային քաղաքականության մշակողների համար կարևոր է ուշադրություն դարձնել, թե որ ոլորտներից են պլանավորում ապահովել ցանկալի տնտեսական աճը:
- Տնտեսական աճ ապահովելու համար ի՞նչ մոդել ենք նախատեսում՝ պահանջարկով, թե առաջարկով պայմանավորված: Եթե նախընտրում ենք առաջինը, ապա պետք է հաշվի առնել, որ մեր երկրի փորձն արդեն իսկ ցույց է տվել, որ դա կայուն գործիք չէ տնտեսական աճի համար սահմանված նպատակներին հասնելու համար: Սակայն, ներկա տնտեսական զարգացումների պայմաններում, ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ցանկացած զարգացող երկրում տնտեսական աճի ապահովման միայն զուտ

[164] Asa Johansson, Christopher Heady, Jens Arnold, Bert Brys and Laura Vartia, 2008, "Tax and economic growth", 17-41 p.
[165] Matshkalyan A.V., T. Elbakyan, "The impact of taxation on the economic development in Armenia", The journal "Bulletin of Armenian National Agrarian University", 2018, V.1, pp.131-134

պահանջարկով, կամ զուտ առաջարկով պայմանավորված որևէ մոդել ժամանակակից տնտեսական կյանքում չի կարող կիրառվել, ուստի առավել արդյունավետ և կիրառելի մոդելը հենց դրանց զուգակցված ձևով կիրառումն է:

• Արդյո՞ք մենք թիրախավորում ենք կարճաժամկետ, թե երկարաժամկետ տնտեսական կայունությանը: Կարևոր է ընդգծել, որ այս պարագայում հարկային դրույքաչափերի կամ հարկերի կառուցվածքի փոփոխությունները կազդեն հարկատուների տնտեսական գործունեության և երկարաժամկետ կայունության վրա:

• Եթե քաղաքականության մշակողներն անցնում են դեպի սպառման հարկմանը, ապա անպայմանորեն անհրաժեշտ է քաղաքականության պլանավորման ժամանակ հաշվի առնել հարկերի սոցիալական հետևանքները:

Ամփոփելով վերոնշյալ արդյունքները և այն ակնկալիքները, որոնք ընկած են մեր երկրում հարկաբյուջետային համակարգի բարեփոխումների հիմքում՝ անհրաժեշտ է առանձնացնել այն հիմնական կանոնները, որոնք էլ կապահովեն քաղաքականության արդյունավետությանը: Այսպիսով, ներկայացնում ենք մի շարք առանցքային կանոններ, որոնք պետք է նախատեսվեն հարկաբյուջետային համակարգի բարեփոխումների ընթացում[166].

• Հարկաբյուջետային համակարգի բարեփոխումները պետք է սկսվեն մակրոտնտեսական մակարդակում հուսալի քաղաքականության ձևավորմամբ, ներառյալ պետական կարգավորման և կառավարման շրջանակները, հիմնական ինստիտուցիոնալ մեխանիզմները և մակրոտնտեսական քաղաքականությունը:

• Պետական ֆինանսների համակարգի բարեփոխումները պետք է իրականացվեն որպես ընդհանուր ռազմավարության մաս, որը պետք է լինի համապատասխան երկրի կառավարմանը և մարտահրավերներին: Դոնորները կարող են նպաստել դրամական միջոցների, գաղափարների և տեխնիկական հմտությունների զարգացմանը և բարելավել բարեփոխումներին աջակցելու ռազմավարությունները, սակայն բարեփոխումների կոնկրետ ռազմավարությունը պետք է լինի երկրի սեփականությունը: Կառավարության ինտերակտիվ մասնակցությունը բիզնեսի, քաղաքացիական

[166] Matshkalyan A.V. "Challenges of public financial management reforms in developing countries", The journal "Bulletin of Armenian National Agrarian University", 2018, V.1, pp. 128-131

հասարակության, և տարբեր քաղաքական ուժերի հետ կստանա կոնկրետ ռազմավարության վստահությունը:

- Պետական ֆինանսների համակարգի բարեփոխումները պետք է ամրապնդվեն բարձր մակարդակի քաղաքական պարտավորությամբ և պետք է երկարաժամկետ ու շարունակական աջակցություն ունենան: Ֆինանսական բարեփոխումն առաջին հերթին քաղաքական գործընթաց է՝ ենթադրելով քաղաքական ծախսեր և օգուտներ: Որպես այդպիսին, այն պահանջում է խորաթափանց քաղաքական կառավարում և կամք:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով տնտեսության երկարաժամկետ զարգացման մեջ ներդրումների ներգրավման դերն ու նշանակությունը, հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղություն պետք է համարվի նաև ներդրումային ակտիվությունը խթանող հարկային մեխանիզմների ներդրումը, քանի որ հենց հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է հանդիսանա ներդրումային ակտիվությանը նպաստող հիմնական գործիքը: Այնուամենայնիվ, հարկային քաղաքականության մեխանիզմներից բացի առկա են նաև այլ առաջնային և անհրաժեշտ նախապայմաններ ներդրումների ներգրավման ակտիվության խթանման համար, ինչպիսիք են կայուն տնտեսական և քաղաքական պայմանները, աշխատուժի որակը, ենթակառուցվածքների առկայությունը, արտահանման խոչընդոտների բացակայությունը, իրավական համակարգի վստահելությունը և այլն:

Ինչպես հայտնի է, պայմանավորված գլոբալ աշխարհաքաղաքական ներկա զարգացումներով, երկրների միջև գնալով ավելի է մեծանում միջազգային հարկային մրցակցությունն օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ներգրավման համար ավելի բարենպաստ հարկային միջավայր ապահովելու ուղղությամբ: Այդ առումով մեր երկիրը լուրջ քայլեր պետք է ձեռնարկի, որպեսզի կարողանա դիմակայել տարածաշրջանային աճող մրցակցությանը, գրավելու ներդրումային շուկաների այն հատվածները, որտեղ մեր երկիրն ավելի մրցունակ կլինի: Հարկային մրցակցությունը և հարկերի ներդաշնակեցումը կառավարության համար իրական մարտահրավերներ են համարվում գլոբալ տնտեսության մեջ: Արդյունքում, ՕՈՒՆ-երի ներգրավման համար արդյունավետ հարկային միջավայր ապահովելու համար ՀՀ-ում իրականացվող

հարկաբյուջետային քաղաքականության համար առաջնային նպատակը պետք է լինի պարզ, խթանող և կայուն հարկային համակարգի առկայությունը:

Հատուկ հարկային միջոցառումները՝ այպես կոչված «արտոնյալ հարկային մեխանիզմները», որոնք համարվում են ՕՈՒՆ-երի ներգրավման համար կարևորագույն լծակներ, կարող են ՀՀ-ի նման զարգազող երկրների համար մրցունակ դիրքեր ապահովել միջազգային հարկային մրցակցության բարելավման ուղղությամբ: Այս միջոցառումները կարող են ստեղծել մշտական կամ ժամանակավոր հարկային արտոնություններ՝ օտարերկրյա ներդրողների համար ապահովելով շահութաբեր միջավայր:

Ընդհանրապես, միջազգային պրակտիկայում ՕՈՒՆ-ների ներգրավման համար իրականացվող հարկային մեղանիզմները ներառում են հետևյալ հիմնական ուղղությունները՝ հարկային հետաձգումներ, հատուկ հարկային գոտիների ստեղծում, ներդրումային հարկային վարկը, արագացված մաշվածության կիրառումը, նվազեցված հարկային դրույքաչափերը, տարբեր հարկատեսակներից ազատումը, ֆինանսավորման այլ խթանները[167]: Մեր երկրում վերջին տարիներին որոշ չափով կիրառվում են այս մեթոդները՝ կապված ազատ տնտեսական գոտիների ստեղծման, որոշակի հարկատեսակների վճարման ժամկետների հետաձգման հետ և այլն: Սակայն, ինչպես փորձը ցույց է տալիս, մեր երկիրը զգալիորեն հետ է մնում մեր հարևան երկրներից ներդրումների ներգրավման աճի տեմպերով: Ուստի, առաջնային հիմնախնդիր է համարվում հարկային օրենսդրության թիրախային բարեփոխումներն ՕՈՒՆ-ների ներգրավման համար մրցունակ միջավայր ստեղծելու համար: Միաժամանակ, ներդրումների համար ավելի նպաստավոր միջավայր ձևավորելու համար անհրաժեշտ է հարկային մեխանիզմները պարզեցնել և ստեղծել այնպիսի կայուն հարկային միջավայր, ինչը լրացուցիչ խոչընդոտներ չի առաջացնի ներդրողների համար:

Այսպիսով, ՀՀ-ում ՕՈՒՆ-երի ներգրավման ծավալների մեծացման համար անհրաժեշտ քայլ պետք է հանդիսանա մեր երկրի տնտեսության ռազմավարական հիմնական ուղղությունների համար նպաստավոր հարկային դրույքաչափերի

[167] United Nations, 13 October 2010, "Secretariat Note on Agenda Item - Use of Tax Incentives in Attracting Foreign Direct Investment", Geneva, p. 41

սահմանումը, հարկային հետաձգումների՝ հարկային «արձակուրդների» մեխանիզմների ներդրումը, որոնք ևս առաջնային խթան կհանդիսանան տվյալ ճյուղերում ֆինանսական ռեսուրսների ծավալների մեծացմանը:

3.2.2 Հարկաբյուջետային քաղաքականության վերլուծությունների միջազգային փորձի արդյունքները

Ինչպես հայտնի է նեոդասական աճի մոդելները ենթադրում են, որ կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունը կարող է ազդել միայն արտադրության մակարդակի, այլ ոչ թե տնտեսական աճի տեմպի վրա: Այնուամենայնիվ, տնտեսական աճի էնդոգեն մոդելները ներառում են նաև ուղղություններ, որոնց միջոցով հարկաբյուջետային քաղաքականությունը կարող է ազդել երկարաժամկետ տնտեսական աճի վրա[168]:

Էնդոգեն աճի մոդելները կանխատեսում են, որ ոչ պրոգրեսիվ հարկերի կողմից ֆինանսավորվող արտադրողական ծախսերի աճը կխթանի տնտեսական աճի տեմպը, մինչդեռ այդ ազդեցությունը միանշանակ չէ, եթե օգտագործվում է պրոգրեսիվ հարկերի մեխանիզմը: Վերջինիս պարագայում գոյություն ունի արտադրողական ծախսերի աճի առավելագույն մակարդակ, որը կարող է լինել կամ չլինել Պարետտո արդյունավետ: Բացի այդ, ոչ պրոգրեսիվ հարկերի կողմից ֆինանսավորվող ոչ արտադրողական ծախսերի աճը չեզոք ազդեցություն կունենա տնտեսական աճի վրա, իսկ եթե պրոգրեսիվ հարկերն օգտագործվեն, ապա տնտեսական աճի վրա ազդեցությունը կլինի բացասական[169]:

Հարկաբյուջետային քաղաքականության և տնտեսական աճի միջև փոխհարաբերությունների շատ ուսումնասիրություններ կատարվեցին մինչև համապատասխան էնդոգեն աճի մոդելները, այսինքն՝ 1980-ականների սկիզբը:

---

[168] Barro, R.J. and Xavier Sala-i-Martin (2004). "Economic Growth", MIT Press, Cambridge, Massachusetts, pp. 61-68

[169] Նույն տեղում:

Օրինակ, Լանդոն 1983թ. հետազոտության[170] մեջ օգտագործելով 104 երկրների տվյալները՝ բացահայտել է բացասական փոխհարաբերություն պետական սպառման, որպես ՀՆԱ-ի մաս, և մեկ շնչի հաշվով տնտեսական աճի միջև՝ կիրառելով Սամորս-Հեստոնի տվյալները, իսկ Կորմենդիի և Մեգուիրի 1985 թվականի հետազոտության[171] մեջ օգտագործելով 47 երկրների ժամանակային տվյալներ՝ նույն փոփոխականների միջև հայտնաբերեցին ոչ ստատիկ նշանակալի կապ հետպատերազմյան ժամանակաշրջանի համար: Բարրոն հետպատերազմյան ժամանակաշրջանի 98 երկրներից ստացվող տվյալների համաձայն բացահայտեց, որ պետական սպառումը նվազեցնում է մեկ շնչի հաշվով տնտեսական աճը, մինչդեռ պետական ներդրումները չեն ազդում տնտեսական աճի վրա[172]:

Բացի վերը նշված ուսումնասիրություններից, հետազոտողները կիրառել են VAR և SVAR մոդելները զարգացած և զարգացող մի շարք երկրների տնտեսական քաղաքականությունների վերլուծության համար: Ահա այդ ուսումնասիրություններից որոշները՝ Պերոտին (2002)[173], Արկանգելիսը և Լամարտին (2003)[174]՝ ընդհանուր առմամբ իրականացրել են հետազոտություններ ՏՀԶԿ երկրների համար, Լոզանոն և Ռոդրիգեսը (2008)[175] Կոլումբիայի համար և այլն: Այս բոլոր հետազոտություններում մոդելներն օգտագործվում են ֆիսկալ շոկերի մոդելավորման համար, սակայն դրանք մասամբ տարբերվում են օգտագործվող փոփոխականներից: Բլանչարդի և Պերոտտիի (1999)[176] գլխավոր աշխատանքի մեջ հիմնական մոդելն ունի ընդամենը երեք փոփոխական՝ պետական ծախսեր, զուտ հարկեր և իրական ՀՆԱ: Հետագայում

[170] Landau, D. (1983). “Government Expenditure and Economic Growth: A Cross-Country Study”, Southern Economic Journal, 49, pp. 783-792.
[171] Kormendi, R. C. and Meguire, P. G. (1985) Macroeconomic determinants of growth: cross-country evidence, Journal of Monetary Economics, 16, pp. 141-163.
[172] Barro, R.J (1989). "A Cross-Country Study of Growth, Saving, and Government," NBER Working Papers 2855, pp. 1-57.
[173] Perotti, R., 2002. “Estimating the Effects of Fiscal Policy in OECD Countries”, ECB Working Paper, No. 168. Pp 1-63
[174] Arcangelis, G. and Lamartina, S., 2003. “Identifying Fiscal Shocks and Policy Regimes in OECD Countries” ECB Working Paper, No. 281. pp. 1-52.
[175] Lozano, I. and Rodriquez, K., 2008. “Assessing the Macroeconomic Effects of Fiscal Policy in Colombia”. Banco de la Republica, Borradores de Economia Working Paper, No. 552/2009, pp. 1-33
[176] Blanchard O, Perotti R. 2002. An empirical characterization of the dynamic effects of changes in government spending and taxes on output. Quarterly Journal of Economics. 117(4): pp. 1329–1368

Պերոտտին (2002թ.) ընդլայնել է այս մոդելը՝ ավելացնելով կարճաժամկետ տոկոսադրույքները և գների մակարդակը:

Բացի վերոնշյալ հիմնական VAR և SVAR մոտեցումներից գրականության մեջ տարբերվում են էմպիրիկ ուսումնասիրությունների չորս այլ մոտեցումներ, որոնք նախատեսված են հարկաբյուջետային քաղաքականության շոկերի բացահայտման համար. Բայեզյան կառուցվածքային VAR մոդելները, Մունտֆորդ-Ուհլիգի իմպուլսային սահմանափակման մոտեցումը, ֆիսկալ «կեղծիքի» մոտեցումը (fiscal dummy approach), ռեկուրսիվ մոտեցումը, որտեղ օգտագործվում է Չոլեսկու տարանջատման սկզբունքը: Կամպսը և Կալդերան համեմատել են այս մոտեցումները և եզրակացրել, որ ռեկուրսիվ մոտեցման արդյունքները (մոդելի փոփոխականների պատշաճ հերթականությամբ) և պայմանական կառուցվածքային VAR մոտեցումը գրեթե նույնական են, իսկ առավել նշանակալի տարբերությունն առաջանում է ֆիսկալ «կեղծիքի» մոտեցման ժամանակ[177]: Հարկաբյուջետային ցնցումների սիմուլյացիաների այս հինգ մոտեցումներից բացի օգտագործվում են նաև կառուցվածքային վեկտորի սխալի ճշգրտման մոդելներ (structural vector error correction model), ինչպիսիք են, օրինակ, Կրուզեքի կողմից Եվրոպական միության անդամ երկրների համար իրականացված հետազոտությունը[178]:

Ինչպես արդեն նշվեց, այս բոլոր ուսումնասիրություններից բերված արդյունքներն ըստ երկրների մասամբ տարբերվում են, և մակրոտնտեսական փոփոխականների միանշանակ պատասխաններ չկան ֆիսկալ շոկերի նկատմամբ: Համախառն ներդրումների առումով կարելի է եզրակացնել, որ նեոդասական արդյունքները գերակշռում են, այսինքն, հեղինակները եզրակացնում են, որ պետական ծախսերի աճը, առնվազն, որոշ դեպքերում հանգեցնում է ներդրումների արտամղման առաջացմանը: Տնտեսական գործունեության դեպքում Պերոտտիի եզրակացությունն այն է, որ պետական ծախսերի շոկերը չնչին ազդեցություն են ունենում տնտեսական գործունեության վրա ՏՀԶԿ հինգ երկրներում կատարված հետազոտություններից[179]:

---

[177] Kamps, C. and Caldara, D., 2008. "What are the Effects of Fiscal Policy Shocks? A VAR-based Comparative Analysis", ECB Working Paper, No 877,p. 28

[178] Krušec., D., 2003. "The effects of fi scal policy on output in a structural VEC model framework: The case of four EMU and four non-EMU OECD countries.", European University Institute, 03/2004, pp. 1-30

[179] Perotti, R., 2002. "Estimating the Effects of Fiscal Policy in OECD Countries", ECB Working Paper, No. 168, pp. 1-62

Գերմանիայի օրինակով նույնպես կարճաժամկետ հատվածում այն գրեթե նույնական է, նշելով, որ երկարաժամկետ հեռանկարում այդ դրական ազդեցությունը բացասական է դառնում[180]:

Մասնավորապես, ինչ վերաբերվում է հարկային ցնցումներին, ապա էմպիրիկ գրականությունը բնութագրվում է որոշակի անհամաձայնությամբ՝ կապված մակրոտնտեսական հետևանքների հետ: ԱՄՆ-ի տնտեսության վրա հարկային ցնցումների ազդեցությունը գնահատող հետազոտությունների մեծամասնությունը եզրակացնում է, որ անսպասելի հարկային ավելացումներն ունեն ուժեղ բացասական ազդեցություն արտադրության և իրական տնտեսության այլ փոփոխականների վրա: Սա վերաբերվում է այն ուսումնասիրություններին, որոնք օգտագործում են իմպուլսների սահմանափակումների մոտեցում (sign-restrictions approach) կամ միջոցառումների ուսումնասիրության մոտեցում (event-study approach), որոնք մեկուսացնում են այն օրենսդրական հարկային փոփոխությունները, որոնք կապված չեն տնտեսության վիճակի հետ՝ օգտագործելով դրանք գնահատելու էկզոգեն հարկային փոփոխությունների մակրոտնտեսական ազդեցությունները[181]:

Վերջին տարիներին տեսական գրականությունը, որն ուսումնասիրում է հարկաբյուջետային քաղաքականության ցնցումները՝ օգտագործելով դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռությունը (DSGE) մոդելները, զարգացել է երկու տարբեր ուղղություններով: Առաջին ուղղությունը հիմնվում է այն ենթադրության վրա, որ մասնավոր սպառումը և իրական աշխատավարձը բացասական են արձագանքում պետական ծախսերի ավելացմանը, իսկ զբաղվածության մակարդակը՝ դրականորեն: Այս մոդելում միանվագ հարկերով ֆինանսավորվող պետական ծախսերի էկզոգեն աճը նվազեցնում է տնտեսական գործակալների հարստությունը՝ նպաստելով, որ նրանք պակաս սպառեն և աշխատեն ավելի, ինչն իր հերթին ցնցում է իրական աշխատավարձը: Երկրորդ ուղղությունը հիմնվում է այն ենթադրության վրա, որ

[180] Heppke-Falk, K. H., Tenhofen, J. and Wolf, G. B., 2006. "The Macroeconomic Effects of Exogenous Fiscal Policy Shocks in Germany: a Disaggregated SVAR Analysis". Deutsche Bundesbank Discussion Paper Series 1: Economic Studies, No 41/2006, pp. 328-355

[181] Romer, C.D., and D.H. Romer (2007). "The Macroeconomic Effects of Tax Changes: Estimates Based on a New Measure of Fiscal Shocks". NBER Working Paper 13264. Cambridge, MA. pp. 763-801

մասնավոր սպառումը դրականորեն է արձագանքում պետական ծախսերի ավելացմանը[182]:

Միջազգային պրակտիկայում հարկաբյուջետային քաղաքականության շոկերի բացահայտման ընդունված մոտեցումներից մեկը, որը միևնույն ժամանակ օգտագործվել է մեր մոդելում ՀՀ հակաբյուջետային քաղաքականության բնույթն ու ազդեցությունը գնահատելու համար, դա ինպուլսային սահմանափակման մոտեցումն է: Ի տարբերություն ռեկուրսիվ մոտեցման և Բլանչարդ-Պերրոտիի մոտեցման, իմպուլսների սահմանափակման մոտեցումը չի պահանջում շոկերի քանակի հավասարություն փոփոխականների քանակին և չի պարտադրում նվազեցված ձևի մոդելների ու կառուցվածքային շեղումների միջև ժամանակային կապի գծային սահմանափակումներ: Այս մոտեցումը միջազգային պրակտիկայում դարձել է կիրառելի էմպիրիկ վերլուծությունների մեջ և որպես այլընտրանք ավանդական մոտեցումներին՝ հիմնվելով բացառման սահմանափակումների վրա: Պրակտիկայում Մունտֆորդը և Ուհլիգը հակադրում են սահմանափակումներն ուղղակիորեն ազդարարման ձևերի վրա և բացահայտում են հիմնական չորս շոկեր. գործարար պարբերաշրջանի շոկ, դրամավարկային քաղաքականության շոկ, պետական ծախսերի շոկ և հարկային քաղաքականության շոկ[183]: Մեր հետագա հետազոտությունում մենք բացահայտում ենք պետական ծախսերի շոկը և հարկային քաղաքականության շոկը ՀՀ տնտեսության համար: Մենք անտեսում ենք դրամավարկային քաղաքականության ցնցումները, քանի որ դա հետազոտությունների առանցքում չէ և նաև այն պատճառով, որ արդյունքները զգայուն չեն ֆիսկալ շոկերի հետ նույնականացման համար: Հարկային քաղաքականության շոկերը բացահայտվում են այն պահանջների համաձայն, որ հարկերի խթանման արձագանքները դրական են դրսևորվում շոկից հետո չորս եռամսյակների ընթացքում, իսկ պետական ծախսերի իմպուլսային արձագանքները դրական են շոկից հետո առնվազն չորս եռամսյակների ընթացքում: Բացի այդ, երկու շոկերը պահանջվում է ուղղահայաց լինեն առաջին քայլի մեջ հայտնաբերված

[182] Eichenbaum, M., and J.D.M. Fisher (2005). Fiscal Policy in the Aftermath of 9/11, Journal of Money, Credit and Banking 37 (1): 1-22.
[183] Mountford, A., and H. Uhlig (2005). "What Are the Effects of Fiscal Policy Shocks?" SFB 649 Discussion Paper 2005-039. Humboldt University, Berlin, pp. 1-40

գործարար պարբերաշրջանների ցնցմանը: Այն ենթադրությունը, որ գործարար պարբերաշրջանի ցնցումը գալիս է առաջին հերթին, բացառում է, որ մոդելի փոփոխականների պատասխանները հարկաբյուջետային քաղաքականության շոկերին ունենում են նույն նշաններն ինչ գործարար պարբերաշրջանի շոկը: Գործնականում այս ենթադրությունը բերում է այն հանգամանքին, որ երբ հարկերը և ամբողջական արտադրանքը շարժվում են նույն ուղղությամբ, ապա դա պայմանավորված է գործարար պարբերաշրջանների փոփոխությամբ:

Մեր աշխատանքում մենք վերցնում ենք վերը նշված խնդիրներից մի քանիսը՝ հաշվի առնելով առկա հետազոտությունները, հստակեցնելով պետական ծախսերի և եկամուտների շոկերը, փնտրելով ապացույցներ, որոնք ընտրված էկոնոմետրիկ մեթոդի փոփոխությունների համար կայուն են:

3.2.3 ՀՀ օրինակով հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության գնահատումը VAR մեթոդաբանության միջոցով

Պետական ծախսերի և եկամուտների ազդեցության հարցը տնտեսական աճի և մակրոտնտեսական այլ ցուցանիշների վրա մշտապես եղել և այսօր էլ շարունակվում է մնալ տնտեսագիտական հետազոտությունների առանցքում:

Էկոնոմետրիկ վերլուծության տեսանկյունից այդ փոխազդեցությունների գնահատումը բավական բարդ խնդիր է համարվում, քանի որ մի կողմից «Վագների օրենքի» համաձայն ազգային եկամտի աճը հանգեցնում է պետական ծախսերի ավելացմանը, մյուս կողմից էլ համաձայն քեյնսյան մոտեցման՝ պետական ծախսերն ինքնին հանդես են գալիս որպես ամբողջական պահանջարկի խթանման և տնտեսական աճի ապահովման կարևորագույն գործոն[184]:

Վերջին տարիներին VAR մոդելները դարձել են էմպիրիկ հոտազոտությունների համար վերլուծություններ իրականացնելու էկոնոմետրիկ գործիքներից մեկը՝

[184] Բոստանջյան Վ., Մինասյան Գ., «ՀՀ Պետական ծախսերի և տնտեսական աճի փոխազդեցության գնահատումը SVAR մեթոդաբանությամբ», Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2016, էջ 53

գնահատելու դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների շոկերի հետևանքները: Մասնավերապես, մենք առաջարկում ենք կիրառել VAR մոդելները հարկաբյուջետային քաղաքականության հետևանքները վերլուծելու համար: Հետազոտությունում օգտագործում ենք համապատասխան ցուցանիշների սահմանափակումները, որպեսզի բացահայտենք կառավարության եկամուտների շոկը, ինչպես նաև պետական ծախսերը շոկը: Մենք կառուցում ենք ֆիսկալ շոկերի գծային կոմբինացիաների իմպուլսային արձագանքները համապատասխան երեք սցենարներով. կառավարության ծախսերի ավելացում, հարկերի նվազեցում և կառավարության ծախսերի ու հարկային եկամուտների ավելացում միաժամանակ: Ինչպե՞ս են հարկային կրճատումներն ազդում տնտեսության վրա: Որքանո՞վ է կարևոր, թե արդյո՞ք դրանք ֆինանսավորվում են ծախսերի համապատասխան կրճատումներով կամ պետական պարտքի համապատասխան աճով, և հարկաբյուջետային քաղաքականության ո՞ր սցենարն է առավել արդյունավետ: Այս հարցերը կարևոր նշանակություն ունեն տնտեսագիտության և առհասարակ հարկաբյուջետային քաղաքականության մշակման համար: Այս բաժնում նպատակ ունենք պատասխանել այս կարևոր հարցերին՝ առաջարկելով և կիրառելով VAR մոդելները որպես հարկաբյուջետային քաղաքականության կանխատեսումները բացահայտելու մեթոդ:

Առաջադրված խնդիրը լուծելու համար մենք պնդում ենք, որ հարկաբյուջետային քաղաքականության մակրոտնտեսական ցնցումներն արտահայտվում են երկու տիպի տարածական շոկերի միջոցով. կառավարության եկամուտների շոկ և պետական ծախսերի շոկ: Տարբեր հարկաբյուջետային քաղաքականությունները, ինչպիսիք են օրինակ՝ հավասարակշռված բյուջետային ընդլայնումները, կարելի է բնութագրել որպես այս երկու հիմնական շոկերի տարբեր գծային համադրություններ: Օրինակ, կառավարության ծախսերի հիմնական շոկը որոշվում է որպես ցնցում, որտեղ պետական ծախսերը ցնցումից հետո որոշակի ժամանակահատվածում աճում են, և դա շոշափելի է գործարար պարբերաշրջանների և դրամավարկային քաղաքականության ցնցումների ժամանակ: Մենք ընտրում ենք սահմանափակել քաղաքականության պատասխանը շոկից հետո մեկ տարվա ընթացքում՝ ցնցումներից խուսափելու համար, երբ պետական ծախսերը մեծանում են ազդեցության արդյունքում, բայց հետագայում

մեկ կամ երկու եռամսյակ հետո նվազում են:

Միևնույն ժամանակ, էմպիրիկ վերլուծությունները հիմնվում են միայն մակրոտնտեսական ժամանակային շարքերի տվյալների վրա ֆիսկալ ցնցումների բացահայտման համար և չեն ապավինում մակրոտնտեսական ցնցումների որոշ փոփոխականների աննկատ ազդեցությունների վերաբերյալ ենթադրություններին: Անշուշտ, այն չի սահմանափակում հետաքրքրությունն առանցքային փոփոխականների ազդակների ազդեցությունը ֆիսկալ քաղաքականության ցնցումների վրա (ՀՆԱ, մասնավոր սպառում, մասնավոր ներդրումների և այլն): Այսպիսով, ատենախոսության տվյալ բաժնում օգտագործված մոտեցումը տարբերվում է ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության հետևանքների վերաբերյալ նախորդ ուսումնասիրություններից և ապահովում է հետազոտությունների մի կարևոր լրացուցիչ մեթոդ, որը, որպես կանխատեսումների VAR մոտեցում, ինքնաբերաբար համակարգված է և կարող է համընդհանուր կիրառման նշանակություն ունենալ (VAR մոդելը տ՛ես Հավելված 5-ում):

Ընդհանրապես հարկաբյուջետային քաղաքականության ցնցումներն իրենցից ներկայացնում են քաղաքականության մեջ տեղի ունեցող չկանխատեսվող փոփոխությունները, միևնույն ժամանակ հարկաբյուջետային քաղաքականության ցնցումները ներառում է քաղաքականության լայն շրջանակներ: Մենք անդրադառնում ենք համախառն ֆիսկալ փոփոխականների ազդեցությանը տնտեսության վրա ավելի լայն և ավանդական մակրոտնտեսական հարցերի տեսանկյունից:

Մենք օգտագործում ենք VAR մոդելը հետևյալ փոփոխականների նկատմամբ. *իրական ՀՆԱ, մասնավոր սպառում, ընդհանուր պետական ծախսեր, ընդհանուր պետական եկամուտներ, օտարերկրյա ուղղակի ներդրումներ, տոկոսադրույքի մակարդակ, արդյունաբերողների գների ինդեքս և ՀՆԱ դեֆլյատոր*: VAR համակարգը բաղկացած է այս 8 փոփոխականներից՝ եռամսյակային հաճախականությամբ 1997-2017թթ. (մինչև 2017թ. առաջին երկու եռամսյակները), կազմված է 6 լագից, առանց հաստատուն կամ ժամանակային տրենդի և օգտագործել ենք լոգարիթմը բոլոր փոփոխականների համար՝ բացառությամբ տոկոսադրույքի, որտեղ մենք օգտագործել ենք մակարդակը, ՀՆԱ-ի դեֆլյատորի, օտարերկրյա ուղղակի ներդրումների և արդյունաբերողների գների ինդեքս (իրական ՀՆԱ, մասնավոր սպառում, ընդհանուր

պետական ծախսեր, ընդհանուր պետական եկամուտներ շարքերը սեզոնայնորեն հարթեցված են): Օգտագործված փոփոխականների ստացիոնարության գնահատման արդյունքները ներկայացված են Հավելված 6-ում:

Ընտրված մոտեցումը հիմնականում թելադրում է վերոնշյալ փոփոխականների ընտրությունը: Մասնավորապես, մասնավոր սպառումը ներառված է այն պատճառով, որ սպառում/ՀՆԱ հարաբերակցությունը ՀՆԱ-ի համար կանխատեսելի արժեք ունի: VAR մոդելի երկու ֆիսկալ փոփոխականները սահմանվում են այնպես, ինչպես Բլանչարդի և Պերրոտիի կողմից[185]: Այսպիսով, պետական ծախսերի ընդհանուր ծավալը հանրային սպառման ընդհանուր ծավալն է, գումարած ընդհանուր պետական ներդրումները, իսկ պետական եկամուտների ընդհանուր ծավալը պետական հարկային ընդհանուր եկամուտներն են՝ նվազեցված տրանսֆերտներով:

Մոդելում օգտագործված են Արժույթի Միջազգային Հիմնադրամի, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և Կենտրոնական բանկի տվյալների շտեմարանների համապատասխան ցուցանիշները եռամսյակային կտրվածքով՝ սկսած 1997-2017թթ.:

Չնայած այս մոդելում մշակված նոր մեթոդաբանությանը, այնուամենայնիվ արդյունքները համեմատաբար նմանություններ ունեն առկա գրականության մեջ գոյություն ունեցող մոտեցումներին: Օրինակ, ինչպես Բլանչարդը և Պերրոտին են գտնում[186], մեր մոդելում նույնպես ներդրումները նվազում են՝ ինչպես հարկերի ավելացման, այնպես էլ պետական ծախսերի աճի ժամանակ, ինչպես նաև հարկերի փոփոխության հետ կապված բազմարկիչները համեմատաբար ավելի մեծ են, քան ծախսերի փոփոխությունների հետ կապված բազմարկիչները: Այս վերջին արդյունքները նաև համապատասխանում է Ռոմերի վերլուծությանը[187], որտեղ ներկայացվել է էկզոգեն հարկային փոփոխությունների մեծ ազդեցությունները: Իսկ ինչ վերաբերում է մասնավոր սպառմանը, ապա ինչես Գալին[188], մենք նույնպես գտնում ենք, որ սպառումը չի նվազում կառավարության ծախսերի անսպասելի աճի արդյունքում: Սակայն, ի տարբերություն

[185] Blanchard O, Perotti R. 2002. An empirical characterization of the dynamic effects of changes in government spending and taxes on output. Quarterly Journal of Economics. 117(4): pp. 1329–1368.
[186] Նույն տեղում:
[187] Romer, C.D., and D.H. Romer (2007). "The Macroeconomic Effects of Tax Changes: Estimates Based on a New Measure of Fiscal Shocks". NBER Working Paper 13264. Cambridge, MA. pp. 763-801
[188] Gali J, Lopez-Salido JD, Valles J. 2007. "Understanding the effects of government spending on consumption". Journal of the European Economic Association 5(1): 227–270.

այս ուսումնասիրությանը, մենք չենք գտնում, որ սպառումը կտրուկ մեծանում է: Մեր արդյունքները ցույց են տալիս, որ սպառման արձագանքը փոքր է և միայն զգալիորեն է տարբերվում զրոյից և, հետևաբար, ավելի շատ համապատասխանում են Բուրնսայդի արդյունքներին[189], որտեղ ներկայացվում է, որ մասնավոր սպառումը զգալիորեն չի փոփոխվում դրական ծախսային շոկի արդյունքում:

Հարկաբյուջետային քաղաքականության ցնցումների բացահայտման ժամանակ հետագա բարդ և լավ հասկանալի մարտահրավերները ֆիսկալ քաղաքականության փոփոխությունների հայտարարման և դրանց կատարման միջև հնարավոր լագերի առկայությունն է: Հաշվի առնելով օրենսդիր մարմիններում պոտենցիալ երկարատև քննարկումները, օրինակ, հարկերի դրույքաչափերի կրճատումը, ապա պետական եկամուտների փոփոխությունը բավականին կանխատեսելի է, երբ հարկերի կրճատումն իրականում ուժի մեջ է մտնում: Հեռատես անհատները և ընկերությունները կարող են իրենց տնտեսական որոշումները կարգավորել մինչև այդ օրը, և չնայած հարկային փոփոխություններն ի վերջո տեղի են ունենալու, ֆիսկալ քաղաքականության փոփոխության ազդեցությունը տեղի է ունենում ավելի շուտ: Մեր ներկայացված մոդելի նորարարական առավելությունը կայանում է նրանում, որ նույնականացման ընթացակարգը հեշտությամբ հարմարեցված է այս խնդիրը հաղթահարելու համար՝ անմիջականորեն որոշելով այնպիսի շոկ, որի համար ֆիսկալ քաղաքականության հայտարարություն և համապատասխան փոփոխությունների իրականացման միջև առկա է ժամանակային լագ: Մասնավորապես, մենք պետք է բացահայտենք հայտարարված հարկաբյուջետային քաղաքականության ցնցումները, որտեղ կառավարության ծախսերն աճում են միայն ցնցումից հետո չորրորդ եռամսյակում, բայց նախապես չեն արձագանքում: Այսպիսով, հաշվի առնելով երկու հիմնական ֆիսկալ շոկերը (կառավարության ծախսերի ավելացման և հարկերի կրճատման շոկերը)՝ հարկաբյուջետային քաղաքականության տարբեր սցենարները կարելի է բնութագրել որպես երկու հիմնական ցնցումների տարբեր գծային համակցությունների հաջորդականություն: Օրինակ, մենք կներկայացնենք հավասարակշռված բյուջեի

[189] Burnside C, Eichenbaum M, Fisher JDM. 2003. “Fiscal shocks and their consequences”. Working Paper 9772, National Bureau of Economic Research. pp. 1-36.

ընդլայնողական ֆիսկալ սցենարը, որպես երկու հիմնական շոկերի գծային համադրության հերթականություն, այնպես որ պետական ծախսերի աճը զուգորդվում է հարկային եկամուտների աճի հետ միաժամանակ:

Հարկաբյուջետային քաղաքականության շոկերը հայտնաբերվում են միայն ֆիսկալ փոփոխականների իմպուլսային արձագանքների սահմանափակումներով և այն պահանջներով, որ դրանք ուղղահայաց են ինչպես գործարար պարբերաշրջանների ցնցումների, այնպես էլ դրամավարկային քաղաքականության ցնցումների նկատմամբ: Ինչպես նշվեց վերևում, մենք բացահայտում ենք երկու հիմնական ֆիսկալ շոկերը՝ «կառավարության ծախսերի ավելացման» և «հարկերի կրճատման»՝ խիստ սահմանափակումներ կիրառելով, երբ ֆիսկալ փոփոխականների պատասխանները սահմանափակվում են ցնցումներից հետո որոշակի ժամանակահատվածում: Օրինակ, պետական ծախսերի շոկը որոշվում է որպես ցնցում, որտեղ կառավարության ծախսերն աճում են մեկ տարվա ընթացքում ցնցումից հետո: Այս խիստ սահմանափակումները նախատեսված են բացառելու ֆիսկալ փոփոխականների համար անցումային տատանումները, որտեղ, օրինակ, պետական ծախսերն աճում են այդ ազդեցության ներքո, բայց հետագայում նվազում են մեկ կամ երկու եռամսյակ հետո: Ի վերջո, պետք է նաև նշել, որ մենք չենք սահմանափակում պետական եկամուտների վարքագիծը, երբ բացահայտում ենք կառավարության ծախսերի շոկը կամ հակառակը: Դա անհրաժեշտ չէ, քանի որ այն, ինչ պետք է նկարագրել ֆիսկալ քաղաքականության ցնցումների երկու ծավալային տարածությունների համար, դա անկախ երկու գծային վեկտորներ են: Օգտագործված VAR մոդելի գնահատման մանրամասները, ինչպես նաև նույնականացման ռազմավարությունների իրականացումը՝ ներառյալ այդ զրոյական սահմանափակումները, նկարագրված են Հավելված 5-ում:

Նախքան օգտագործված մոդելի արդյունքների ներկայացումը՝ անհրաժեշտ է իրականացնել մոդելի որակյալության գնահատման թեստեր: Մասնավորապես, ավտոկոռելացիայի ստուգման համար կիրառվել է LM թեստը, իսկ նորմալության ստուգման համար՝ Cholesky (Lutkepohl) թեստը, որոնք իրականացվել են EViews 10 ծրագրային փաթեթի միջոցով (Տե՛ս Հավելված 8): Հետագա շարադրանքում կներկայացվի յուրաքանչյուր սցենարի ազդեցությունը մակրոտնտեսական

ցուցանիշների և համապատասխան փոփոխականների նկատմամբ:

Առաջին սցենար (կառավարության ծախսերի ավելացում)

Այս քաղաքականության սցենարը նախատեսված է որպես հիմնական հարկաբյուջետային շոկերի հաջորդականություն, որտեղ պետական ծախսերը 1%-ով ավելանում են և հարկային եկամուտները չորս եռամսյակների համար անփոփոխ են մնում նախնական շոկից հետո:

Այս շոկի համար խթանման արձագանքները ներկայացված են Հավելված 9-ում: Հավելված 9-ից երևում է, որ կառավարության ծախսերի շոկը սկզբնական շրջանում իրական ՀՆԱ-ի վրա դրական ազդեցություն չի ունենում, իսկ մասնավոր սպառման վրա առաջին եռամսյակներում չեզոք ազդեցություն է թողնում, այնուհետև միայն որոշակի ժամանակահատվածից հետո ունենում է դրական արձագանք: Սկզբնական շրջանում նկատվում է նաև ներդրումների նվազում՝ ի պատասխան տոկոսադրույքների մակարդակի աճին: Այս շոկին արձագանքում է նաև արդյունաբերողների գների ինդեքսը, որը սկզբնական շրջանում կտրուկ նվազում է գրանցում: Գների արձագանքը պետական ծախսերի ավելացմանը մի փոքր տարակարծիք է, քանի որ ՀՆԱ դեֆլյատորն ու արդյունաբերողների գների ինդեքսը փոփոխվում են հակառակ ուղղություններով. ՀՆԱ դեֆլյատորը սկզբում աճում է, այնուհետև գրանցում նվազման միտում, իսկ արդյունաբերողների գների ինդեքսն արձանագրում է հակառակ պատկերը: Թեև սա հակասական-ինտուիտիվ արդյունք է, սակայն պետք է նշել, որ գների և պետական ծախսերի միջև այս բացասական հարաբերությունները հայտնաբերվել են նաև այլ ուսումնասիրություններում (օրինակ՝ Canova and Pappa,2007; Edelberg, et al., 1999. Fatas and Mihov, 2001a):

Երկրորդ սցենար (հարկերի նվազեցում)

Հարկաբյուջետային քաղաքականության տվյալ սցենարը նախատեսված է որպես հիմնական ֆիսկալ ցնցումների հաջորդականություն, երբ հարկերը նվազում են 1%-ով, իսկ նախնական շոկից հետո պետական ծախսերը մնում են անփոփոխ չորս եռամսյակի ընթացքում (ներառյալ նախնական եռամսյակը): Հարկերի կրճատման հիմնական շոկը ներկայացվում է որպես ցնցում, որն ուղղահայաց է գործարար պարբերաշրջանների շոկի և դրամավարկային քաղաքականության շոկերի նկատմամբ: Նշված պետական

եկամուտների կամ հարկերի նվազեցման շոկի իմպուլսային արձագանքները ներկայացված է Հավելված 10-ում: Ազդակներից պարզվում է, որ հարկերի նվազեցման շոկը, ինչես և նախորդ սցենարի դեպում, սկզբում չեզոք ազդեցություն է ունենում մասնավոր սպառման վրա, սակայն հետագայում սպառումը գրանցում է աճի տեմպեր: Այս պարագայում իրական ՀՆԱ-ն նույնպես դրականորեն է արձագանքում հարկային կրճատումների շոկին: Տոկոսադրույքների և գների արձագանքները քիչ պակաս ինտուիտիվ են, քանի որ տոկոսադրույքներն աճում են, իսկ պաշարները նվազում են եկամտի աճի հաշվին: Չնայած այս շոկի ժամանակ պետական ծախսերի վարքագծի վրա որևէ սահմանափակում չի դրվում, այնուամենայնիվ պետական ծախսերը ՀՆԱ-ի և սպառման արձագանքներին հետևելով, ընկնում են մինչև եկամուտների համապատասխան մակարդակի վերականգնումը: Այսպիսով հարկերի կրճատումը 1 %-ով զգալիորեն խթանում է արտադրությունը, սպառումը և ներդրումը, այն դեպքում, երբ ֆիսկալ ազդակի ազդեցությունը հասնում է առավելագույնի մոտ երեք տարի հետո: Գների վրա ազդեցությունը նախապես բացասական է, բայց հետագայում արտադրության աճից հետո դրական է դառնում:

Երրորդ սցենար (կառավարության ծախսերի ու եկամուտների ավելացում միաժամանակ)

Հաշվեկշռված հարկաբյուջետային քաղաքականության սցենարը որոշվում է այն մեխանիզմով, որ պետական եկամուտների և ծախսերի ավելացումը տեղի ունենա միաժամանակ, այնպես որ եկամուտների և ծախսերի աճը հավասար է նախնական շոկից հետո չորս եռամսյակային փուլերից յուրաքանչյուր ժամանակահատվածի համար: Համեմատության պարզության համար մենք ընտրում ենք հիմնական ֆիսկալ ցնցումների հաջորդականությունն այնպես, որ պետական ծախսերը 1%-ով բարձրանում են, իսկ պետական եկամուտները՝ 1.28%-ով (Տ՛ես Հավելված 11): Կառավարության եկամուտներն աճում են ավելի շատ, քան պետական ծախսերը, քանի որ ՀՆԱ-ի մեջ ընտրված միջինի տեսանկյունից եկամտի տեսակարար կշիռը կազմում է 0,162, իսկ պետական ծախսերը համապատասխանաբար՝ 0,208: Հետևաբար մենք նախատեսում ենք պետական եկամուտների աճ 1.28%-ով (0,208/0,162): Տվյալ շոկի ընթացքում ազդակները ցույց են տալիս, որ տվյալ քաղաքականության ազդեցությունը ՀՆԱ-ի վրա

ունենում է փոքր ընդլայնողական ազդեցություն, քանի որ հարկերի աճի ճնշող ազդեցությունները գերակշռում են ծախսերի աճի ազդեցության վրա, և հետևաբար ՀՆԱ-ն, մասնավոր սպառումը և ներդրումներն անկում են արձանագրում:

Նկարագրված հարկաբյուջետային քաղաքականության սցենարները համեմատելու, և դրանց հետևանքներն արձանագրելու համար արդյունավետ մոտեցում է համարվում որոշել յուրաքանչյուր ֆիսկալ սցենարի հետևանքների ամփոփ նկարագիրը: Գրականության մեջ կիրառված մեթոդներից մեկը դա որոշակի ժամանակահատվածում ՀՆԱ-ի արձագանքի գործակցի հարաբերությունն է ֆիսկալ փոփոխականի սկզբնական ցուցանիշի հետ: Մենք այն անվանում ենք ազդեցության մուլտիպլիկատոր: Մուլտիպլիկատորի ներկա արժեքը հաշվարկելու համար մենք օգտագործում ենք հետևյալ բանաձևը[190]՝

$$\textit{Մուլտիպլիկատորի ներկա արժեք} = \frac{\sum_{j=0}^{k}(1+i)^{-j}y_j}{\sum_{j=0}^{k}(1+i)^{-j}f_j}\frac{1}{f/y}$$

որտեղ y_j՝ ՀՆԱ-ի պատասխանն է j-երորդ ժամանակահատվածում, f_j՝ ֆիսկալ փոփոխականի պատասխանն է j-երորդ ժամանակահատվածում, i-ն՝ միջին տոկոսադրույքն է, f/y՝ դա ֆիսկալ փոփոխականի միջին մասնաբաժինն է ՀՆԱ-ի նկատմամբ: Բոլոր դեպքերում մենք օգտագործում ենք միջին մուլտիպլիկատորներ[191]:

Այսպիսով, հետազոտությունում նկարագրված հարկաբյուջետային քաղաքականության սցենարների արդյունքում ամփոփված մուլտիպլիկատիվ ազդակները ներկայացված են Աղյուսակ 3.2.3.1-ում:

Համեմատելով ստացված արդյունքները՝ պարզ է դառնում, որ կառավարության ծախսերի ավելացումն առաջին և երրորդ սցենարների պարագայում արտամղման ազդեցություն է ունենում մասնավոր ներդրումների վրա՝ արդյունքում նվազեցնելով տվյալ քաղաքականությունների արդյունավետությունը: Իսկ հարկերի կրճատման սցենարի պարագայում հարկաբյուջետային քաղաքականությունն առաջին 4 եռամսյակներում էականորեն չի խթանում տնտեսությունը, սակայն, հետագայում

[190] Canova F, Pappa E. 2007. Price differentials in monetary unions: the role of fiscal shocks. Economic Journal 117: 713–737.

[191] Mountford, A., and H. Uhlig (2005). "What Are the Effects of Fiscal Policy Shocks?" SFB 649 Discussion Paper 2005-039. Humboldt University, Berlin, pp. 1-40

համեմատած մյուս սցենարների դրականորեն է ազդում ՀՆԱ-ի աճի տեմպի վրա:

Աղյուսակ 3.2.3.1 Հարկաբյուջետային քաղաքականության սցենարների ժամանակ ազդեցությունների մուլտիպլիկատորների արդյունքները

Սցենարը	Ֆիսկալ քաղ. փոփոխականը	1եռ.	4եռ.	8եռ.	12եռ.	20եռ.
Կառավարության ծախսերի ավելացում	ՀՆԱ	0.34	0.39	-0.13	-0.24	-0.03
	Հարկային եկամուտներ	0.00	0.00	-0.25	-0.38	-0.33
	Կառավարության ծախսեր	1.00	1.00	0.9	0.6	0.3
Հարկերի նվազեցում	ՀՆԱ	0.21	0.52	1.83	2.03	2.33
	Հարկային եկամուտներ	-1.00	-1.00	0.33	1.00	1.06
	Կառավարության ծախսեր	0.00	0.00	0.33	0.38	0.46
Կառավարության ծախսերի ու եկամուտների ավելացում միաժամանակ	ՀՆԱ	0.11	0.32	-0.21	-0.25	0.23
	Հարկային եկամուտներ	0.00	0.05	-0.02	-0.11	0.21
	Կառավարության ծախսեր	0.00	-0.09	0.22	0.11	0.15

Այսպիսով, ընտրված VAR մոդելի շրջանակներում ուսումնասիրեցինք հարկաբյուջետային քաղաքականության երեք սցենար. կառավարության ծախսերի ավելացում, հարկերի կրճատում և կառավարության ծախսերի ու հարկային եկամուտների ավելացում միաժամանակ: Արդյունքում, հարկաբյուջետային քաղաքականության լավագույն սցենարը դեֆիցիտը ֆինանսավորվող հարկային կրճատումներն են: Այս հետազոտությունում ընդգծվում է, որ դեֆիցիտը ֆինանսավորող անսպասելի հարկային կրճատումներն աշխատում են որպես տնտեսության համար կարճաժամկետ խթան, այլ ոչ թե երկարաժամետ տնտեսական աճ ապահովելու քաղաքականություն: Արդյունքում բարձր պարտքի բեռը կարող է ունենալ երկարաժամկետ հետևանքներ, որոնք շատ ավելի բացասական հետևանքներ կառաջացնեն, քան ՀՆԱ-ի կարճաժամկետ աճը կկարողանա մեղմել: Այս նորմատիվ դատողությունները պահանջում են միաժամանակ տեսական հիմնավորումներ, որոնց

համար ներկայացված էմպիրիկ դրական արդյունքները կարող են օգտակար ելակետ լինել:

Այս հետազոտությունում մենք ներկայացրեցինք նոր մոտեցում՝ բյուջետային քաղաքականության ցնցումների հետևանքները տարբերելու և վերլուծելու համար՝ Ուիլիգի (2005) մեթոդի հետ համապատասխանեցմամբ: Մասնավորապես, մենք օգտագործեցինք իմպուլսային սահմանափակումների մոտեցումը պետական եկամուտների ցնցումների, ինչպես նաև պետական ծախսերի ցնցումների բացահայտման համար՝ վերահսկելով ընդհանուր գործարար պարբերաշրջանային և դրամավարկային քաղաքականության շոկերը: Մենք ակնհայտորեն թույլ ենք տալիս հնարավորություններ արձագանքման ազդեցություններին, այսինքն՝ ներկայիս հարկաբյուջետային քաղաքականության շոկը ապագայում է փոփոխում ֆիսկալ քաղաքականության փոփոխականները, բայց ոչ ներկայում: Այն հաղթահարում է նաև քաղաքականության լագերի հիմնախնդիրը: Մասնավորապես, մեր նույնականացման ընթացակարգը հեշտությամբ հարմարեցված է այս խնդիրը հաղթահարելու համար՝ անմիջականորեն որոշելով այնպիսի շոկ, որի համար ֆիսկալ քաղաքականության հայտարարություն և համապատասխան փոփոխությունների իրականացման միջև առկա է ժամանակային լագ: Այս մեթոդն օգտագործում է միայն ավտոռեգրեսիվ վեկտորային մակրոտնտեսական ժամանակային շարքերը՝ նվազագույն ենթադրությունների հետ միասին որոշելու հարկային քաղաքականության ցնցումները: Մասնավորապես, այն չի սահմանափակում ուսումնասիրություններն առանցքային փոփոխականների (տոկոսադրույքներ, ՀՆԱ, մասնավոր սպառումն, իրական աշխատավարձի և մասնավոր ներդրումներ) ազդակների արձագանքները՝ հարկաբյուջետային քաղաքականության ցնցումների նկատմամբ: Ամփոփելով կարող ենք նշել, որ տվյալ մոտեցումը տարբերվում է ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության հետևանքների վերաբերյալ նախորդ ուսումնասիրություններից և կարող է պրակտիկ կիրառություն ունենալ ՀՀ-ում միջնաժամկետ հարկաբյուջետային քաղաքականության պլանավորման ժամանակ, և այն ապահովում է հետազոտությունների մի կարևոր լրացուցիչ մեթոդ հարկաբյուջետային գործիքների ազդակների բացահայտման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության մեջ ուսումնասիրվել են հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ տնտեսագիտական տարբեր դպրոցների տեսական մոտեցումները, իրականացվել է հարկաբյուջետային քաղաքականության մակրոտնտեսական ազդեցությունների և արդյունավետության գնահատում, էկոնոմետրիկ մոդելավորման միջոցով հարկաբյուջետային քաղաքականության տարբեր սցենարների վերլուծություն, վիճակագրական և բազմակողմանի ուսումնասիրություններ, որոնց հիման վրա կատարվում են հետևյալ եզրակացությունները.

1. Հարկաբյուջետային քաղաքականությունն ունեցել է շատ խայտաբղետ և դժվարություններով լի անցյալ: Քեյնսի հեղափոխական տեսական մոտեցումը և, մասնավորապես, 1936 թվականին լույս տեսած «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն» աշխատությունը կարևոր տեղ է ստեղծել հարկաբյուջետային քաղաքականության համար, այն տեղը, որը հետագայում քանդվել է գերիշխող տեսության կողմից: Եվ մինչ հիմնական տեսությունը փորձում էր հարկաբյուջետային քաղաքականության համար ապահովել որոշակի դեր, հետքեյնսյան տնտեսագետները երկար ժամանակ պայքարում էին քեյնսյան գաղափարների համար: Հետքեյնսյան տնտեսագետները երկար ժամանակ պաշտպանել են հարկաբյուջետային քաղաքականությունը, որպես մակրոտնտեսական կարգավորման և զբաղվածության ապահովման քաղաքականություն՝ ենթադրելով, որ կառավարվող գների և դրամական զանգվածի պայմաններում, որտեղ հիմնարար անորոշությունը, հարկադիր գործազրկությունը և տնտեսական ներուժի թերօգտագործումը նորմա են, ապա, ըստ էության, հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ գնաճային ոչինչ չկա: Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ տնտեսության հակաճգնաժամային կարգավորման համար կարևորագույն գործիք է համարվում հենց հարկաբյուջետային քաղաքականությունը:

2. Վերջին տարիներին տնտեսական քաղաքականություն մշակողների և տնտեսագետների շրջանակներում հարկաբյուջետային քաղաքականությանը կարևոր դեր է վերագրվել, որպես պետության կողմից տնտեսության կարգավորման

կարևորագույն լծակ: Դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով. մասնավորապես, այն փաստը, որ հարկաբյուջետային քաղաքականությունը տնտեսական նոր կոնսենսուսում վերականգնում իր ունեցած առաջնային դերը, վկայում է այն մասին, որ տնտեսագետների մոտ վերացել է ֆիսկալ գործիքների արդյունավետության նկատմամբ թերահավատության հարցը: Այնուամենայնիվ, որքանով որ տնտեսական նոր կոնսենսուսը ֆիսկալ քաղաքականության համար վերականգնում է որոշակի դեր, դա ո՛չ գերիշխող դեր է, և ո՛չ էլ պարզ է, թե ինչում է կայանում այդ դերը: Բացի այդ, ինչպես ցույց տվեց վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամը, դրամավարկային քաղաքականությունը միայնակ չկարողացավ լուծել տնտեսությունների առջև ծառացած ճգնաժամային հիմնախնդիրները: Ուստի, այս պարագայում հարկաբյուջետային քաղաքականությունն աստիճանաբար վերականգնում է տնտեսական կարգավորման դիրքերը:

3. Հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը տնտեսական վերլուծություններում շարունակվում է հարցականի տակ մնալ տեսական և էմպիրիկ մակարդակներում: Տեսական մակարդակում, ֆիսկալ մուլտիպլիկատորների ոչ քեյնսյան ազդեցությունները կարող են առաջանալ, եթե սպասումները ռացիոնալ են, սպառողները լիովին տեղյակ են կառավարության գործունեությունից, ժամանակավոր բյուջետային սահմանափակումներից և եթե առկա են առաջարկի որոշակի խոչընդոտներ: Մեր հետազոտությունների մեծ մասը եզրակացնում են ֆիսկալ կոնսոլիդացիայի անհրաժեշտությունը: Հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը գնահատվել է նաև որպես տնտեսական կայունացման շրջանակներում, մասնավորապես ավտոմատ կայունարարների աշխատանքի միջոցով: Վերլուծությունները ցույց են տալիս, որ ավտոմատ կայունարարները լիովին չեն փոխհատուցում մակրոտնտեսական ցնցումները, այնպես որ ընդլայնողական քաղաքականության գործողություններն անհրաժեշտորեն կավելացնեն քաղաքականության կայունացնող ներուժը: Այնուամենայնիվ, ընդլայնողական կայունացնող գործողությունները խոչընդոտվում են ժամանակային զգալի լագերով, որպեսզի նրանք հասանելի լինեն հակապարբերաշրջանային միջոցառումների իրականացման ժամանակաշրջանում:

4. Համապատասխան համակարգման մեխանիզմների և դրամավարկային ու հարկաբյուջետային քաղաքականությունների կոորդինացման մեխանիզմների ստեղծումը վերջնական նպատակների իրականացման նախապայմանն է երկու ոլորտների քաղաքականություն մշակողների համար, քանի որ այլ կերպ առանձին քաղաքականություն և փոխադարձ հակասող նպատակներ իրականացնող մարմինները կարող են առաջացնել տարամետ մակրոտնտեսական միտումներ: Ուստի, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների միջև կոորդինացման բացակայությունը կհանգեցնի ընդհանուր տնտեսական արտադրողականության վատթարացմանը:

5. Ատենախոսությունում կատարված ուսումնասիրություններից և վերջին տարիներին ՀՀ մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների և հարկաբյուջետային քաղաքականության բնույթի վերլուծություններից պարզ է դառնում, որ տնտեսական քաղաքականություն մշակողները լուրջ քայլեր պետք է ձեռնարկեն տնտեսական կայունության և երկարաժամկետ տնտեսական աճ ապահովելու համար: Մասնավորապես, համապատասխան հարկաբյուջետային քաղաքականությունը, որը տնտեսական անկումների համար պետք է լինի հիմնական պատասխանը, կախված է մի շարք գործոններից և կարող է որոշել, թե տվյալ պայմաններում համապատասխանում է հարկաբյուջետային ընդլայնումը, թե կոնսոլիդացիան: Այս տեսանկյունից հիմնական նկատառումները, որոնք պետք է հաշվի առնեն քաղաքականություն մշակողները, հետևյալներն են.

- Արդյո՞ք ֆիսկալ գործիքների օգտագործումը տվյալ պահին նպատակային է և արդարացված, թե ոչ, և ի՞նչ հետևանքներ այն կունենա պետական պարտքի կառավարման կայունության վրա: Հարկաբյուջետային քաղաքականություն իրականացնողները պետք է ուսումնասիրեն ֆիսկալ գործիքների ռիսկերը մինչև դրանց իրականացումը և գնահատեն տնտեսական ակտիվության վրա այդ գործիքների արդյունքները՝ միևնույն ժամանակ չմոռանալով, թե ինչ ազդեցություն կարող է այն ունենալ պետական պարտքի կայունության վրա:
- Բացահայլտել, թե ի՞նչ համադրություն պետք է ունենա հարկաբյուջետային ընդլայնումը կամ կոնսոլիդացիան: Ծախսերի աճը հակված է ունենալ ավելի մեծ ֆիսկալ

մուլտիպլիկատիվ ազդեցություն՝ համեմատած հարկային կրճատումների հետ: Բացի այդ, ծախսային և հարկային լծակներով պայմանավորված միջոցառումները, որոնք առաջարկի վրա ցանկալի ազդեցություն ունեն, կարող են կարճաժամկետ դրական ազդեցություն ունենալ՝ պայմանավորված սպասումներով: Կարևոր է նաև գնահատել արտադրողական և անարդյունավետ ծախսերի միջև տարբերությունը:

- Եվ վերջում, պարզել, թե ի՞նչն է ազդում տնային տնտեսությունների և ֆիրմաների վարքագծի վրա: Հավանաբար, սա ամենակարևոր գործողություններից մեկն է, միևնույն ժամանակ այն ուղղությունները, թե խնայողությունները և ներդրումներն ինչպես են արձագանքում հարկաբյուջետային ընդյալնմանը կամ կոնսոլիդացիային, կարող են նշանակալիոնեն պայմանավորված լինել իրացվելիության խոչընդոտներով, որը մեծ նշանակություն ունի տնային տնտեսությունների և ֆիրմաների համար որոշումների կայացման ժամանակ:

6. ՀՀ-ում հարկային համակարգի բարեփոխումների ընթացքում քաղաքականություն մշակողները պետք է հստակեցնեն հարկային քաղաքականության հիմքում դրվող հիմնական սկզբունքները, որոնք պետք է լինեն ամբողջ տնտեսական քաղաքականության գաղափարախոսության հիմքում: Մասնավորապես՝ հարկային քաղաքականության հիմքում դրվող հիմնական սկզբունքները հետևյալներն են.

- Արդյոք երկարաժամկետ, թե կարճաժամկետ տնտեսական աճն է նպատակադրված հարկային քաղաքականության մեջ: Եթե դա երկարաժամկետ տնտեսական աճն է, ապա տնտեսագետների ու հարկաբյուջետային քաղաքականության մշակողների համար կարևոր է ուշադրություն դարձնել, թե որ ոլորտներից են նախատեսում ապահովել ցանկալի տնտեսական աճը:
- Տնտեսական աճ ապահովելու համար ի՞նչ մոդել ենք նախատեսում՝ պահանջարկով, թե առաջարկով պայմանավորված: Եթե նախընտրում ենք առաջինը, ապա պետք է հաշվի առնել, որ մեր երկրի փորձն արդեն իսկ ցույց է տվել, որ դա կայուն գործիք չէ տնտեսական աճի համար սահմանված նպատակներին հասնելու համար: Սակայն, ներկա տնտեսական զարգացումների պայմաններում, ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ցանկացած զարգացող երկրում տնտեսական աճի ապահովման միայն զուտ պահանջարկով, կամ զուտ առաջարկով պայմանավորված որևէ մոդել ժամանակակից

տնտեսական կյանքում չի կարող կիրառվել, ուստի առավել արդյունավետ և կիրառելի մոդելը հենց դրանց զուգակցված ձևով կիրառումն է:

- Արդյո՞ք մենք թիրախավորում ենք կարճաժամկետ, թե երկարաժամկետ տնտեսական կայունությանը: Կարևոր է ընդգծել, որ այս պարագայում հարկային դրույքաչափերի կամ հարկերի կառուցվածքի փոփոխությունները կազդեն հարկատուների տնտեսական գործունեության և երկարաժամկետ կայունության վրա:
- Եթե քաղաքականության մշակողներն անցնում են դեպի սպառման հարկմանը, ապա անպայմանորեն անհրաժեշտ է քաղաքականության պլանավորման ժամանակ հաշվի առնել հարկերի սոցիալական հետևանքները:

7. Ատենախոսությունում հարկաբյուջետային քաղաքականության վերլուծության VAR մոդելի շրջանակներում ուսումնասիրվել են հարկաբյուջետային քաղաքականության երեք սցենար. կառավարության ծախսերի ավելացում, հարկերի կրճատում և կառավարության ծախսերի ու հարկային եկամուտների ավելացում միաժամանակ: Արդյունքում, հարկաբյուջետային քաղաքականության լավագույն սցենարը դեֆիցիտը ֆինանսավորվող հարկային կրճատումներն են: Այս հետազոտությունում ընդգծվում է, որ դեֆիցիտը ֆինանսավորող անսպասելի հարկային կրճատումներն աշխատում են որպես տնտեսության համար կարճաժամկետ խթան, այլ ոչ թե երկարաժամետ տնտեսական աճ ապահովելու քաղաքականություն: Արդյունքում բարձր պարտքի բեռը կարող է ունենալ երկարաժամկետ բացասական հետևանքներ, որոնք շատ ավելի բացասական հետևանքներ կառաջացնեն՝ քան ՀՆԱ-ի կարճաժամկետ աճը կկարողանա մեղմել: Այս նորմատիվ դատողությունները պահանջում են միաժամանակ տեսական հիմնավորումներ, որոնց համար ներկայացված էմպիրիկ դրական արդյունքները կարող են օգտակար ելակետ լինել:

Հիմք ընդունելով ատենախոսության արդյունքները և համապատասխան եզրակացությունները՝ կատարվել են հետևյալ առաջարկությունները.

➢ ***Հարկային քաղաքականության բնագավառում անհրաժեշտ բարեփոխումները.***

- Հարկային բազայի ընդլայնումը, հարկերի ազատման և արտոնյալ ռեժիմների ռացիոնալացման միջոցով, կբարձրացնի եկամուտները և կնպաստի հորիզոնական

հավասարությանը:

- Եկամուտների կառավարման բարելավումը՝ ներառյալ ռիսկերի կառավարման մեթոդների ներդրման, օրենքների պարզեցման և հարկ վճարողների և գործառնությունների սեգմենտավորման միջոցով, որոնք կարող են ամրապնդել հարկ վճարողների պատրաստակամությունը և բարձրացնել եկամուտների հավաքագրումը:
- Հարկերի կառուցվածքի փոփոխումը՝ պայմանավորված տնտեսական արդյունավետության բարձրացման հետ. մասնավորապես ուղղակի և անուղղակի հարկերի կառուցվածքի այնպիսի փոփոխությունները, որոնք առավել քիչ ազդեցություն կունենան տնտեսվարողների իրական եկամուտների նվազման և գնաճի վրա: Գույքի կամ հարստության հարկերը նույնպես կարող են նպաստել հարկային համակարգի պրոգրեսիվության բարձրացմանը:
- Զարգացող երկրները, որոնք բարդություններ են հանդիպում ֆիսկալ տիրույթի ընդլայնման ժամանակ, պետք է կենտրոնանան այնպիսի բարեփոխումների վրա, որոնք բյուջետային կայունության առումով չեզոք ազդեցություն կունենան ֆինանսական համակարգի վրա:
- Առավել արդյունավետ երկարաժամկետ հարկային միջոցառումներ ձեռնարկել, պարտքի միջոցով ֆինանսավորման փոխարեն:
- Ֆինանսական կայունության ապահովման համար անհրաժեշտ է նախապես հայտարարված ոլորտային ռազմավարությունների մշակում և ներկայացում:
- ՀՀ-ում ՕՈՒՆ-երի ներգրավման ծավալների մեծացման համար անհրաժեշտ քայլ պետք է հանդիսանա մեր երկրի տնտեսության ռազմավարական հիմնական ուղղությունների համար նպաստավոր հարկային դրույքաչափերի սահմանումը, հարկային հետաձգումների՝ հարկային «արձակուրդների» մեխանիզմների ներդրումը, որոնք ևս առաջնային խթան կհանդիսանան տվյալ ճյուղերում ֆինանսական ռեսուրսների ծավալների մեծացմանը:

➢ ***Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման ուղղությամբ անհրաժեշտ փոփոխությունները.***

- սահմանել հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների

ներդաշնակ և փոխադարձ համաձայնեցված թիրախներ՝ ոչ գնաճային, կայուն տնտեսական աճ ապահովելու նպատակով,

- հարկաբյուջետային քաղաքականությունը չպետք է հանդիսանա գնաճի հիմնական աղբյուրը, միևնույն ժամանակ դրամավարկային քաղաքականության ազդեցությունը պետական բյուջեի վրա պետք է փոքր լինի,
- նպաստել քաղաքականության որոշումների արդյունավետ իրականացմանը հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների սահմանված նպատակներին հասնելու համար՝ տեղեկատվության փոխադարձ փոխանակման և նպատակաուղղված քննարկումների միջոցով,
- ստիպել Կենտրոնական բանկին և կառավարությանը կայուն քաղաքականություն վարել:

➢ Հարկաբյուջետային համակարգի բարեփոխումները պետք է սկսվեն մակրոտնտեսական մակարդակում հուսալի քաղաքականության ձևավորմամբ՝ ներառյալ պետական կարգավորման և կառավարման շրջանակները, հիմնական ինստիտուցիոնալ մեխանիզմները և մակրոտնտեսական քաղաքականությունը:

➢ Պետական ֆինանսների համակարգի բարեփոխումները պետք է իրականացվեն որպես ընդհանուր ռազմավարության մաս, որը պետք է լինի համապատասխան երկրի կառավարմանը և մարտահրավերներին: Դոնորները կարող են նպաստել դրամական միջոցների, գաղափարների և տեխնիկական հմտությունների զարգացմանը և բարեփոխումներին աջակցելով ռազմավարությունները բարելավմամբ, սակայն բարեփոխումների կոնկրետ ռազմավարությունը պետք է համապատասխանեցված լինի տվյալ երկրի ընդհանուր քաղաքականությանը և տնտեսական մարտահրավերներին: Կառավարության ինտերակտիվ մասնակցությունը բիզնեսի, քաղաքացիական հասարակության, և տարբեր քաղաքական գործընթացներին կստանա կոնկրետ ռազմավարության վստահությունը:

➢ Պետական ֆինանսների համակարգի բարեփոխումները պետք է ամրապնդվեն բարձր մակարդակի քաղաքական պարտավորությամբ և պետք է երկարաժամկետ ու շարունակական աջակցություն ունենան: Ֆինանսական բարեփոխումն առաջին հերթին

քաղաքական գործընթաց է՝ ենթադրելով քաղաքական ծախսեր և օգուտներ: Որպես այդպիսին, այն պահանջում է խորաթափանց քաղաքական կառավարում և կամք:

- Ատենախոսությունում ներկայացված VAR մոդելի միջոցով իրականացված հետազոտության և ներկայացված ֆիսկալ սցենարների շրջանակներում կանխատեսվել են համապատասխան ֆիսկալ գործիքների կիրառման արդյունավետությունը միջնաժամկետ հեռանկարում, որի արդյունքում էլ ներկայացվել է հարկաբյուջետային քաղաքականության ամենաարդյունավետ ուղղությունները ՀՀ-ում առաջիկա տարիներին իրականացման համար:
- Միևնույն ժամանակ վերոնշյալ VAR մոդելի կիրառման միջոցով ներկայացվել է ՀՀ տնտեսության վրա հարկաբյուջետային քաղաքականության տարբեր սցենարների գնահատման մեխանիզմ, որի արդյունքում դեֆիցիտը ֆինանսավորվող հարկային կրճատումների սցենարը եղել է կարճաժամկետ հատվածում, միևնույն ժամանակ միջնաժամկետ հեռանկարում տնտեսական լավագույն ցուցանիշներ երաշխավորող ուղղություն: Արդյունքում, հետազոտությունում ընդգծվում է, որ դեֆիցիտը ֆինանսավորող անսպասելի հարկային կրճատումների քաղաքականությունը ֆիսկալ համակարգի վրա ունենում է ամենացանկալի ազդեցությունը՝ միաժամանակ տնտեսական աճի համար նպաստավոր հիմքեր ստեղծելով միջնաժամկետ հեռանկարում:
- Ամենամյա բյուջետային պլանավորման ընթացքում ծախսերի կանոնի սահմանումը կօգնի արդյունավետորեն արձագանքել հարկաբյուջետային քաղաքականության համացիկլայնությանը և առավել խիստ ուշադրության կենտրոնում պահել այն, ինչը կարճաժամկետ հատվածում կառավարությունը վերահսկում է: Նման ծախսային կանոնը համապատասխան ծախսերի աճի հնարավորություն կտա՝ նպաստելով ՀՆԱ-ի աճին, և միևնույն ժամանակ տնտեսական կայուն ժամանակներում որոշակի մակարդակում կզսպի ծախսերի աճը՝ խրախուսելով ավելի ապագայամետ և ռացիոնալ կարգապահություն հարկաբյուջետային քաղաքականության իրագործման ընթացքում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աղաջանյան Հ.,** «Տնտեսագիտության տեսություն», ՄԱՍ I, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2009թ., 468 էջ

2. **Աղաջանյան Հ.,** «Տնտեսագիտության տեսություն», ՄԱՍ II, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2015թ., 486 էջ

3. **Բայադյան Ա.Հ., Մարկոսյան Ա. Հ.,** «Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան 2015, էջ 158-159 [152]

4. **Բոստանջյան Վ. Բ**., «Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2017թ., էջ 330, 350-351 [130] [142]

5. **Բոստանջյան Վ. Բ., Մինասյան Գ.,** «ՀՀ Պետական ծախսերի և տնտեսական աճի փոխազդեցության գնահատումը SVAR մեթոդաբանությամբ», Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2016, էջ 53. [184]

6. **Էլբակյան Տ., Մաճկալյան Ա.**, ««Հոլանդական հիվանդության» էությունը, առկայությունը ՀՀ տնտեսությունում և հարկաբյուջետային քաղաքականության պատասխանը», «Հանրային կառավարում» գիտական հանդես, 2018, N1, էջ 80-86. [158]

7. **Ղուշչյան Հ., Ավագյան Գ.,** «Մակրոտնտեսական կարգավորում», Երևան, Հեղինակային հրատարակություն, 2008թ., 300 էջ

8. **Մաճկալյան Ա.,** «Ծրագրային բյուջետավորման ներդրման համար անհրաժեշտ բարեփոխումները ՀՀ-ում», Հանրային կառավարում գիտական հանդես, Երևան 2015, N1, էջ 83-90. [161]

9. **Սաքս. Ջ., Լարրեյն Բ.,** «Մակրոտնտեսագիտությունը գլոբալ տնտեսությունում», Տնտեսագետ, Երևան, 2002թ., 584 էջ

10. **Мэнкью Н., Тейлор М.,** “Макроэкономика”, 2-е издание, Санкт-Петербург, Питер, 2013, 560 с.

11. **Стиглиц Дж.,”** Глобализация: Тревожные тенденции”, Москва, Мысль, 2003, 300 с.

12. **Afonso A**. (2001), “Non-Keynesian Effects of Fiscal Policy in the EU-15”, ISEG/UTL

Working Paper 07/2001. Pp. 10-16, [34]

13. **Afonso, A., and Sousa, R. M**. (2012), "The macroeconomic effects of fiscal policy", Applied Economics, volume 44, pp. 4439-4441. [3]

14. **Agenor, Pierre-Richard, and Peter J. Montiel**, 1996, "Development Macroeconomics", (Princeton, New Jersey: Princeton University Press). p.126, [26]

15. **Aghajanyan H, Matshkalyan A.,**"The Macroeconomic Effects of Fiscal Policy (theoretical background)", The journal "Bulletin of Armenian National Agrarian University", 2017, V.4, p 153-156. [79]

16. **Alan J. Auerbach**," The fail and the rise of Keynesian fiscal policy", University of California, Berkeley, May 2012, pp. 3-7. [2]

17. **Andrzej Rzońca and Piotr Ciżkowicz**, "Non-keynesian effects of fiscal contraction in new member states", 2005, European Central Bank. pp. 7-10. [55]

18. **Arcangelis, G. and Lamartina, S**., 2003. "Identifying Fiscal Shocks and Policy Regimes in OECD Countries", ECB Working Paper, No. 281. pp. 1-52. [174]

19. **Ardagna, S.** (2007), "Fiscal Policy in Unionized Labor Markets", Journal of Economic Dynamics & Control, vol. 31, pp. 1498-1534, [35]

20. **Arestis P**. (2009), "New consensus macroeconomics: A critical appraisal", The Levy Economics Institute of Bard College working paper, 564, pp.2-3. [5]

21. **Arestis P**. (2012). "Fiscal Policy: A Strong Macroeconomic Role. Review of Keynesian Economics", 93-108. [16]

22. **Arestis, P. and M. Sawyer.** 2003. "The Case for Fiscal Policy." Working Paper No. 382. The Levy Economics Institute. pp. 2-20. [92] [93]

23. **Asa Johansson, Christopher Heady, Jens Arnold, Bert Brys and Laura Vartia**, 2008, "Tax and economic growth, 17-41 p. [164]

24. **Asian Development Bank,** "Armenia: Country Partnership Strategy (2014-2018)", 2014, [155]

25. **Auerbach, Alan J., and Laurence J. Kotlikoff**, 1987, Dynamic Fiscal Policy (New York: Cambridge University Press). Pp. 88-91, 180-182. [24] [27]

26. **Ball Laurence, N. Gregory Mankiw, and David Romer**, 1988, "The New Keynesian

Economics and the Output-Inflation Tradeoff", Brookings Papers on Economic Activity: 1, Brookings Institution, pp. 4-16. [25]

27. **Barro R.J.**, 1974, "Are Government Bonds Net Wealth?" Journal of Political Economy, Vol. 82, pp. 1095-1117. [38] [57]

28. **Barro, R. and Gordon, D.** (1983b), "Rules, discretion and reputation in a model of monetary policy", Journal of Monetary Economics 12, 101-121. [128]

29. **Barro, R.,** 1990, Government spending in a simple model of endogenous growth, Journal of Political Economy 98, 103-125. [109]

30. **Barro, R.J** (1989). "A Cross-Country Study of Growth, Saving, and Government," NBER Working Papers 2855, 1-57. [172]

31. **Barro, R.J. and Xavier Sala-i-Martin** (2004). "Economic Growth", MIT Press, Cambridge, Massachusetts, pp. 61-68. [168] [169]

32. **Barsky, Robert B., N. Gregory Mankiw, and Stephen P. Zeldes**, 1986, "Ricardian Consumers with Keynesian Propensities," American Economic Review, Vol. 76 (September), pp. 676-691. [40]

33. **Bazhal, I.** 2016 "The Theory of Economic Development of J.A. Schumpeter: Key Features". MPRA Paper No. 69883, pp.3-7. [111]

34. **Benigno, P., and M. Woodford.** (2003) "Optimal Monetary and Fiscal Policy: a Linear-Quadratic Approach". pp.271-273. [118]

35. **Bergman, M. and M. Hutchison** (2015). "Economic Stabilization in the Post-Crisis World: Are Fiscal Rules the Answer?" Journal of International Money and Finance, 52, pp.82-101. [140]

36. **Bernanke, B., V. R. Reinhart, and B. P. Sack.** 2004. "Monetary Policy Alternatives at the Zero Bound: An Empirical Assessment." Brookings Papers on Economic Activity, 2:2004, pp. 93-95. [85]

37. **Bertola Giuseppe, and Allan Drazen**, 1993, 'Trigger Points and Budget Cuts: Explaining the Effects of Fiscal Austerity," American Economic Review, VoL 83 (March), pp. 11-26. [42]

38. **Blanchard O, Perotti R.** 2002. An empirical characterization of the dynamic effects

of changes in government spending and taxes on output. Quarterly Journal of Economics. 117(4): 1329–1368 [176] [185] [186]

39. **Blinder, A.S., and Solow, R.**, "Does Fiscal Policy Matter?" Journal of Public Economics, 2 (4) (November 1973), pp. 319 – 337. [12] [68]

40. **Brunila A., Buti M. and Veld J**. (2002), "Fiscal Policy in Europe: How effective are Automatic Stabilisers?" Economic Paper no. 177, European Commission. pp. 1-29. [72]

41. **Brunner, K., and Meltzer, A.H**. (1997), "Money and the Economy: Issues in Monetary Analysis". Cambridge: Cambridge University Press, p. 69. [121]

42. **Buffie Edward F.,** 1992, "The Short- and Long-Run Effects of Fiscal Policy", The World Bank Economic Review, Volume 6, pp. 331–351. [7]

43. **Burnside C, Eichenbaum M, Fisher JDM**. 2003. "Fiscal shocks and their consequences". Working Paper 9772, National Bureau of Economic Research. pp. 1-36. [189]

44. **Buti M., Martinez-Mongay C., Sekkat K. and Van den Noord P.** (2003), "Automatic stabilisers in EMU: A Conflict between Efficiency and Stabilisation?"; CESiofo Economic Studies, Vol 49, p. 123-140. [73] [74] [75] [76] [77]

45. **Caballe J., Panades J**., "Inflation, tax evasion, and the distribution of consumption", Journal of Macroeconomics 26 (2004) 567–595. [116]

46. **Canova F, Pappa E.** 2007. Price differentials in monetary unions: the role of fiscal shocks. Economic Journal 117: 713–737. [190]

47. **Capet S**., 2004 "The Efficiency of Fiscal Policies: A Survey of the Literature", CEPII, Working Paper No–11. pp.6-7. [50]

